





**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

АРАРАТ АГАСЯН – 60

**Предисловие
академика НАН РА Юрия Суваряна,
доктора искусствоведения, профессора Анны Асатрян**

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2016**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS**

ARARAT AGHASYAN - 60

**Introduction by
Full Member (Academician) of NAS RA Yuri M. Suvaryan,
Doctor of Sciences (Arts), professor Anna Asatryan**

**YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2016**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ – 60

Առաջաբանը՝

**ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանի,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա Ասատրյանի**

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2016**

ՀՏԴ 7.072
ԳՄԴ 85
Ա 840

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
փիլիսոփայական գիտությունների դոկտոր
Գրիգոր Ասատրյան

Մատենագիտությունը կազմել են
արվեստագիտության թեկնածու **Մերի Կիրակոսյանը**
արվեստագիտության թեկնածու **Մանե Մկրտչյանը**

Ա 840 Արարատ Աղասյան – 60.– Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,
2016, 176 էջ:

Ժողովածուի առաջին բաժինն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ արվեստի
ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաս-
տակավոր գործիչ Արարատ Աղասյանի կենսամատենագիտությունը՝
1979-2016 թվականների տպագիր աշխատանքների ցանկը և նրա
գիտական գործունեությունը բնութագրող համառոտ ակնարկը: Երկ-
րորդ բաժնում տեղ են գտել Ա.Աղասյանի սաների հոդվածները, որ-
տեղ լուսաբանվում է նրա արվեստաբանական վաստակը՝ տարբեր
կողմերից:

ՀՏԴ 7.072
ԳՄԴ 85

ISBN 978-5-8080-1236-3

© Աղասյան Ա., 2016

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016

ԲԱԺԻՆ I

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ.
ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՐՎԵՍՏԱՐԱՆՆ ՈՒ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՄՈՒՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ**

Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն և գիտական խորհրդի նախագահ, սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի ծննդյան 60-ամյա հոբելյանը:

Ա.Աղասյանը ծնվել է 1956 թ. օգոստոսի 11-ին ՀԽՍՀ Սիսիան քաղաքում: Հայրը՝ ԽՍՀՄ Պետական բանկի հայկական գրասենյակի կառավարիչ, ՀԽՍՀ պետական ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, ՀԽՍՀ մինիստր, ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու Վլադիմիր Աղասյանը, ում անունով էլ այսօր կոչվում է «Արդշինբանկի» Երևանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող մասնաճյուղերից մեկը, տնտեսագետների (և ոչ միայն տնտեսագետների) շրջանում մեծ հարգանք վայելող անձնավորություն էր, իսկ մայրը մանկավարժ, անգլերեն լեզվի ուսուցչուհի Մարգարիտա Ասոյանն էր: 1960-ին Աղասյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան:

1973-ին ավարտելով Երևանի № 122 միջնակարգ դպրոցը՝ Ա.Աղասյանն ընդունվում է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանական բաժինը, որն ավարտում է 1978-ին՝ ստանալով «արվեստի պատմաբանի» որակավորում:

1978 թ. օգոստոսի 1-ից երիտասարդ արվեստաբանն աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: Այդ օրվանից հարազատ ինստիտուտի հետ է անխզելիորեն կապվում Ա.Աղասյանի գիտաստեղծագործական ու գիտակազմակերպական հետագա ողջ գործունեությունը: Շուտով նա ընտրվում է ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների գիտխորհրդի նախագահ, իսկ 1981-ին արդեն գիտական խորհրդի անդամ էր:

1991թ. հունիսի 1-ին Ա.Աղասյանը նշանակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար և գիտական խորհրդի քարտուղար:

2003-ի գարնանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կողմից Ա.Աղասյանն առաջադրվում և հունիսի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից միաձայն հաստատվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, իսկ 2008-ին և 2013-ին վերընտրվում նույն պաշտոնում:

Ի դեպ, տնօրենի պաշտոնում Ա.Աղասյանի ընտրվելը նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երջանկահիշատակ տնօրեն, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի կամքն էր. իր այդ ցանկությունը նա հայտնել էր դեռևս տարիներ առաջ՝ իր պաշտոնավարման ընթացքում՝ հանձին Ա.Աղասյանի տեսնելով իր արժանի իրավահաջորդին:

Ընտրվելով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն՝ Ա.Աղասյանը «խախտեց» ինստիտուտի «թատերագիտական» դիմագիծը (չէ՞ որ ինստիտուտի նախկին երկու ղեկավարները՝ առաջին և երկրորդ դիրեկտորներ Ռուբեն Զարյանն ու Լևոն Հախվերդյանը թատերագետներ էին) և դարձավ ինստիտուտի առաջին կերպարվեստագետ տնօրենը՝ միաժամանակ զարգացնելով իր նախորդների ավանդույթները՝ ինստիտուտում պահպանելով աշխատանքային համերաշխ ու ստեղծարար մթնոլորտը:

Լ.Հախվերդյանի և ինստիտուտի կոլեկտիվի ընտրությունը միանգամայն ճիշտ էր. այսօր Ա.Աղասյանը ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների լավագույն ղեկավարներից է, և օրինաչափ է, որ նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ արվեստագիտության գծով (2014), պարգևատրվել ՀՀ ԳԱԱ պատվոգրով (2005) և ՀՀ ԳԱԱ վաստակագրով (2016):

2003-ից ի վեր Ա.Աղասյանն ինստիտուտի գիտական խորհրդի նախագահն է: 2005-ին նա որակավորվել է որպես առաջատար գիտաշխատող, իսկ 2010-ին՝ գլխավոր գիտաշխատող:

1995 թ. օգոստոսի 8-ին, երբ ինստիտուտում ստեղծվեց հանրապետությունում միակ՝ արվեստագիտության բնագավառի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խոր-

հուրդը, Ա.Աղայանը կանգնած էր նրա ակունքներում. նա խորհրդի առաջին գիտքարտուղարն էր, այնուհետև՝ միակ գիտությունների թեկնածու անդամը, 2009-ից՝ նախագահի տեղակալը:

Իսկ մինչ այդ՝ 1989թ. հոկտեմբերի 25-ին, իր հարազատ Alma mater-ում՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանում, Ա.Աղայանը պաշտպանում է դիսերտացիա՝ «Формирование живописного метода Мартироса Сарьяна» թեմայով, և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նրա գիտական ղեկավարն էր ռուս ականավոր արվեստաբան, ակադեմիկոս Դմիտրի Սարաբյանովը:

1992-ին հրատարակվում է Ա.Աղայանի անդրանիկ՝ “Мартирос Сарьян. Раннее творчество” մենագրությունը¹, որը հետաքրքրություն առաջացրեց ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Երիտասարդ հետազոտողի վստահ մուտքը սարյանագիտություն ու հետագա բեղմնավոր գործունեությունը պատահական չէին. դեռևս 1980-ին հրատարակվել էր Մարտիրոս Սարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, որի համահեղինակներից մեկը հենց 24-ամյա Ա.Աղասյանն էր²:

2007 թ. մարտի 14-ին Երևանում Ա.Աղայանը պաշտպանում է ատենախոսություն՝ «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» թեմայով, և ստանում արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականի նոյեմբերին Ա.Աղայանին շնորհվում է «Արվեստագիտություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում:

2009-ին Ա.Աղայանն ընտրվում է Սանկտ Պետերբուրգի՝ Պետրոս Մեծի անունը կրող Գիտությունների և արվեստների ակադեմիայի թղթակից անդամ: Նա Հումանիզմի պրոբլեմների

¹ Տե՛ս **Агасян Арапат**. Мартирос Сарьян. Раннее творчество. Ереван, Издательство АН Армении, 1992, 210 с.:

² Տե՛ս **Ղազարյան Մանյա, Աղայան Արարատ**, Մարտիրոս Սարյան: Կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, Հայաստանի պետական պատկերասրահ, 1980, 317 էջ:

ակադեմիայի նախագահության անդամ է (2007-ից), Հայոց փիլիսոփայական ակադեմիայի թղթակից անդամ (2011):

2014-ի դեկտեմբերին Ա.Աղասյանն ընտրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ արվեստագիտության գծով:

Ա.Աղասյանի գիտական կենսագրությունը հերքում է այն տարածված տեսակետը, թե այնքան էլ դյուրին չէ համատեղել գիտակազմակերպական արդյունավետ աշխատանքն ու գիտական բեղմնավոր գործունեությունը:

Ա.Աղասյանի գիտական գործունեությունը բաղկացած է երկու շատ կարևոր բաղադրիչներից՝ գիտական հետազոտություններ և կադրերի պատրաստում: Երկու ասպարեզներում էլ արդյունքներն առավել քան խոսուն են:

Արվեստաբանական կրթության մոսկովյան փայլուն դրպրոց անցած Ա.Աղասյանը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի պատմության լավագույն գիտականներից է, ով էական ու մնայուն ավանդ ունի հայ արվեստագիտության զարգացման գործում: Նրա գրչին են պատկանում նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ու գեղարվեստական մտքի պատմության ուսումնասիրությանը նվիրված 11 գրքեր ու մենագրություններ, շուրջ 150 գիտական և գիտահանրամատչելի հոդվածներ, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, ԱՄՆ-ի, ԳՖՀ-ի, Հունգարիայի, Լիբանանի, Լեհաստանի գիտական ժողովածուներում, կերպարվեստին նվիրված հանրագիտարաններում և պարբերականներում: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային, միութենական և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում: Գիտնականի աշխատություններն առանձնանում են մասնագիտական բարձր մակարդակով և փաստական նյութի լայն ընդգրկումով:

Ա.Աղասյանն առաջինն է, ով ուսումնասիրել և հայոց լեզվով շարադրել է նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի պատմությունը:

Ինչպես հայտնի է. «Հայագիտության կարևոր բնագավառներից են սփյուռքագիտությունը, հարևան ժողովուրդների հետ հայերի պատմամշակութային հարաբերությունների ուսումնա-

սիրությունը»³: Մշակութային կապերի ուսումնասիրությունը եղել ու շարունակում է մնալ Ա.Աղասյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Իր գիտական ուսումնասիրություններում նա մեծ կարևորություն է տալիս հարևան երկրների, ինչպես նաև Ռուսաստանի ու Եվրոպայի հետ XIX-XX դարերում հայ կերպարվեստի ունեցած առնչություններին և զուգահեռներին: Այդ հարցերի բազմակողմանի լուսաբանման շնորհիվ նա բացահայտել է ոչ միայն դրանց պատմական ձևավորման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այլև յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունները:

Դրա վկայությունն են հայ-ռուսական, հայ-ֆրանսիական և հայ-իտալական գեղարվեստական կապերին նվիրված՝ Ա.Աղասյանի գիտական հրապարակումներն ու գեկուցումները:

Գաղտնիք չէ, որ հայրենական արվեստագիտության առջև ծառացած կարևոր ու հրատապ խնդիրներից է հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրությունը, ինչը գիտական կարևոր նշանակությունից զատ՝ ունի նաև քաղաքական ոչ պակաս կարևոր նշանակություն: Հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրության բնագավառում առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ-ռուսական մշակութային կապերի ուսումնասիրությունը: Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունները շարունակում են մնալ Ա.Աղասյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթ – 2013»-ի արդյունքում ֆինանսավորման երաշխավորվեց Ա.Աղասյանի առաջադրած՝ «Հայ-ռուսական մշակութային առնչությունների պատմությունից. կերպարվեստ և երաժշտություն» թեման, որի ավարտին ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Արարատ

³ Տե՛ս Հայեցակարգ հայագիտության զարգացման, հոդված 1. Ընդհանուր դրույթներ, կետ 1:

Աղասյանի և Աննա Ասատրյանի «Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար – XX դարի սկիզբ)» աշխատությունը⁴: Գրքի առաջին՝ «Սանկտ Պետերբուրգում կրթված հայ արվեստագետները» վերտառությամբ պատմական ակնարկում Ա.Աղասյանը հանգամանորեն ներկայացրել է Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում՝ Գեղարվեստի կայսերական ակադեմիայում և գեղարվեստական այլ կրթարաններում, մասնագիտացած, այնտեղ ապրած և գործած հայ արվեստագետների ստեղծագործական դիմանկարները՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք մոռացված կամ կիսամոռացված անուններ, անհայտ ստեղծագործություններ, կենսագրական նորահայտ փաստեր ու վկայություններ:

2015-ի տարեմուտին «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթ – 2015»-ի արդյունքում ֆինանսավորման երաշխավորվեց Ա.Աղասյանի ղեկավարած՝ «Հայ արվեստագետների և երաժիշտների դերը Մոսկվայի մշակութային կյանքում. XIX դար – XX դարի առաջին երկու տասնամյակներ» վերնագրով գիտական նախագիծը:

Ի դեպ, հենց Ա.Աղասյանը հեղինակեց 2010-ին Մոսկվայում բացված “Два цвета радуги – двух судеб отражение...” ցուցահանդեսի կատալոգի առաջաբանը⁵:

⁴ Տե՛ս **Աղասյան Արարատ, Ասատրյան Աննա**, Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար – XX դարի սկիզբ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015, 208 էջ: Գրքի մասին տե՛ս **Սանթրյան Վանիկ**, Հայ-ռուսական գեղարվեստական առնչություններ. Հրապարակի վրա է Արարատ Աղասյանի և Աննա Ասատրյանի նոր աշխատությունը // «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2016, 22 հունիսի: **Կիրակոսյան Մերի, Արտեմյան Լիլիթ**, Աղասյան Ա., Ասատրյան Ա., Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար – XX դարի սկիզբ) // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2016, հ. 2, էջ 336-344:

⁵ Տե՛ս “Два цвета радуги – двух судеб отражение...”. Произведения

Փոքր-ինչ շեղվելով արվեստաբանական թեմայից և շարունակելով «ռուսական» թեման՝ նշենք, որ վերջերս արվեստաբանը հաճելի անակնկալ մատուցեց: Քչերին է հայտնի, որ դեռևս դպրոցական տարիներից Ա.Աղասյանը բանաստեղծություններ է գրում հայոց և ռուսաց լեզուներով: 2013 թվականին նա ընթերցողի դատին հանձնեց իր «Ռուսական պոեզիայի գանձարանից» ժողովածուն, որտեղ ներառել է XIX–XX դարերի ռուսական պոեզիայի լավագույն նմուշներն ու դրանց սեփական թարգմանությունները, որոնք հետաքրքրեցին ընթերցողներին և դրական արձագանք գտան գրականագետների շրջանում: Գալանե Հարությունյանի կարծիքով. “...переводы А.Агасяна являются собой ярчайший образец глубинного прочтения русской лирики, ее души, ее неповторимой метафоричности. Обладая тонким вкусом, изяществом слога, редкой способностью слышать не только слово, но и молчание поэзии, А.Агасян создал армянскую партитуру русской поэтической симфонии, сохранив ее интонации, архитектуру, образность мышления и присущее русской культуре мировосприятие”⁶:

Վերադառնալով Ա.Աղասյանի գիտական գործունեությանը՝ նշենք, որ նա նաև XIX դարի արևմտահայ կերպարվեստի պատմության առաջին հետազոտողներից է: Ծանրակշիռ է նրա ներդրումը սարյանագիտության և քոչարագիտության բնագավառներում, ինչպես նաև խորհրդային ու հետխորհրդային հայ կերպարվեստի, այդ ժամանակվա գեղարվեստական կյանքի ուսումնասիրման գործում:

Հայաստանում և Սփյուռքում լայն արձագանք գտավ ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով պետական պատվերի շրջանակներում հրատարակված՝ գեղարվեստական,

армянской и русской живописи из музеев Армении. Каталог выставки. Москва, 2010 (авторы текстов – Арарат Агасян и Ирина Багдамян), 180 с.:

⁶ **Арутюнян Гаянэ.** Из сокровищницы русской поэзии в переводах Арарата Агасяна // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2013, հ. 3, էջ 324:

պատմամշակութային և փաստագրական մեծածավալ նյութ պարունակող «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» հիմնարար ուսումնասիրությունը՝ արվեստաբանի երկարամյա հետազոտությունների ու պրպտումների արդյունքը⁷: Աշխատության մեջ առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվում է հայ կերպարվեստի պատմական ուղին՝ սկսած Ռու-

⁷ Տե՛ս **Աղասյան Արարատ**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ռսկան Երևանցի», 2009, 292 էջ: Գրքի մասին տե՛ս **Հասրաթյան Մուրադ**, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2009, հ. 2-3, էջ 271-275: **Ավագյան Արթուր**, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2009, հ. 2, էջ 259-262: Նոր աշխատություն // Կերպարվեստ, Երևան, 2009, հ.1-3, էջ 83: **Տեր-Մինասյան Անուշ**, Հայկական կերպարվեստին նվիրված կարևոր ուսումնասիրություն // Ճարտարապետություն և շինարարություն, Երևան, 2009, հ. 4, էջ 32-33: **Սանթրյան Վանիկ**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Հայաստանի Հանրապետություն», Երեվան, 23 մայիսի 2009: **Բադալյան Մելանյա**, Արարատ Աղասյանի նոր աշխատությունը՝ «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» // «Ազգ», Երևան, 2009, մայիս: **Մկրտչյան Գայանե**, Հայ կերպարվեստի երկու դարը՝ մեկ գրքում // «Ազատամտություն», Երևան, 28 մայիսի 2009: **Авакян Светлана**. Ценное издание // Комсомольская правда в Армении, Ереван, 26 июня – 2 июля 2009. **Степанян Марина**. Культурный феномен // Голос Армении, Ереван, 30 июня 2009. «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում ընթացքին» գիրքին շնորհահանդես // «Հայրենիք», Վաթերթաուն (ԱՄՆ), 3 յուլիսի 2009: **Ծիրանի Մովսէս**, Շատոնց սպասուած կարեւոր աշխատութիւն մը // «Ազդակ», Պէյրութ, 7 սեպտեմբերի 2009: **Ասատրյան Աննա**, Ներկայացված է Հայաստանի պետական մրցանակի // «Գիտություն», Երևան, 2009, հոկտեմբեր: **Ասատրյան Աննա**, Ներկայացված է Հայաստանի պետական մրցանակի՝ Արարատ Աղասյան. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Ազգ», Երևան, 27 նոյեմբերի 2009: **Խաչիկյան Յակով**, Ա.Աղասյանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» գրքի մասին // Էսթետիկայի հարցեր: Հետազոտությունների ժողովածու: Գիրք 6, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012, էջ 37-38:

սաստանի կազմ 1801-1828թթ. Արևելյան Հայաստանի ընդգրկվելուց մինչև մեր օրերը: Երևանի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թբիլիսիի պետական և մասնավոր թանգարաններում ու արխիվներում պահվող ստեղծագործությունների, ցուցահանդեսային կատալոգների, ձեռագրերի ու վավերագրերի, հին ու նոր գեղարվեստական մամուլի, հայ արվեստագետների գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրության շնորհիվ Ա.Աղասյանը կատարել է փաստական բազմաթիվ ճշտումներ, զուգահեռներ անցկացրել XIX դարի կեսերի արևելահայ և արևմտահայ կերպարվեստի բնորոշ միտումների, գեղարվեստական համանման ու յուրահատուկ երևույթների միջև, լայնորեն ներկայացրել ու նորովի մեկնաբանել խորհրդահայ կերպարվեստը, ընդհանուր գծերով բնութագրել Հայաստանի Հանրապետության գեղարվեստական կյանքում 1991-ից հետո կատարված տեղաշարժերը, դրանց դրական ու բացասական հետևանքները⁸:

Աշխատությունը, որը «ազգային նոր և նորագույն կերպարվեստի ամբողջական պատմությունը հայերեն շարադրելու անդրանիկ փորձն է»⁹, էապես խորացնում է հայ կերպարվեստի

⁸ Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 2009թ. մայիսի 14-ին Հայաստանի ազգային պատկերասրահի որմնանկարների դահլիճում և եզրափակվեց Արամ Խաչատրյանի անվան պետական լարային քառյակի (գեղարվեստական ղեկավար՝ միջազգային մրցույթների դափնեկիր, արվեստագիտության թեկնածու Վաչե Հովեյան) համերգով: Հընթացս շնորհանդեսի ելույթ ունեցան Երևանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը, արվեստագիտության դոկտոր Լևոն Չուգասզյանը, արվեստաբան Սարո Սարոփանյանը: Նրանց ելույթներում, ի շարս ուսումնասիրությանը տրված բարձր գնահատականների և հեղինակի կատարած աշխատանքի վերաբերյալ դրվատական խոսքերի, առաջարկվեց մենագրությունը ներկայացնել ՀՀ պետական մրցանակի՝ կերպարվեստի ոլորտում:

⁹ **Ավագյան Արթուր**, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Լրաբեր հասարակական

մասին մեր պատկերացումները: Հեղինակը նյութը դիտարկել և լուսաբանել է տարբեր կողմերից, պատմամշակութային լայն համատեքստում, մոռացությունից հանել բազմաթիվ դեմքեր ու ստեղծագործություններ, բացահայտել և մատնանշել XIX-XX դարերում հայ կերպարվեստին առավել բնորոշ, ուրույն գծերը: Մեթոդաբանական ամուր հիմքերի վրա խարսխված աշխատությունն ունի համապարփակ բնույթ՝ ընդգրկելով կերպարվեստի հիմնական բոլոր տեսակները: Այն տալիս է մեր կերպարվեստի պատմության նոր և նորագույն փուլերի օբյեկտիվ պատկերը՝ բացահայտելով XIX-XX դարերի հայ նկարչության և քանդակագործության ազգային առանձնահատկությունները: Իսկ գիտական շրջանառության մեջ դրված հայերեն մասնագիտական մի շարք տերմիններ և հասկացություններ հարստացնում են արվեստաբանության ասպարեզում գործածվող բառապաշարը: Ինչպես նկատել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանը. «...հատուկ պետք է նշել աշխատանքի վերջում տրված «Օգտագործված գրականության ցանկի» մասին: Ցանկը պարունակում է նոր և ժամանակակից հայ գեղարվեստական կյանքի վերաբերյալ արխիվային բոլոր նյութերը և հրատարակությունները, ընդհանուրը՝ 600-ից ավելի անուն: Սա հայ արվեստի պատմությանը վերաբերող նյութերի ամենաընդարձակ ցուցակն է, որն ունի գիտաճանաչողական կարևոր նշանակություն և նույնիսկ կարող է առանձին տպագրվել»¹⁰:

Ա.Աղայանն է հեղինակել 2007-ին Մոսկվայում լույս տեսած՝ Նոնա Ստեփանյանի “Искусство Армении” մենագրության՝ հետխորհրդային Հայաստանի կերպարվեստին նվիրված գլուխը¹¹:

գիտությունների», Երևան, 2009, հ. 2, էջ 262:

¹⁰ **Հասրաթյան Մուրադ**, Արարատ Աղայան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2009, հ. 2-3, էջ 274:

¹¹ Տե՛ս **Агасян Арапат**. Искусство Армении постсоветского периода // Заключительный раздел книги Нонны Степанян “Искусство Армении” (Москва, “Галарт”, 2007), сс. 270-278. Գրքի մասին տե՛ս **Տե-**

Ծանրակշիռ է գիտնականի ներդրումը «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ հիմնարար աշխատության ստեղծման գործում, որի համար նա արժանացել է 2009 թվականի ՀՀ պետական մրցանակի՝ կերպարվեստի ոլորտում¹²: Նա հեղինակել է XIX-XX դարերի հայ կերպարվեստի պատմությանը նվիրված ընդարձակ բաժինները: Ինչպես իրավացիորեն նկատել է արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանը. «...առավել մանրամասն շարադրված է նոր և նորագույն կերպարվեստին վերաբերող բաժինը, որը կազմում է գրքի ուղիղ կեսը»¹³:

Նշանակալի է Ա.Աղասյանի ներդրումը սփյուռքագիտության բնագավառում՝ սփյուռքահայ կերպարվեստի ուսումնասիրության գործում: 2009-ին լույս տեսավ ՀՀ Սփյուռքի նորաստեղծ նախարարության և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համատեղ հիմնարկած «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվես-

панян Марина. Верность исторической правде // Голос Армении, Ереван, 15 ноября 2007:

¹² **Տե՛ս Աղասյան Արարատ, Հակոբյան Հրավարդ, Հասրաթյան Մուրադ, Ղազարյան Վիգեն,** Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2009, 575 էջ: Գրքի մասին տե՛ս **Ավագյան Արթուր,** Արարատ Աղասյան, Հրավարդ Հակոբյան, Մուրադ Հասրաթյան, Վիգեն Ղազարյան, Հայ արվեստի պատմություն // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2010, հ. 2, էջ 273-275: **Գրիգորյան Կարին,** Հայ արվեստի պատմություն // «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 21 նոյեմբերի 2009: **Մկրտչյան Գայանե,** Արվեստի այս հիանալի, այս կարևոր գիրքը (ժայռապատկերներից մինչև Արշիլ Գորկու արվեստը) // «Ազատամտություն», Երևան, 21 նոյեմբերի 2009: **Микаелян Карен.** Фолиант что надо. Весомый и красивый // Новое время, Ереван, 24 ноября 2009. **Օրբեղյան Վահրամ,** Մեր հայրենակիցներն արժանացել են Պետական մրցանակի // «Սյունյաց երկիր», Կապան, 12 մարտի 2010: **Տեր-Մինասյան Անուշ,** Մրցանակ՝ ըստ արժանվույն // Ճարտարապետություն և շինարարություն, Երևան, 2010, հ. 3, էջ 57: **Ծիրանի Մովսէս,** Հասցեագրուած է նաեւ... «Հայ արուեստի պատմութիւն» հատորի հրատարակման առիթով // «Ազդակ», Պէյրութ, 3 մայիսի 2010:

¹³ **Ավագյան Արթուր,** Արարատ Աղասյան, Հրավարդ Հակոբյան, Մուրադ Հասրաթյան, Վիգեն Ղազարյան, Հայ արվեստի պատմություն // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2010, հ. 2, էջ 274:

տի պատմության» մատենաշարի առաջին հատորը՝ Ա.Աղասյանի «Քաջազի մշտավառ կանթեղը» աշխատությունը¹⁴: Ամերիկահայ անվանի գեղանկարիչ Քաջազունի Քեչեճյանին նվիրված աշխատության մեջ առաջին անգամ, փաստական նյութի լայն ընդգրկմամբ, հանգամանորեն ներկայացվում է արվեստագետի երկարատև, փորձություններով լի, բայց և նշանակալից իրադարձություններով, հիշարժան դեպքերով ու երջանիկ հանդիպումներով հագեցած կենսագրությունը: Հեղինակը Քաջազի արվեստը մատուցել է ժամանակագրական հերթագայությամբ՝ ըստ շրջանների, և լուսաբանել տարբեր կողմերից: Հատկապես կարևորվում են նրա կտավներում արտացոլված թեմատիկ և կերպարային բովանդակության, ազգային մտածողության, գունային սուր ընկալումների, տեխնիկական յուրահատուկ կատար-

¹⁴ Տե՛ս **Աղասյան Արարատ**, Քաջազի մշտավառ կանթեղը (Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության), Երևան, «Տիգրան Մեծ», 2009, 128 էջ: Գրքի մասին տե՛ս **Ավագյան Արթուր**, Արարատ Աղասյան. «Քաջազի մշտավառ կանթեղը» // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2010, հ. 1-2, էջ 494-496: **Ասատրյան Աննա**, Արարատ Աղասյան. «Քաջազի մշտավառ կանթեղը» // «Գիտություն», Երևան, 2009, հ. 11, նոյեմբեր: **Մինասեան Արմինե**, Քաջազի մշտավառ կանթեղը // «Նոր կեանք», Գլենդեյլ (ԱՄՆ), 3 դեկտեմբերի 2009: **Sevag Aris**. Prof. Ararat Aghasyan's monograph "The Everlasting Lantern of Katchaz" presented to an appreciative public in Yerevan // Nor Gyank, Glendale, 3 Decembre 2009. **Sevag Aris**. Prof. Ararat Aghasyan's monograph "The Everlasting Lantern of Katchaz" presented in Yerevan // Massis Weekly, Los Angeles (USA), 5 Decembre 2009. **Sevag Aris**. Prof. Ararat Aghasyan's monograph "The Everlasting Lantern of Katchaz" presented to an appreciative public in Yerevan // Abaka, Montreal (Canada), 14 Decembre 2009. **Sevag Aris**. Prof. Ararat Aghasyan's monograph "The Everlasting Lantern of Katchaz" presented to an appreciative public in Yerevan // USA Armenian Life Magazine, Glendale (USA), Decembre 2009. **Մինասեան Արմինե**, Քաջազի մշտավառ կանթեղը // «Ազգ», Երևան, 16 դեկտեմբերի 2009: **Մինասեան Արմինե**, Նոր գիրք. «Քաջազի մշտավառ կանթեղը» // «Ալիք», Թեհրան, 26 դեկտեմբերի 2009: **Sevag Aris**. Book on Katchaz presented in Yerevan // The Armenian reporter, Burbank (USA) and Yerevan (Armenia), 5 February 2010:

ման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք դիտարկվում են նկարչի բնորոշ աշխատանքների օրինակներով, դրանց մանրախույզ քննությամբ¹⁵:

Ա.Աղասյանը Հայաստանում ֆրանսահայ ականավոր նկարիչ Լևոն Թուֆունջյանի կյանքի ու ստեղծագործության առաջին ուսումնասիրողներից է: Նա անդրադարձել է Սարգիս Խաչատուրյանի, Արմինիա Կարբոնել-Բաբայանի, Հակոբ Գյուրջյանի և այլոց արվեստին: Սփյուռքահայ արվեստի ուսումնասիրությանն են նվիրված Ա.Աղասյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանված թեկնածուական ատենախոսություններից հինգը:

2009-ին Ա.Աղասյանի նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում ստեղծվեց Սփյուռքահայ արվեստի բաժինը (2013-ից՝ Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժին), որն այժմ ղեկավարում է հենց Ա.Աղասյանը: «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, հայապահպանության բնագավառում ներդրած ավանդի, նախարարության հետ ակտիվ համագործակցության և իրականացված ծրագրերին ցուցաբերած համակողմանի աջակցության համար» 2013-ին Ա.Աղասյանն արժանացել է ՀՀ Սփյուռքի նախարարության շնորհակալագրի:

¹⁵ Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 2009 թ. սեպտեմբերի 25-ին Երևանի կամերային երաժշտության տանը: ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը ողջունեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի ծնունդը, շնորհավորեց գրքի հեղինակին և ՀՀ Սփյուռքի նախարարության պատվոգիրը հանձնեց Քաջազի այրուն՝ Սաթենիկ Քեչեճյանին, որը մեծապես նպաստել էր գրքի հրատարակմանը: Ողջույնի խոսքեր ասացին արվեստաբան Շահեն Խաչատուրյանը և լրագրող Էմանվել Մանուկյանը, ովքեր անձամբ ճանաչել են Քաջազին և վայելել նրա բարեկամությունը: Այնուհետև Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ հանդես եկավ կոմիտասյան խմբերգերի կատարմամբ:

2012-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ պետական պատվերի շրջանակներում «Ոսկան Երևանցի» հրատարակչատունը հրատարակեց Ա.Աղայանի “Символизм и творчество Мартироса Сарьяна” մենագրությունը՝ նվիրված XX դարի հայ խոշորագույն նկարիչ Մարտիրոս Սարյանի ստեղծագործության վաղ՝ սիմվոլիստական շրջանին¹⁶։ Սարյանի այդ շրջանի հիմնական ստեղծագործությունների մանրագնին ու բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում հեղինակը բացահայտել է նրա արվեստի ձևաոճական և գաղափարական-կերպարային առավել բնորոշ առանձնահատկությունները։ Վարպետի վաղ շրջանը դիտարկված է ոչ թե մեկուսացած, այլ պատմամշակութային լայն ֆոնի վրա, իսկ նրա առանձին գործերը ներկայացվել են XIX դարի վերջի և XX դարի սկզբի ռուս և արևմտաեվրոպական նկարիչների աշխատանքների համադրությամբ։ “Тонкий, всесторонний образно-содержательный, иконографический и формально-стилистический анализ ранних произведений Сарьяна опирается на твердый фундамент фактов, почерпнутых автором из обширной научной литературы по данной теме, воспоминаний, писем, сборников документации и целого ряда архивных источников. Многие из этих фактов публикуются впервые, впервые изложены в книге и некоторые положения, важные для понимания сарьяновского искусства. Собственно, сам вопрос о влиянии на него символизма, который в свое время вызывал серьезные разногласия, был окончательно “снят с повестки дня” А.Агасяном, убеди-

¹⁶ Գրքի մասին տե՛ս **Авакян Артур**, Арарат Агасян. Символизм и творчество Мартироса Сарьяна. Ереван, “Воскан Ереванци”, 2012 // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2012, հ. 1, էջ 343-347: **Ավագյան Արթուր**, Արժեքավոր մենագրություն մեծ գեղանկարչի մասին // «Գիտություն», Երևան, 2012, հ. 4, ապրիլ: **Փիլիպոսյան Հասմիկ**, Արարատ Աղայան. Սիմվոլիզմը և Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունը, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատարակչություն, 2012 // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2012, հ. 3, էջ 220-225: **М. К. [Мискарян Карине]**. Мартирос Сарьян – свой среди французов // The Art Newspaper Russia, Москва, 2012, октябрь, с. 42:

тельно доказавшим, что влияние это не только имело место, но и было весьма плодотворным для Сарьяна»¹⁷.

Ա.Աղասյանի այս հետազոտությունն արժևորվում է ոչ միայն նրանով, որ ընթերցողը «մանրամասնորեն ծանոթանում է մեծ վարպետի վաղ շրջանի ստեղծագործությանը, վերջինիս կերպարային և զգացմունքային բովանդակությանը, նվաճումներին և բացթողումներին, այլև խտացված ու ընդգրկուն պատկերացում է ստանում ռուսական սիմվոլիզմի զարգացման փուլերի, գեղագիտության, արվեստի մյուս տեսակների հետ ունեցած կապերի մասին: Ա.Աղասյանի մասնագիտական և ընդհանուր լայն էրուդիցիան նրան հնարավորություն է տալիս վերականգնելու արվեստի զանազան հովերի, ոգեշնչումների, իդեալների, նախընտրությունների, ձգտումների, անհատական որոնումների այն մթնոլորտը, որում ձևավորվում էին Սարյանն ու նրա սերնդակիցները: Գրքի հեղինակը զուգահեռներ է անցկացնում պոեզիայի, թատրոնի, նկարչության, երաժշտության ճանաչված այն վարպետների ստեղծագործությունների միջև, որոնք գրավում էին երիտասարդությանը և այս կամ այն չափով արտացոլվում նրանց գործերում»¹⁸:

Իսկ մեկ տարի անց՝ 2013-ին, ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված «Հայ քանդակագործության ձևավորումն ու զարգացման միտումները XX դարում» թեմայի շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հայոց և ռուսաց լեզուներով հրատարակվեց Ա.Աղասյանի «Երվանդ Քոչարի տարածության մեջ» մենագրությունը, որտեղ ներկայացվել են XX դարի հայ ականա-

¹⁷ **Авакян Артур**, Арарат Агасян. Символизм и творчество Мартироса Сарьяна. Ереван, “Воскан Ереванци”, 2012 // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2012, հ. 1, էջ 345:

¹⁸ **Փիլիպոսյան Հասմիկ**, Արարատ Աղասյան. Սիմվոլիզմը և Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունը, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատարակչություն, 2012 // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2012, հ. 3, էջ 222:

վոր արվեստագետներից մեկի՝ քանդակագործ, գեղանկարիչ և գծանկարիչ Երվանդ Քոչարի (1899-1979) կյանքն ու արվեստը¹⁹:

Մինչ այդ Քոչարի արվեստին Ա.Աղասյանն անդրադարձել էր “Երվանդ Կոչար” մենագրության մեջ²⁰, մի շարք գիտական հոդվածներում և զեկուցումներում, հեղինակել Գերմանիայի Բոխում քաղաքում 1994-ին տեղի ունեցած՝ Հայաստանի մշակութային նվիրված հետահայաց ցուցահանդեսի գիտական կատալոգում Քոչարին ներկայացնող հոդվածը²¹ և 2010-ին Երևանում կայացած՝ մեծն վարպետի հորեղանակա՝ ցուցահանդեսի կատալոգի առաջաբանը²²:

Ուշադրության են արժանացել Արարատ Աղասյանի՝ հայ երիտասարդ արվեստագետների ստեղծագործությանը վերաբերող պատկերագիրը²³, ինչպես նաև մեր խոշորագույն վարպետներից մեկի՝ Վարդգես Սուրենյանցի մասին պատմող մենագրությունը²⁴:

Նշենք, որ Ա.Աղասյանը Վ.Սուրենյանցի կյանքն ու գործունեությունը լուսաբանող հանգամանալից զեկուցով հանդես էր եկել Ախալցխայում 2009թ. օգոստոսի 1-ին նկարչի հուշաքարի բացմանը հաջորդած հանդիսավոր երեկոյի ընթացքում:

2014-ին լրացավ ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, պետական մրցանակի դափնեկիր Էդուարդ Իսաբեկյանի ծննդյան

¹⁹ Տե՛ս **Աղասյան Արարատ**, Երվանդ Քոչարի տարածության մեջ, Երևան, «Ոսկան Երևանցի», 2013, 196 էջ: Գրքի մասին տե՛ս **Нерсисян Алис.** В пространстве Ерванда Кочара // Ճարտարապետություն և շինարարություն, Երևան, 2013, հ. 7, էջ 46-50:

²⁰ Տե՛ս **Агасян Арагат.** Ерванд Кочар. Ереван, Издательство “Гитутюн” НАН РА, 1999, 90 с.:

²¹ Տե՛ս **Aghassian Ara.** Yervand Kotschar // Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft. Museum Bochum, 1995, S. 384-385:

²² Տե՛ս Երվանդ Քոչար: Հորեղանակա՝ ցուցահանդեսի կատալոգ (տեքստը՝ Արարատ Աղասյանի), Երևան, «Փրինթինֆո» հրատարակչատուն, 2010, 110 էջ:

²³ Տե՛ս Հայաստանի երիտասարդ նկարիչները (առաջաբանը՝ Արարատ Աղասյանի), Երևան, «Սովետական գրող», 1987, 168 էջ:

²⁴ Տե՛ս **Աղասյան Արարատ**, Վարդգես Սուրենյանց (1860-1921), Երևան, Հայաստանի ազգային պատկերասրահ, 2010, 224 էջ:

100-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ կազմակերպված ցուցահանդեսի պատկերագիրք-կատալոգի ընդարձակ առաջաբանը հեղինակել է Ա.Աղասյանը²⁵: «Սույն կատալոգի առաջաբանը,- նկատել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանը,- սեղմ, բայց բովանդակալի մի ակնարկ է նկարչի մասին՝ համառոտ և ընդհանրացնող ձևակերպումներով ու բնորոշումներով. ա) կոմպոզիցիայի դինամիկ կառուցվածքը, որ բարոկկոյի և ռոմանտիզմի բնորոշ հատկանիշն է, բ) գույների և նկարների գունային ֆակտուրայի եզակի բազմազանությունը, գ) կերպարների առնականությունը, ռոմանտիկ հուզականությունը և խարակտերային բնութագիրը, դ) ժանրային և բովանդակային բազմազանությունը, ե) նկարների ռեալիստական և դասական հիմքը, զ) կոմպոզիտորական կամ «ռեժիսորական»-բեմադրական բացառիկ ունակությունը, է) թեմատիկ աննախադեպ բազմազանությունը հայ արվեստում, ը) քնարական ոգին, որ հատկապես հայտնվում է մերկ, կիսամերկ և հագնված կանանց պատկերներում: Հեղինակը բաց չի թողել նաև նկարչի բարձր գրական-բանաստեղծական տաղանդը, որ հատկապես շոշոփում է «Իգդիր» ինքնակենսագրական վեպում, և քննադատական ձիրքը»²⁶:

Բազմալսատակ արվեստաբանը շարադրել է «Հայոց պատմություն» քառահատորի՝ նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստին նվիրված բաժինները՝ երրորդ և չորրորդ հատորներում²⁷:

²⁵ Տե՛ս Էդուարդ Իսաբեկյան – 100 (առաջաբանը՝ Արարատ Աղասյանի), Երևան, Հայաստանի ազգային պատկերասրահ, 2014, 80 էջ:

²⁶ **Ղազարյան Վիգեն**, Էդուարդ Իսաբեկյանը քննադատության հայելիում // Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք. Արվեստագիտական և հումանիտար հետազոտություններ, թիվ 2-3, 2014-2015, Երևան, 2015, էջ 15-16:

²⁷ Տե՛ս **Աղասյան Արարատ**, Կերպարվեստ // «Հայոց պատմություն», հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, «Հանգակ-97», 2010, էջ 350-355, Գիրք երկրորդ (1901 – 1918 թթ.), Երևան, «Հանգակ-97», 2015, էջ 220-231: **Աղասյան Արարատ**, Կերպարվեստ // «Հայոց պատմություն», հատոր IV, Գիրք

Ա.Աղասյանի ուսումնասիրությունների վերաբերյալ տպագրվել են շուրջ 50 գրախոսականներ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Իրանում:

Նրա գիտական խմբագրությամբ լույս է տեսել 53 գիրք ու մենագրություն:

2011-ին պետական պատվերի շրջանակներում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը հրատարակեց ավստրիացի ականավոր արվեստաբան Յոզեֆ Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունն ու Եվրոպան» գերմաներեն գրքի ռուսերեն թարգմանության առաջին գրքի առաջին հատորը (պատասխանատու խմբագիրներ՝ Մուրադ Հասրաթյան և Արարատ Աղասյան), որի աշխատանքներն ընթացել են Ա.Աղասյանի ընդհանուր հսկողությամբ:

Ա.Աղասյանի ծննդյան 60-ամյա հոբելյանը համընկավ ՀՀ անկախության 25-ամյա հոբելյանի հետ: Հայաստանի Երրորդ հանրապետության ողջ ընթացքում մեր հոբելյարը եղել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ղեկի մոտ՝ 1991-2003-ին՝ որպես գիտքարտուղար, իսկ հետո՝ որպես տնօրեն, ում ջանքերով այսօր ինստիտուտը բռնել է վերելքի ուղին:

Բավական է նշել, որ Ա.Աղասյանի պաշտոնավարման ավելի քան 13 տարիների ընթացքում նրա նախաձեռնությամբ ինստիտուտում վերստեղծվեցին թատրոնի բաժինը (2004թ., վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյան), երիտասարդ արվեստաբանների խորհուրդը (2004թ., նախագահ՝ արվեստագիտության թեկնածու Մերի Կիրակոսյան), և ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ կազմակերպվեցին արդեն ամենամյա դարձած՝ երիտասարդ արվեստաբանների գիտական նստաշրջանները, հիմնարկվեց «Հայ արվեստի հարցեր» մատենաշարը, պետական պատվերի շրջանակներում հրատարակվեցին «Հայ ավանդական երաժշտության» 13 հատորները: 2014-ից ինստիտուտը հրատարակում է «Կանթեղ»

գիտական պարբերականը:

Տիրող գիտաստեղծագործական բեղմնավոր մթնոլորտում այդ տարիներին պաշտպանվել է 6 դոկտորական և 25 թեկնածուական ատենախոսություն, հաջողությամբ է լուծվում գիտական անձնակազմի սերնդափոխության հարցը, գումարվել են բազմաթիվ գիտական նստաշրջաններ, այդ թվում՝ «Վենետիկյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովը (2005թ.): «Հայ-իտալական պատմամշակութային առնչություններին նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպման ու անցկացման համար» Ա.Աղասյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ նախագահության «Պատվոգրով» (№ 75):

Ինստիտուտը, որտեղ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ չորս թղթակից անդամ, գիտությունների 14 դոկտոր և 34 թեկնածու, ձեռք է բերել լայն ճանաչում, գնահատվել պետության կողմից. 2008-2015 թվականների ընթացքում գիտաշխատողներից տասներեքն արժանացել են ՀՀ պատվավոր կոչումների:

Ա.Աղասյանի պաշտոնավարման ընթացքում իր հիմնադրման կենդարյա հոբելյանը բոլորեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը: Այդ տարեդարձին նվիրվեցին հանդիսավոր միջոցառումների շարքը (2008թ.) և «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ – 50» գրքի հրատարակումը՝ պետական պատվերի շրջանակներում²⁸: Ինստիտուտի հոբելյանի առիթով գիտաշխատողներից շատերը պարգևատրվեցին ՀՀ ԳԱԱ վաստակագրերով ու պատվոգրերով, ՀՀ ԿԳՆ և Մշակույթի նախարարության ոսկե մեդալներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով:

2013 թվականին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 70-ամյա հոբելյանի կապակցությամբ Արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ ստեղծվեց ՀՀ ԳԱԱ հիմնը, որի հեղինակներն են կոմպոզիտոր Արամ Սաթյանը և բանաստեղծ Կարո Վարդանյանը: Հիմնի պրեմիերան տեղի ունեցավ 2013թ. հոկտեմբերի 15-ին Երևանի Ալ.Սպենդիարյանի

²⁸ Տե՛ս **Ասատրյան Աննա**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50 (պատասխանատու խմբագիր՝ Ա.Վ.Աղասյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, 395 էջ:

անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսի ժամանակ: Կատարեցին Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի երիտասարդական պետական նվագախումբը՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ, որն արժանացավ ունկնդիրների ջերմ ընդունելությանը²⁹:

Ա.Աղասյանի ջանքերով նկատելիորեն աշխուժացել է միջազգային համագործակցությունը. սերտ կապեր են հաստատվել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Ճարտարապետության ու շինարարական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի Ճարտարապետության և քաղաքաշինության տեսության ու պատմության գիտահետազոտական ինստիտուտի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության Արվեստագիտության պետական ինստիտուտի հետ:

2008-ից ինստիտուտում իրենց հետբուհական՝ ասպիրանտական, կրթությունն են շարունակում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները, որոնք, ավարտելով ասպիրանտուրան, հաջողությամբ պաշտպանում են իրենց թեկնածուական ատենախոսությունները՝ ստանալով արվեստագիտության կամ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան: Ավելին՝ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդում են իրենց թեկնածուական ատենախոսությունները պաշտպանում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի իրանցի ասպիրանտները: Այդ տեսակետից Արվեստի ինստիտուտը դարձել է տարածաշրջանային կենտրոն:

Ա.Աղասյանի նախաձեռնությամբ վերականգնվեց ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը, որն արդեն շնորհվել

²⁹ Տե՛ս **Ասատրյան Աննա**, ՀՀ ԳԱԱ հիմնը // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2014, հ. 2, էջ 353-354:

է երկու անգամ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանին և ճարտարապետության դոկտոր Գառնիկ Շախկյանին (2011թ.), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, արվեստագիտության դոկտոր Արմեն Ղազարյանին (2016թ.):

2011 թվականին ստեղծվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պաշտոնական կայքը, որը տեղադրված է www.arts.sci.am հասցեում³⁰:

Ա.Աղասյանի գիտական ու գիտակազմակերպական բեղմնավոր աշխատանքը հաջողությամբ զուգակցվում է մանկավարժական և հասարակական գործունեության հետ: Պրոֆեսորը տարիներ շարունակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ սեփական փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա արվեստաբաններին: Այսօր նա Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի մագիստրատուրայում վարում է «Արևմտահայ և սփյուռքահայ կերպարվեստի պատմություն» դասընթացը: Բազմիցս ղեկավարել է արվեստաբանության գծով պետական քննությունների և ավարտական աշխատանքների հանձնաժողովները Երևանի պետական համալսարանում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, ԽՍ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

2009-ից Ա.Աղասյանը «Կերպարվեստ, դեկորատիվ և կի-

³⁰ Կայքն իր բովանդակությամբ ոչ միայն ներկայացնում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի անցած ուղին ու ներկան, այլև հայ արվեստագիտության վերաբերյալ տեղեկատվական լավագույն աղբյուր է: Այցելուն կայքում ծանոթանում է ինստիտուտի պատմությանը, գործունեության հիմնական ուղղություններին, գիտական ստորաբաժանումներին: Առանձին բաժիններ են հատկացվել գիտական խորհրդին և երիտասարդ արվեստաբանների խորհրդին, արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդին և ասպիրանտուրային: Ներկայացված են նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արվեստաբանական գրադարանը, Ռուբեն Զարյանի անվան շեքսպիրագիտական գրադարանը և Արամ Քոչարյանի անվան ծայնադարանը: Կայքն ամփոփ տեղեկություններ է տալիս նաև ինստիտուտի աշխատակիցների հրապարակումների, իրադարձությունների ու նորությունների մասին:

րառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովի նախագահն է:

Նշանակալի է Ա.Աղասյանի ներդրումը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 ատենախոսություն: Ակնհայտ է, որ նա գիտական դպրոցի հիմնադիր է. նրա սաներն այսօր ևս, հետևելով ուսուցչի օրինակին, շարունակում են իրենց նպաստը բերել հայրենական կերպարվեստի ուսումնասիրության գործում: Ի դեպ, սփյուռքահայ արվեստագիտության առաջին ու դեռևս միակ թեկնածուն՝ Մովսես Հերկեյանը, ով ապրում ու ստեղծագործում է Լիբանանում, իր «Ամերիկահայ կերպարվեստ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը կատարել և պաշտպանել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում հենց Ա.Աղասյանի գիտական ղեկավարությամբ: Վերջինիս ասպիրանտների թվում են նաև Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները:

Ա.Աղասյանն ընդգրկվել է «Գրականության և արվեստի բնագավառում արվեստի ոլորտի ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2009թ.), «Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2011, 2013, 2015 թթ.) և «Հանրապետության Նախագահի մրցանակների շնորհման» արվեստի (2006-2009 թթ.) հանձնախմբերում: Նա ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ է, Հայաստանի նկարիչների միության վարչության անդամ: Ընդգրկված է ՀՀ ԳԱԱ փորձագիտական ազգային բյուրոյի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Հայաստանի ժողովրդական արվեստի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Մարտիրոս Սարյանի ու Երվանդ Քոչարի թանգարանների գիտական խորհուրդների, ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարանի» գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր հայագիտության» և «Գիտության աշխարհում», ՀՀ նկարիչների միության «Կերպարվեստ» հանդեսների, Ստեփանակերտի

(ԼՂՀ) «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների ժողովածուի և «Կանթեղ» գիտական պարբերականի խմբագրական խորհուրդների, ինչպես նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Ճարտարապետության և շինարարության – 030 մասնագիտական խորհրդի կազմում:

Հայրենիքը բարձր է գնահատել Ա.Աղասյանի գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2008 թվականի մայիսի 26-ի ՆՀ – 126 – Ա հրամանագրով Ա.Աղասյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում. Շնորհագիրն ու Վկայագիրը նրան է հանձնել ՀՀ Նախագահը նույն թվականի մայիսի 28-ին:

ՀՀ ԿԳ նախարար Սպարտակ Սեյրանյանի՝ 2008թ. նոյեմբերի 24-ի հրամանագրով «Կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյա հոբելյանի կապակցությամբ» Ա.Աղասյանը պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Հուշամեդալով», իսկ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի՝ 2008թ. նոյեմբերի 21-ի հրամանով՝ «Հայ արվեստագիտության ասպարեզում ունեցած զգալի վաստակի համար, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյա հոբելյանի առիթով»՝ ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով»:

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի՝ 2012թ. մարտի 24-ի № 248 հրամանով Ա.Աղասյանը պարգևատրվել է «Գարեգին Նժդեհ» մեդալով (№ 2313):

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի առաջարկությամբ Երևանի Ավագանու 2-րդ գումարման երրորդ նստաշրջանի 2014թ. մարտի 19-ի նիստի № 138-Ա որոշմամբ (Ավագանու որոշումն ընդունվեց միաձայն) Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններից մեկը սեփականության իրավունքով անհատույց նվիրվեց Ա.Աղասյանին: Տարոն Մարգարյանը բնակարանի բանալիներն Ա.Աղասյանին հանձնեց նույն թվականի մարտի 20-ին:

Իսկ բոլորովին վերջերս մեր հորեյարը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ վաստակագրով (2016թ.):

Շնորհավորելով բազմավաստակ արվեստաբան, նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստագիտության առաջատար, գիտության հմուտ կազմակերպիչ Ա.Աղասյանին՝ մաղթում ենք նրան արևշատություն և գիտական նորանոր ձեռքբերումներ հանուն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետագա վերելքի, ի շահ հայագիտության առաջընթացի:

ՍՈՒՎԱՐՅԱՆ Յուրի Միքայելի

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար,

ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԱՍԱՏՐՅԱՆ Աննա Գրիգորի

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԻ
ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ**

1956

Ծնվել է օգոստոսի 11-ին ՀԽՍՀ Սիսիան քաղաքում՝ ԽՍՀՄ Պետական բանկի հայկական գրասենյակի կառավարիչ, ՀԽՍՀ պետական ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, ՀԽՍՀ մինիստր, ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու Վլադիմիր Աղասյանի և մանկավարժ, անգլերեն լեզվի ուսուցչուհի Մարգարիտա Ասոյանի ընտանիքում:

1960

Ծնողների հետ տեղափոխվել է Երևան:

1973

Ավարտել է Երևանի № 122 միջնակարգ դպրոցը:

Ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանական բաժինը:

1978

Ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանական բաժինը՝ ստանալով «արվեստի պատմաբանի» որակավորում (Ե-Ի № 212541):

Օգոստոսի 1-ին աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

1980

Ընտրվել է ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների գիտխորհրդի նախագահ:

1981

Ընտրվել է Հայաստանի ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

1986

Սկսել է դասավանդել Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

1989

Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնագիտական խորհրդի հոկտեմբերի 25-ի նիստում պաշտպանել է դիսերտացիա՝ «Формирование живописного метода Мартироса Сарьяна» թեմայով, և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան (Диплом ИС № 001945, Москва, 28 марта 1990г.):

1991

Հունիսի 1-ին նշանակվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար և գիտական խորհրդի քարտուղար:

1995

Ընդգրկվել է արվեստագիտության բնագավառի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի կազմ:

1996

Ընտրվել է ՀՀ նկարիչների միության անդամ:

Սկսել է դասավանդել Երևանի պետական համալսարանում:

2003

Հունիսի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից միաձայն հաստատվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի գիտական

խորհրդի հոկտեմբերի 14-ի նիստի որոշմամբ Ա.Աղասյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում արվեստագիտություն մասնագիտությամբ (Դիպլոմ Դ № 00503, 18.12.2003թ., արձանագրություն № 35):

Ընտրվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ:

Ընտրվել է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ:

Ընդգրկվել է ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրական խորհրդի կազմ:

Ընդգրկվել է Հայաստանի ազգային պատկերասրահի գիտական խորհրդի կազմ:

Ընդգրկվել է ՀՀ նկարիչների միության «Կերպարվեստ» հանդեսի խմբագրական խորհրդի կազմ:

2004

Ընտրվել է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի անդամ:

Ընդգրկվել է Մարտիրոս Սարյանի թանգարանի գիտական խորհրդի կազմ:

2005

Որակավորվել է որպես առաջատար գիտաշխատող:

Ընդգրկվել է ՀՀ ԳԱԱ փորձագիտական ազգային բյուրոյի գիտական խորհրդի կազմ:

Ընդգրկվել է ՀՀ ԳԱԱ «Գիտության աշխարհում» հանդեսի խմբագրական խորհրդի կազմ:

Ընտրվել է Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի իսկական անդամ (АПГ № 058):

Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ նախագահության պատվոգրով «Հայ-իտալական պատմամշակութային առնչություններին նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպման ու անցկացման համար»:

2006

Նշանակվել է «Հանրապետության Նախագահի մրցանակների շնորհման» արվեստի հանձնախմբերի անդամ:

2007

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի մարտի 14-ի նիստում պաշտպանել է ատենախոսություն «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» թեմայով, և նրան միաձայն շնորհվել է արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան (Վկայագիր Բ № 00656, 21.06.2007թ.):

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի հոկտեմբերի 2-ի նիստի որոշմամբ Ա.Աղայանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում արվեստագիտություն մասնագիտությամբ (Դիպլոմ Պ № 00510, 2.11.2007թ.):

Ընտրվել է Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության անդամ:

Ընդգրկվել է Ստեփանակերտի (ԼՂՀ) «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի կազմ:

Ընդգրկվել է Երվանդ Քոչարի թանգարանի գիտական խորհրդի կազմ:

2008

Եվ դժվար է ասել, թե ինչպիսին կլինե՞ր այսօր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, եթե այնտեղ 1978թ. օգոստոսի 1-ին որպես կերպարվեստի բաժնի կրտսեր գիտաշխատող աշխատանքի չընդունվե՞ր Մոսկվայի պետական համալսարանի շրջանավարտ, երիտասարդ արվեստաբան Արարատ Աղասյանը, ով տարիներ անց պիտի դառնար արվեստագիտության գծով ՀՀ ԳԱԱ ամենաերիտասարդ թղթակից անդամը:

2016 թվականը յուրովի հոբելյանական է նաև իմ գիտաստեղծագործական կյանքում:

Ճիշտ քսան տարի առաջ՝ 1996 թվականի աշնանը, ես առաջին անգամ ոտք դրեցի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ. ընդունվեցի ասպիրանտուրա (հեռակա ուսուցմամբ): Իմ գիտական ղեկավարը դարձավ ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության թեկնածու Գևորգ Գյոդակյանը: Ինստիտուտի տնօրենն էր ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը, իսկ գիտքարտուղարը՝ արվեստագիտության թեկնածու Արարատ Աղասյանը:

Ճիշտ 15 տարի առաջ՝ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի 2001 թվականի դեկտեմբերի 12-ի նիստում, պաշտպանեցի թեկնածուական ատենախոսությունս «Տիգրան Չոխսաճյանի օպերաները» թեմայով, և ինձ շնորհվեց արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Ինչ իմանայի, որ այդ օրվանից հայ մեծ կոմպոզիտորի ստեղծագործության ուսումնասիրությունն ու պրոպագանդումը պիտի դառնային իմ գիտաստեղծագործական գործունեության առանցքը:

Ինչևէ: Ընդամենը ամիսներ անց՝ 2002թ. ապրիլի 1-ից ես աշխատանքի անցա Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնում՝ որպես գիտաշխատող: Այն ժամանակ, թերևս, դժվար էր կռահել, որ իմ հետագա ողջ գործունեությունն անխզելիորեն կապվելու էր Արվեստի ինստիտուտի հետ, որ այստեղ պիտի գրվեին իմ տասը գրքերն ու շուրջ 120 հոդվածները, այստեղ պիտի 2008-ին պաշտպանեի իմ դոկտորական ատենախոսությունը, 2012-ին ինստիտուտի գիտական խորհուրդը պիտի շնորհեր ինձ պրոֆեսորի գիտական կոչում, 2013-ին ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանի կապակցությամբ պիտի արժանանայի ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման, այստեղ պետք է իրենց թեկնածուական ատենախոսությունները պաշտպանեին իմ տասը դիսերտանտները՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտներն ու հայցորդները...

Այդ բոլորը՝ հետագայում:

Իսկ մինչ այդ...

2003թ. գարնանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կոլեկտիվը Ա.Աղասյանին վստահեց ինստիտուտի ղեկը: Վստահեց ու չսխալվեց: Ա.Աղասյանի թեկնածությունը պաշտպանողների սովոր բանակում էի նաև ես: Դա՛ էր նաև ինստիտուտի երջանկահիշատակ տնօրեն Լևոն Հախվերդյանի կամքը. դեռևս ասպիրանտական տարիներին քանիցս եմ լսել պատվարժան ակադեմիկոսի խոսքը, որ ինստիտուտի ղեկավարությունն ինքը կվստահի Ա.Աղասյանին և միայն նրան: Նույն կարծիքին էր նաև իմ գիտական ղեկավարը: Ընտրության հարցում կողմնորոշիչ էին ոչ միայն Ա.Աղասյանի գիտակազմակերպական ջիղը, մտավոր կարողություններն ու աշխատասիրությունը, այլև մարդկային նկարագիրն ու անձնական հմայքը:

Տնօրեն ընտրվելուց հետո Ա.Աղասյանն ինձ վստահեց ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը, որն ինքը զբաղեցրել էր 12 տարի շարունակ՝ 1991-2003 թվականներին: 2005-ին ինձ վստահվեց նաև ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնը, 2009-ին՝ նրա նախաձեռնությամբ ստեղծված սփյուռքահայ արվեստի բաժնի, իսկ բոլորովին վերջերս՝ երաժշտության

բաժնի ղեկավարությունը...

Արվեստագիտության բնագավառում իմ գիտաստեղծագործական ու գիտակազմակերպական համեստ վաստակի մեջ նշանակալի է Արարատ Աղասյանի դերը. ընդ որում՝ ոչ միայն իմ, այլև մեր կոլեկտիվի անդամներից շատ-շատերի: Ա.Աղասյանը վստահում է երիտասարդներին, զարմանալի կռահողականությամբ նկատում հեռանկարային արվեստաբաններին և պայմաններ ստեղծում նրանց հետագա աճի համար:

Այսօր ինստիտուտում մենք, շնորհիվ Ա.Աղասյանի, ունենք երիտասարդական ամուր ու հեռանկարային թև. հայ արվեստագիտության հուսալի հերթափոխն ապահովված է:

Մյուս կողմից՝ Ա.Աղասյանն արտակարգ պայմաններ է ստեղծել նաև ինստիտուտի կոլեկտիվի վաստակաշատ անդամների համար: Աշխատակիցներից ոչ մեկին նա չի ուղարկել վաստակած հանգստի, նրանցից ոչ ոք չի կրճատվել տարիքի պատճառով: Ավելին, ՀՀ ԳԱԱ պատմության մեջ առաջին անգամ ՀՀ ԳԱԱ-ն արվեստագիտության գծով ունի չորս անդամ, որոնք բոլորն էլ Արվեստի ինստիտուտի աշխատակիցներ են, գիտական ստորաբաժանումների ղեկավարներ:

Ինստիտուտն արժանի ճանաչում է ձեռք բերել, գնահատվել պետության և ակադեմիայի ղեկավարության կողմից: 2008-2015թթ. ինստիտուտի աշխատակիցներից տասներեքն արժանացել են ՀՀ պատվավոր կոչումների...

Ա.Աղասյանն ինստիտուտում հմտորեն է ապահովել սերունդների գիտաստեղծագործական երկխոսությունը:

Ու դժվար է ասել, թե ինչպես կդասավորվեր ինստիտուտի աշխատակիցներից յուրաքանչյուրի գիտաստեղծագործական և մարդկային ճակատագիրը, եթե իր կյանքի ճանապարհին չհանդիպեր Ա.Աղասյանին...

Եվ ահավասիկ ինստիտուտի տնօրենը բոլորեց իր ծնընդյան 60-ամյակը: Իսկ ինչ հորեղյան՝ առանց նվերի: Բայց իրադարձությունը յուրահատուկ էր, ուստի մատուցվող նվերն էլ պիտի արտասովոր լիներ, ոչ շաբլոն: Եվ տևական մտորումների արդյունքում մեկ տարի առաջ գտնվեց մեր անակնկալի ձևաչափը:

Ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնում մենք որոշեցինք, որ մեր նվերը պիտի բաղկացած լինի երկու մասից՝ «արվեստաբանական» և «երաժշտական»:

Առաջին՝ «արվեստաբանական», մասով նախատեսվեց պատրաստել և հորեյանի օրերին լույս ընծայել «Արարատ Աղասյանը՝ հայ կերպարվեստի հետազոտող» հոդվածների ժողովածուն, որի հեղինակները պիտի լինեին բացառապես նրա սաները՝ նրա նախկին ասպիրանտներն ու հայցորդները, նրա ստեղծած գիտական դպրոցի ներկայացուցիչները, ովքեր այսօր արդեն արվեստագիտության թեկնածուներ են և շարունակում են իրենց գիտական գործունեությունը հարազատ ինստիտուտում կամ էլ զբաղված են գիտամանկավարժական աշխատանքով Հայաստանի բուհերում՝ պահպանելով սերտ կապն Արվեստի ինստիտուտի հետ: Եվ քանի որ դա պիտի լիներ անակնկալ և աննախադեպ ձեռնարկ էր մեզանում, ուստի շատ չծավալվեցինք և ընտրեցինք կամերային կազմ՝ ընդամենը յոթ արվեստաբան:

Նպատակն էր հնարավորինս ներկայացնել Ա.Աղասյանի արվեստաբանական վաստակը: Հեղինակներից յուրաքանչյուրն իր նախասիրությամբ ընտրեց նոր և նորագույն շրջանի հայ կերպարվեստի որևէ փուլ կամ երևելի ներկայացուցիչ, որի ուսումնասիրությամբ զբաղվել է մեր հորեյարը:

Իհարկե, մտահղացումն ամբողջությամբ իրականացնել, կարծում եմ, մեզ չհաջողվեց: Սակայն հայ կերպարվեստի հիմնական շրջափուլերն ու նշանավոր գործիչներին ներառեցինք: Ներկայացված է արվեստաբանի ներդրումն արևմտահայ, խորհրդահայ և սփյուռքահայ արվեստի, ինչպես նաև հայ կերպարվեստի խոշորագույն դեմքերի՝ Վարդգես Սուրենյանցի և Մարտիրոս Սարյանի ստեղծագործության ուսումնասիրության գործում:

Սիրելի՛ ընթերցող:

Զարաշահելով համբերությունդ՝ ուզում եմ ներկայացնել մեր հեղինակներին առանձին-առանձին:

Արթուր Վահանի Ավագյանն Արարատ Աղասյանի առաջին ասպիրանտն է. «Հայաստանի գեղարվեստական կյանքը 1920-1932 թվականներին» թեմայով թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2000թ. հոկտեմբերի 25-ին: 2002-ին հրատարակվեցին նրա “Из истории художественной жизни Армении: 1920–1932”¹, իսկ 2007-ին՝ Տաճատ Խաչվանքյանի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված² մենագրությունները, որոնց խմբագիրն Ա.Աղասյանն է:

Այսօր Ա.Ավագյանն ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող է, բաժնի խոստումնալից ու հեռանկարային աշխատակիցներից, գիտական հոդվածների հեղինակ: Նա արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ է (բազմիցս հանդես է եկել նաև որպես պաշտոնական ընդդիմախոս)³, ԺԷ.00.03 –

¹ **Авакян Артур.** Из истории художественной жизни Армении: 1920–1932. Ереван, “Армিনিус”, 2002, 212 с.

² **Ավագյան Արթուր,** Տաճատ Խաչվանքյան, Երևան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հրատարակչություն, 2007, 164 էջ:

³ Եղել է Աննա Գալստյանի «Արշիլ Գորկին ամերիկյան քննադատության պատմության մեջ» (2008), Ռուբեն Բուբուշյանի «Պոստիմպրեսիոնիզմի դրսևորումները հայ գեղանկարչության մեջ XX դարի սկզբին» (2009), Արսեն Թորոսյանի «XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին տասնամյակի հայ երգիծանկարչությունը» (2009), Արթուր Հովհաննիսյանի «Խորեն Տեր-Հարությանի արվեստը» (2010), Արաքսյա Մարգարյանի «Մարիամ և Երանուհի Ալամազյանների ստեղծագործական ուղին» (2010), Արմինե Բաղդասարյանի «Սասունցի Դավիթ» էպոսի և գրական մշակումների նկարագրողումները» (2011), Արտավազ Եղիազարյանի «Հայկական կինոագրագիր» (2011), Աշոտ Առաքելյանի «1960-80-ական թթ. խորհրդահայ տպագրական գրաֆիկան» (2011), Մարգարիտա Քամալյանի «Ժան Գառզուի բեմանկարչությունը» (2013), Մերի Կիրակոսյանի «Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը» (2013), Մանե Մկրտչյանի «Սիմվոլիզմը հայ կերպարվեստում. XIX դարի վերջ - XX դարի սկիզբ» (2013), Հռիփսիմե Վարդանյանի «Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստը» (2014), Շուշանիկ Զոհրաբյանի «Վարդգես Սուրենյանցի նկարների կոմպոզիցիոն-տարածաչափական առանձ-

«Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությունից թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովի անդամ: Վերջին տարիներին Ա.Ավագյանն ընդգրկվել է պետական ավարտական քննական հանձնաժողովների կազմում՝ Երևանի պետական համալսարանում և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Օ16 մասնագիտական խորհրդի՝ 2014թ. հունիսի 26-ի նիստում Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ Լիլիթ Արսենյանը հաջողությամբ պաշտպանեց «Հովհաննես Զարդարյանի ստեղծագործությունը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, որի գիտական ղեկավարն Ա.Ավագյանն էր:

Այսօր Ա.Ավագյանն աշխատում է իր դոկտորական ատենախոսության վրա, և վստահ եմ՝ Ա.Աղայանի հաջորդ հորեղանին նա իր Ուսուցչապետին կշնորհավորի արդեն որպես արվեստագիտության դոկտոր:

Սաթենիկ Հարությունի Մելիքյանն Արարատ Աղայանի ղեկավարությամբ պաշտպանած վեցերորդ դիսերտատնտն է՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ: 2006թ. սեպտեմբերի 4-ին Ս.Մելիքյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Ալեքսանդր Սարուխանի արվեստը» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Մինչ այդ՝ 2004-ին, հրատարակվել է նրա «Ալեքսանդր Սարուխանի արվեստը» մենագրությունը⁴, որի խմբագիրն է Ա.Աղայանը: 2015թ. հրատարակվեց Ս.Մելիքյանի «Կոմպոզիցիոն խնդիրները հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության դասընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկը⁵, որի գրախոսն

նահատկությունները» (2014) ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոսը:

⁴ **Մելիքյան Սաթենիկ**, Ալեքսանդր Սարուխանի արվեստը, Երևան, «Զանգակ-97», 2004, 60 էջ:

⁵ **Մելիքյան Սաթենիկ**, Կոմպոզիցիոն խնդիրները հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության դասընթացում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Ոսկան Երևանցի», 2015, 48 էջ:

Ա.Աղասյանն էր: 2016թ. Ա.Մելիքյանն ստացել է դոցենտի գիտական կոչում:

Ներկայումս Ա.Մելիքյանը դասավանդում է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ շարունակելով սերտ համագործակցությունն Արվեստի ինստիտուտի հետ⁶:

Հաջորդիվ՝ Ա.Աղասյանի և մեր ինստիտուտի «հրաշալի եռյակն է»՝ Մերի Կիրակոսյան, Մարգարիտա Քամալյան և Մանե Մկրտչյան. նրանք իրենց թեկնածուական ատենախոսությունները պաշտպանեցին 2013թ. նոյեմբերին: Այսօր նրանք երեքն էլ ինստիտուտի ավագ գիտաշխատողներ են, արվեստագիտության ապագա դոկտորներ և հրաշալի մարդիկ:

Մարգարիտա Արսենի Քամալյանն Արարատ Աղասյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանած ութերորդ դիսերտանտն է՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հեռակա ասպիրանտ, ով, դեռ ասպիրանտուրան չավարտած, 2010-ին, աշխատանքի անցավ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 2010-2014թթ. ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհրդի փոխնախագահն էր: 2013թ. նոյեմբերի 7-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Ժան Գառզուի բեմանկարչությունը» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Ամիսներ անց՝ 2014թ. մայիսին, Ա.Աղասյանը նրան վստահեց ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը: 2014-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է, 2015-ից՝ ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությունից թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովի անդամ:

Մ.Քամալյանը գիտական հոդվածների հեղինակ է, զեկու-

⁶ Եղել է Արմենակ Գրիգորյանի «Հայ միջնադարյան արվեստի պատմագրությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբի հայ պարբերական մամուլում» (2011), Մարտին Հարությունյանի «Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում» (2013) թեմայով ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոսը:

ցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում Հայաստանում, Ռուսաստանում (Սանկտ Պետերբուրգ, Դոնի Ռոստով) և Մեծ Բրիտանիայում, ընդ որում՝ նաև որպես թեկնածուական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս⁷:

ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով մինչև տարեվերջ լույս կտեսնի Մ.Քամայանի անդրանիկ՝ «Ժան Գառզուի բեմանկարչությունը» մենագրությունը:

Մերի Արայի Կիրակոսյանն Արարատ Աղասյանի ղեկավարությամբ պաշտպանած իններորդ դիսերտատնոն է՝ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի հեռակա ասպիրանտ, ով 2005-ին աշխատանքի է անցել Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 2013թ. նոյեմբերի 14-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Այսօր Մ.Կիրակոսյանն Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող է, 2016-ի փետրվարի 1-ից՝ բաժնի քարտուղարը:

Նա 2010-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահն է, ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի անդամ, 2014-ից՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

Մ.Կիրակոսյանն ընդգրկվել է պետական ավարտական քննական հանձնաժողովների կազմ՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (2015, 2016):

⁷ Եղել է Լիլիթ Արսենյանի «Հովհաննես Զարդարյանի ստեղծագործությունը» (2014), Համիդռեզա Շերբաֆյանի «Սպահանի գեղանկարչության դպրոցը և նրանում Ռեզա Աբբասիի տեղը» (2015) և Շուշան Վարդանյանի «Արտո Չաքմաքչյանի արվեստը» (2015) թեմաներով թեկնածուական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոսը:

ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով, ՀՀ Նախագահի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը 2015թ. լույս ընծայեց երիտասարդ արվեստաբանի «Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը⁸, որի գիտական խմբագիրն է Ա.Աղասյանը:

2010-2015թթ. Մ.Կիրակոսյանը հաջողությամբ կազմակերպել է երիտասարդ արվեստաբանների գիտական ամենամյա նստաշրջանները:

Մանե Գառնիկի Մկրտչյանն Արարատ Աղասյանի ղեկավարությամբ պաշտպանած տասներորդ դիսերտատնոն է՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առկա ասպիրանտ: Ասպիրանտուրան ավարտելուց անմիջապես հետո՝ 2009-ին, նա աշխատանքի անցավ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 2013թ. նոյեմբերի 28-ին պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն «Սիմվոլիզմը հայ կերպարվեստում. XIX դարի վերջ - XX դարի սկիզբ» թեմայով և ստացավ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Չեմ կարող հպարտությունս թաքցնել ու չնշել, որ Մ.Մկրտչյանը 2014-ին աշխատանքի հրավիրվեց Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն՝

⁸ **Կիրակոսյան Մերի**, Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014, 190 էջ: Գրքի մասին տե՛ս **Ասատրյան Ա.**, Մերի Կիրակոսյան. «Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը» // «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, N 3 (645), էջ 261-262: **Քամայան Մ.**, Մերի Կիրակոսյան. Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը // «Պատմաբանասիրական հանդես», 2015, N 2 (199), էջ 260-263: **Ասատրյան Ա.**, Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը և հայ արվեստագիտության ապագան, «Գիտություն», սեպտեմբեր, N 9 (286), 2015, էջ 5:

որպես փոխտնօրեն գիտական գծով, սակայն երկու տարի անց կրկին վերադարձավ հարազատ ինստիտուտ:

Այսօր Մ.Մկրտչյանը սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող է: Զուգահեռաբար 2014-ից Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի փոխտնօրենն է մենեջմենթի գծով: Մ.Մկրտչյանը նշանակվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում պետական ավարտական քննական հանձնաժողովի նախագահ (2016), անդամ (2015):

ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ 2015թ. հրատարակվեց երիտասարդ հետազոտողի «Սիմվոլիզմ. արձագանքը հայ կերպարվեստում. XIX դարի վերջ – XX դարի սկիզբ» աշխատությունը⁹, որի խմբագիրն է Ա.Աղասյանը: Մ.Մկրտչյանը ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությունից թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովի անդամ է: Նա **ԿԱՆԹԵՂ** գիտական պարբերականի գլխավոր խմբագրի տեղակալն է:

Հռիփսիմե Էդուարդի Վարդանյանն Արարատ Աղասյանի ղեկավարությամբ պաշտպանած տասնմեկերորդ դիսերտանտն է՝ Երևանի պետական համալսարանի հայցորդ: 2014թ. հունիսի 19-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստը» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան¹⁰: Շուտով ՀՀ ԳԱԱ

⁹ **Մկրտչյան Մանե**, Սիմվոլիզմ. արձագանքը հայ կերպարվեստում (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015, 180 էջ: Գրքի մասին տե՛ս **Ասատրյան Ա.Գ.**, Մանե Մկրտչյան, Սիմվոլիզմ. արձագանքը հայ կերպարվեստում. XIX դարի վերջ – XX դարի սկիզբ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2016, N 1 (646), էջ 346-347:

¹⁰ 2015-ին եղել է Լիլիթ Մանասերյանի «Հայ բեմանկարչությունը 1950-1980-ական թթ.: Բեմանկարչական կերպարի, տարածական, կոմ-

արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս կտեսնի նրա մենագրությունը՝ նվիրված Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործության ուսումնասիրությանը:

Ներկայումս Հ.Վարդանյանը դասավանդում է Երևանի պետական համալսարանում և մեծացնում իր երեք բալիկներին՝ Անուշիկ, Էդուարդ և Մարկոս Գեղամյաններին, ովքեր միգրացե ապագայում կհամալրեն հայ արվեստաբանների շարքերը:

Մեր հեղինակների շարքը եզրափակում է արվեստագիտության թեկնածու **Մարտին Վարդանի Հարությունյանը**՝ հեղինակային խմբում միակը, ում ատենախոսության գիտական ղեկավարը Ա.Աղասյանը չէր: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի առկա ասպիրանտ Մ.Հարությունյանը 2013թ. հունիսի 6-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Ա.Աղասյանը նրա ատենախոսության պաշտոնական ընդդիմախոսն էր: Նույն տարվա սեպտեմբերին Մ.Հարությունյանն աշխատանքի հրավիրվեց Արվեստի ինստիտուտ՝ որպես գիտաշխատող:

Այսօր Մ.Հարությունյանն Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող է: Զուգահեռաբար 2015 թվականից դասավանդում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչն է: 2015-ից Մ.Հարությունյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահի տեղակալն է: Բազմիցս հանդես է եկել որպես պաշտոնական ընդդիմախոս¹¹:

պոզիցիոն և գունային լուծումների փոփոխությունները» թեմայով թեկնածուական ատենախոսության պաշտոնական ընդդիմախոսը:

¹¹ Եղել է Ֆարգադ Շիրնասաբզադեհի «Միր Մալասի ժայռապատկերները» (2014), Բագրատ Գյուլխասյանի «Հայկական ժամանակակից առանձնատների ինտերիերի դիզայնը» (2014), Լիլիթ Մելիքյանի «Դիզայնի ձևավորման գեղարվեստակիրառական և հասարակա-

Օրերս ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով, ՀՀ Նախագահի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ հրատարակվեց նրա անդրանիկ՝ «Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում» մենագրությունը:

Կերպարվեստագիտության ակնառու ժառանգության կողքին հիշատակության է արժանի Ա.Աղասյանի ներդրումը հայ պոեզիայում, թարգմանչական արվեստում: Քչերին է հայտնի, որ դեռևս պատանեկան տարիներին Ա.Աղասյանը ստեղծագործել է, բանաստեղծություններ հորինել հայոց և ռուսաց լեզուներով, որոնք, ցավոք, մինչ օրս անտիպ են, թեև նրա մանկության ընկերներից մեկը՝ ներկայումս Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևան քաղաքի ավագանու անդամ Հովհաննես Թոքմաջյանը, մինչ օրս անգիր արտասանում է դրանցից մի քանիսը:

... Ա.Աղասյանն ապրել է ընդհանուր առմամբ խաղաղ ու

կան նախադրյալները Հայաստանում 1960-80-ական թվականներին» (2014), Նարեկ Գասպարյանի «Երևանի սուպերմարկետների և մոլերի դիզայնը անկախության ժամանակաշրջանում» (2015), Համիդ Խոդադադի Ալեմիի «Իրանի Իսլամական հեղափոխության աֆիշի արվեստը» (2015), Վահդատ Յարմոհամադիի «Բիշապուր քաղաքի գեղարվեստական ժառանգության կրոնական սիմվոլիկան՝ Սասանյան զուգահեռներով» (2015), Ֆաթեմեի Դարջվարի «Քաջարյան շրջանի թեյարանային պատմողական որմնանկարչությունը» (2015), Արտակ Աղլամազյանի «Գրաֆիկական դիզայնի առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» (2016), Մահդի Ղասեմի Ալիաքբարզադեի «Հայ արվեստագետների ներդրումն Իրանի նոր և նորագույն շրջանների նկարչության մեջ» (2016) և Մաջիդ Ահմադ Յազդանփանահի «Քերմանշահի ժայռաքանդակները (մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մ.թ. 7-րդ դար)» (2016) թեմաներով թեկնածուականատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոսը:

ներդաշնակ կյանք, որը, սակայն, մթագնվել է անձնական երկու ողբերգություններով՝ երիտասարդ տարիքում մոր վաղաժամ մահով ու տարիներ անց՝ հոր կորստով. երկու խոր վիշտ, որ խոցեցին նրա զգայուն սիրտն անանց մորմոքով:

1991 թվականի հոկտեմբերի 1-ին՝ հոր՝ Վլադիմիր Աղասյանի ծննդյան 63-ամյակի օրը, ճակատագրի չար խաղով, ծանր ու անբուժելի հիվանդությունից հետո կյանքից հեռանում է 35-ամյա Ա.Աղասյանի մայրը՝ ընդամենը 61-ամյա Մարգարիտա Ասոյանը: Անդառնալի կորստյան խոր ազդեցության տակ ծընվում է «Реквием» բանաստեղծությունը, որը ներկայացնում ենք ստորև.

РЕКВИЕМ

Уходят годы. Вот и мать в гробу.
Холодный лоб. Отверстый зев могилы.
Уже отпели Божию рабу
И крышку гроба наглухо забили.

Прощай! Прости мне прошлые обиды!
Я был, быть может, нехорошим сыном...
Возьми с собой в последнюю обитель
Мой детский образ – добрый и красивый.

Когда-нибудь он снова оживет,
Когда-нибудь он снова возродится,
Моя душа опять к тебе прильнет
И на колени будет вновь проситься!

1991

2013-ին հրատարակվեց Ա.Աղասյանի «Դուսական պոեզիայի գանձարանից» ժողովածուն, որտեղ ներառվել են նմուշներ XIX – XX դարերի ռուսական պոեզիայից ու դրանց հայերեն թարգմանությունները: Դրանք մեծ հետաքրքրություն առաջաց-

րին գրականագետների և ռուսական պոեզիայի սիրահարների շրջանում: Արդյունքն աննախադեպ էր, քանի որ գործ ունենք հայոց և ռուսաց լեզուներին կատարելապես տիրապետող, մեր օրերում սակավ հանդիպող մտավորականի հետ:

Ուստի մեր ժողովածուն էլ եզրափակվեց Ա.Աղասյանի թարգմանչական գործունեությանն անդրադարձով:

Չմոռանանք նշել նաև, որ հենց Մարտին Հարությունյանն էլ, ով մասնագիտությամբ դիզայներ է, ձևավորել է այդ ժողովածուն:

Հավարտ խոսքիս ուզում եմ մեկ անգամ ևս շնորհավորել մեր սիրելի հորեղյարին, մաղթել բազմաթիվ հորեղյաններ և ասել. **«Օրհնվի ծնունդդ, մեր ավագ ընկեր ու թանկագին բարեկամ:** Երջանիկ եք Դուք՝ շրջապատված Ձեզ շատ սիրող ու շատ բարձր գնահատող մարդկանցով»:

Եվ **ՇՆՈՐՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ**, որ Ձեր անդուլ ու նվիրական ջանքերի շնորհիվ Արվեստի ինստիտուտը ստացել է նոր շնչառություն՝ դառնալով բոլորիս հարազատ օջախը, մեր երկրորդ տունը:

Սիրելի՛ ընթերցող:

Ասեմ, որ հորեղյանական տարվա նոյեմբերի 1-ին նախատեսում ենք իրականացնել մեր նվեր-անակնկալի երկրորդ՝ «երաժշտական» մասը. Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան դահլիճում տեղի կունենա ինքնատիպ գրական-երաժշտական երեկո՝ բացառապես ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտաշխատողների ուժերով: Շոպենի, Ռախմանինովի և Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործությունների կատարմամբ հորեղյարին կողջունի Երաժշտության բաժնի գիտաշխատող, հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր, արվեստագիտության թեկնածու, դաշնակահարուհի **Լիլիթ Արտեմյանը**: Երաժշտության բաժնի գիտաշխատող, հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր և երգեհոնահար **Հովհաննես Մանուկյանի** կատարմամբ կինչի իր պիեսը՝ գրված հատուկ այս հորեղյանի կապակցությամբ և այդ օրը հնչեցնելու նպատակով:

Նրա կատարմամբ կինչեն Բախի երգեհոնային ստեղծագործություններից մի քանիսը ևս:

Որպես մենակատար հորեյարին կողջունի «տանտերը»՝ Կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրեն, միջազգային մրցույթների դափնեկիր, արվեստագիտության թեկնածու, ալտահար **Վաչե Հովեյանը**:

Նիկոլ Գալանդեյանի տերյանական ռոմանսների կատարմամբ հանդես կգա երաժշտության բաժնի ասպիրանտ, բարիտոն **Գոռ Սալնազարյանը**՝ պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյանի նվագակցությամբ:

Սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող **Շուշանիկ Մուրադյանը** կասմունքի նմուշներ Ա.Աղասյանի թարգմանություններից:

Ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանի** կատարմամբ, Ա.Աղասյանի թարգմանությամբ, առաջին անգամ հայերեն կինչի Կիրիլ Մուլչանովի «Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ են» օպերայից Ժենկայի “Жди меня” ռոմանսը՝ գրված Կոնստանտին Սիմոնովի՝ իր ստեղծման 75-ամյակն այս տարի բոլորած “Жди меня” բանաստեղծության հիման վրա:

Իսկ տողերիս հեղինակի կատարմամբ առաջին անգամ հայերեն կինչի Ֆեոդոր Տյուտչևի “Я встретил Вас” բանաստեղծության հիման վրա գրված ռուսական հանրահայտ ռոմանսը՝ կրկին Ա.Աղասյանի թարգմանությամբ:

Կլինեն այլ անակնկալներ ևս...

Երեկոն կվարի Երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Գայանե Ամիրադյանը**:

Սիրելի՛ ընթերցող:

Իսկ այժմ խոսքը փոխանցում ենք մեր հորեյարի սաներին:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

31 օգոստոսի 2016թ.

ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԱՐՎԵՍՏԸ ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հետադարձ հայացքով փորձեմ վերականգնել այն օրը, երբ առաջին անգամ մտա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ: Դիմեցի իմ հարցով ինստիտուտի աշխատակցուհուն, և նա ինձ ուղեկցեց գիտքարտուղար Արարատ Աղասյանի մոտ: Երբ թափեցի դուռը և ներս մտա, անմիջապես հասկացա, որ դիմացս կանգնած բարձրահասակ, հպարտ կեցվածքով ու խելացի հայացքով երիտասարդը հենց այն մարդն է, ով կպատասխանի ինձ հուզող հարցերին: Նա շատ արագ հասկացավ խնդրանքս և իմ ապագա ատենախոսության համար առաջարկեց բավական հետաքրքիր թեմա՝ հետազոտել սփյուռքահայ ծաղրանկարիչ Ալեքսանդր Սարուխանի ստեղծագործությունը: Արդեն առաջին հանդիպման ժամանակ նա ինձ տեղեկացրեց թեմայի արդիականության, տեղեկատվություն քաղելու բազմաթիվ աղբյուրների մասին: Թեև հասակակիցներ ենք, սակայն որպես արվեստաբան իմ կայանալը ես ամբողջությամբ կապում եմ այդ երջանիկ պատահականության հետ, որը կողմնորոշիչ, հիմնավոր և ճակատագրական նշանակություն ունեցավ իմ արվեստաբանական կարիերայի համար:

Տարիներ անց, երբ կապն Արվեստի ինստիտուտի հետ դարձավ շարունակական, ընդդիմախոսում էի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդում պաշտպանվող ատենախոսությունները, մասնակցում ինստիտուտի կազմակերպած գիտաժողովներին, հրատարակում հոդվածներ և ուսումնամեթոդական ձեռնարկ (ձեռնարկի երաշխավորողն էր Ա.Աղասյանը), հասկացա, թե ինչու դեռևս գիտքարտուղարի պաշտոնում Արարատ Աղասյանն ինձ առաջարկեց վերլուծել սրամիտ ծաղրանկարներով և դիպուկ ուղեկից տեքստերով հայտնի աշխարհահռչակ գրաֆիկ, երգիծանկարիչ Սարուխանի արվեստը: Լինելով սրա-

միտ մարդ և զգալով երգիծանքի ամենանուրբ, անգամ անորսալի նրբերանգները՝ Ա.Աղասյանին հետաքրքրում էր հումորի լեզուն, որը, ըստ սահմանման, «ձեռքբերովի չէ, քանզի բնածին է և համարվում է ուղեղի ճկունության արտահայտություն»¹:

Հիրավի, ուղեղի բացառիկ ճկունության արտահայտություն են արվեստաբանական, հայագիտական, փիլիսոփայական բազմաթիվ վերլուծահետազոտական և ծանրակշիռ գիտական աշխատությունները, որոնք արվել են և դեռ պիտի արվեն Արարատ Աղասյանի բեղմնավոր գործունեության արդյունքում: Գիտնականի բազմակողմանի օժտվածությունն առավել լայնածավալ ներկայացնելու նպատակով վերը նշվածին հավելենք նաև բանաստեղծական ու թարգմանչական բացառիկ ձիրքը, որը ևս մի երանգ է հաղորդում նրա ստեղծագործական նկարագրին:

Մինչ ես Ե.Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում ջանասիրաբար մշակում էի Ալեքսանդր Սարուխանի արխիվը, թանգարանի սրահում կազմակերպում նկարչի աշխատանքներից կազմված ցուցահանդես, հրատարակում մենագրություն և տպագրում գիտական հոդվածներ, Արարատ Աղասյանը դարձավ իմ ատենախոսության գիտական ղեկավարը, Արվեստի ինստիտուտի տնօրենը, պաշտպանեց դոկտորական թեզը: Եվ որքան ակնառու էր գիտական ղեկավարիս մասնագիտական առաջընթացը, այնքան նա ավելի խստապահանջ էր դառնում ոչ միայն իմ, այլև ինքն իր հանդեպ:

Ճարտարապետի մասնագիտությամբ ստեղծագործող նկարիչ, մանկավարժ էի: Դա դեռ բավական չէր արվեստաբանությամբ զբաղվելու համար: Ա.Աղասյանի դիտողություններն ընդունում էի անվերապահորեն, քանզի հասկանում էի, որ ինձ բախտ է վիճակվել սովորելու իսկական գիտնականից, շփվելու բազմակողմանի զարգացած, լայն մտահորիզոն և փայլուն հիշողություն ունեցող, ռուսերենին ու հայերենին կատարելապես տիրապետող անձնավորության հետ: Ամենակարևորն այն էր,

¹ **3.Фрейд**, Остроумие и его отношение к бессознательному, М., Внешторгиздат, 1989, с. 247.

որ Ա.Աղասյանը երբեք լիովին գոհ չէր ո՛չ իր, ո՛չ էլ իմ աշխատանքով: Դա հազվագյուտ հատկություն է, որը ենթադրում է անվերջ կատարելագործվելու պահանջ, իսկ եթե նման մարդը նաև տաղանդավոր է, բազմակողմանի օժտված ու աշխատասեր, ապա այդ հատկությունն անհատին կտանի դեպի նորանոր նվաճումներ:

Ասվածիս ապացույցն է այսօրվա՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի բազմաբովանդակ վաստակը հայ արվեստագիտության, մշակույթի, հայագիտության ասպարեզներում: Նրա գրչին են պատկանում հայ կերպարվեստի ոչ միայն առանձին նշանակալի վարպետների ստեղծագործության համակողմանի վերլուծությունները, հայ կերպարվեստի զարգացման ուղիները՝ ժամանակագրական լայն ընդգրկումով, այլև արվեստի ու մշակույթի համար հատուկ, հիմնարար, կոթողային նշանակություն ունեցող, աշխարհահռչակ ճանաչում և վաստակ վայելող Վարդգես Սուրենյանցի, Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի ստեղծագործության մանրագնին ուսումնասիրությունը և նրանց դերն ու նշանակությունը ազգային և համաշխարհային մշակույթի համապատկերում:

Վերադառնանք 2009 թվական: Պատահաբար տեղեկանում եմ, որ Վարդգես Սուրենյանցի 150-ամյա հոբելյանի կապակցությամբ հուշատախտակ է բացվել նկարչի հայրենիքում՝ Ախալցխայում (քաղաքի պատմության մեջ հայատառ անդրանիկ հուշատախտակը), և որ այդ նշանակալի իրադարձության ժամանակ ու դրան հաջորդած հոբելյանական երեկոյի ընթացքում հատուկ ելույթներով են հանդես եկել Արվեստի ինստիտուտի տնօրենը և Երևանից ժամանած մի շարք մտավորականներ:

«Այդ տեսակետից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Սուրենյանցի՝ հայ ճարտարապետությանը վերաբերող ձեռագիր և տպագիր հոդվածները, որոնցում նկարիչը հիմնավորում է հայկական ճարտարապետության ինքնատիպությունը՝ չժխտելով պատմական երկարատև զարգացման ընթաց-

քում բյուզանդական, պարսկական, վրացական և արաբական ճարտարապետության հետ եղած փոխադարձ կապը», - կարդում ենք ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի՝ մեծանուն հայ նկարչի հոբելյանական երեկոյին հնչեցված զեկուցումից²:

Ուղևորվել երկու օրով Ջավախք, անցնել մոտ 600 կիլոմետր ճանապարհ՝ հարգանքի տուրք մատուցելու արժանավոր արվեստագետի հիշատակին ու քաջալերելու նրա համաքաղաքացիներին, համաձայնեք, որ շատ ու շատ պաշտոնատար անձինք տարբեր պատճառներով կխուսափեին նման ճանապարհորդությունից, իսկ Աղասյանը... Եվս մի երանգ ճշմարիտ արվեստագետի մարդկային նկարագրին:

Վարդգես Սուրենյանցի ծանրակշիռ ներդրումը նկարչության, գծանկարի, գրքի գեղարվեստական ձևավորման, բեմահարդարման ասպարեզներում բազմիցս լուսաբանվել է Արարատ Աղասյանի վերլուծահետազոտական աշխատություններում:

Ա.Աղասյանը կարևորում է Սուրենյանցի գործերում արտացոլված թեմատիկ և կերպարային բովանդակության, ազգային մտածողության, գունահամակարգի, տեխնիկական կատարման հետ կապված մի շարք խնդիրներ՝ նկարչի առանձին աշխատանքների օրինակներով, դրանց մանրախույզ քննությամբ: Վերլուծություններում Ա.Աղասյանը դրսևորում է արվեստի նուրբ զգացողություն, ստեղծագործության անորսալի նրբերանգները նկատելու բացառիկ ընդունակություն:

Արարատ Աղասյանի մասնագիտական և ընդհանուր լայն էրուդիցիան նրան հնարավորություն է տալիս խտացված, ընդգրկուն ներկայացնելու ժամանակաշրջանի արվեստի զանազան հովերի, նախընտրությունների, անհատական որոնումների այն մթնոլորտը, որում ձևավորվում էր Սուրենյանցի արվեստը ոչ միայն ազգային, այլև համաշխարհային ընդհանուր համայնապատկերում: «Խոսելով Սուրենյանցի արվեստի գաղափարա-

² **Արարատ Աղասյան**, Վարդգես Սուրենյանց-150, «Գիտության աշխարհում», N2, 2010, էջ 2:

գեղագիտական հիմքերի մասին՝ հավելենք, որ 1890-ական և հատկապես 1900-ական թվականներին նրա աշխատանքներում իրապաշտական միտումները երբեմն ընդմիջվել կամ «թափանցվել» են խորհրդապաշտական մտածողության ու «մոդեռն» ոճի արձագանքներով՝ կերպարային-բովանդակային բազմիմաստ շերտերով ու գույներով, գունագծային ոճավոր՝ դեկորատիվ-զարդային և օրնամենտալ գեղաճաշակ տարրերով»³։ Այսպես է բնորոշում հայ վարպետի տեղն ու դերը եվրոպական արդի արվեստում պրոֆեսոր Աղասյանը, ով նախորդ հետազոտողներից առավել ամբողջական վերլուծության է ենթարկել հայ մեծանուն նկարչի լավագույն գործերի բովանդակային իմաստը, կերպարային համակարգը, գունային և ձևաբանական կառուցվածքը։

Կատարված հետազոտություններն արժևորվում են ոչ միայն նրանով, որ ընթերցողը մանրամասնորեն ծանոթանում է մեծ վարպետի վաղ շրջանի ստեղծագործությանը՝ վերջինիս XIX դարի վերջի և XX դարի սկզբի կերպարային և զգացմունքային բովանդակությանը, նվաճումներին և բացթողումներին, այլև խտացված և ընդգրկուն պատկերացում ստանում կերպարվեստում իշխող այլ հոսանքների ու դրանց փոխազդեցության մասին։

«Նոր շրջանի հայ կերպարվեստը մի յուրահատուկ «արշիպելագ» է, անհատ կատարողների ստեղծագործություններից կազմված մի խճանկար, որտեղ խորհրդապաշտական կերպարներով ու «մոդեռն» ոճով էին տարված նաև Ե.Թադևոսյանը, Մ.Սարյանը, Հ.Գյուրջյանը, Գ.Յակովովը, Վ.Գայֆեճյանը և այլք, թեպետ նրանցից ոչ մեկի համար թե՛ սիմվոլիզմը և թե՛ «մոդեռնը» երբեք չդարձան ստեղծագործական խորագրու, կայուն, հաստատ համոզմունք,- գրում է հայ արվեստի փայլուն գիտակ Ա.Աղասյանը ու եզրակացնում,- ըստ էության, 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի հայ կերպարվեստում Սուրենյանցը ոչ միայն

³ Արարատ Աղասյան, Վարդգես Սուրենյանց, Նշանավոր ճեմարանականներ, Մայր աթոռ Ս.Էջմիածին, Ս.Էջմիածին, 2009, էջ 406։

պատմանկարի հիմնադիրն է, այլև միակ խոշոր ներկայացուցիչը»⁴:

Պրպտելու, հետազոտելու, որոնելու ծգտումը նոր պատուհան բացեց գիտնականի առջև: Պետական և մասնավոր թանգարաններում ու արխիվներում պահվող ստեղծագործությունների, ցուցահանդեսների կատալոգների, ձեռագրերի ու վավերագրերի, հին ու նոր գեղարվեստական մամուլի, հայ և օտարազգի արվեստագետների գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրության արդյունքում Ա.Աղասյանը կատարում է փաստական բազմաթիվ ճշտումներ, պարզաբանում բազմաթիվ վիճահարույց խնդիրներ ու հայտնաբերում Վարդգես Սուրենյանցի դեռևս անհայտ ստեղծագործության մասին նոր տեղեկություններ: Խոսքը Վ.Սուրենյանցի «Հառաչանք առ երկինս» մեծադիր կտավի՝ Հարություն Չմշկյանի նկարագրության մասին է («Արձագանք», Թիֆլիս, 1897), որտեղ պատկերված է 1896 թվականին առավել դաժան ու բիրտ ձևերով իրականացված հայոց ջարդերից փախչող, հիվանդ ու վիրավոր մարդկանցից բաղկացած մի խումբ, որոնք «հուսահատ կանգ են առնում ու սրտառույզ գոչում, դեպի երկինքը հառաչում ծնկաչոք...»⁵:

Նման ձևով է նկարագրում «1896 թվականը» վերնագրով պատմառի բովանդակությունը նաև Սարգիս Բաշինջաղյանը: Հիմք ընդունելով միևնույն թեմայի նմանատիպ պատկերման վերաբերյալ երկու հեղինակների գրավոր վկայությունները՝ Ա.Աղասյանը հնարավոր է համարում, որ Հարություն Չմշկյանի (1897) և Սարգիս Բաշինջաղյանի (1901) հոդվածներում խոսվում է Վարդգես Սուրենյանցի վրձնած միևնույն կտավի մասին:

Անհայտ կտավի («Հառաչանք առ երկինս» կամ՝ «1896 թվականը») գոյությունը փաստող Արարատ Աղասյանի հայտնաբերած առաջին վկայության մեջ, որը գրվել է նույն մեծադիր կոմպոզիցիայի մասին Սարգիս Բաշինջաղյանի հայտնի նկարա-

⁴ Նույն տեղում, էջ 408:

⁵ **Արարատ Աղասյան**, Վարդգես Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին: Տե՛ս Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի զեկուցումները, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Երևան, 2011, էջ 81:

գրությունից (1901) դեռևս չորս տարի առաջ՝ 1897-ին, հոդվածագիրը՝ Հարություն Չմշկյանը, նաև գրում է, որ յուղաներկ աշխատանքը շրջանակաձև նկարազարդված է: Այս տեղեկությունը չգիտես ինչու անտեսված է Բաշինջաղյանի հոդվածում: Ըստ Չմշկյանի. «Պատկերի չորս կողմը վխտում են վելուսիպեդներ, էլեկտրական մեքենաներ և այն բոլորը, ինչով այդքան պարծենում է դարավերջի լուսավորված Եվրոպան»⁶:

Ա.Աղասյանի հայտնաբերած մեծադիր պաստառի նկարագրությունում Սուրենյանցը փորձել է համատեղել գեղանկարի և պլակատի ներգործության եղանակները, աննախադեպ մի համադրում այդ շրջանի ոչ միայն հայ, այլև եվրոպական կերպարվեստի առաջադեմ վարպետների համար:

«Սա չափազանց ուշագրավ և միաժամանակ անսպասելի նորություն է, եթե հաշվի առնենք, որ Սուրենյանցն առավել քան անտարբեր էր «տեխնիկական առաջընթացի» հանդեպ և իր կտավներում մշտապես խուսափել է ուրբանիստական կամ տեխնիցիստական թեկուզ աննշան մոտիվներից»⁷, - կարդում ենք հոդվածի էջերում: Շարունակելով՝ հեղինակը կերպարվեստի տարբեր տեսակների, այն է՝ գեղանկարի և գրաֆիկայի համադրումը միևնույն կտավում «չափազանց ուշագրավ և միանգամայն անսպասելի նորություն է...» համարում՝ հավելելով, որ «XIX դարավերջին այդ մոտիվները (գեղանկարի և պլակատի համադրումը) դեռևս չէր ընտելացրել նույնիսկ եվրոպական առաջադեմ կերպարվեստը»⁸:

Յուրաքանչյուր երևույթի ու փաստի Ա.Աղասյանը նայում է թե՛ անցյալում եղած տեսակետների, թե՛ ժամանակակից արվեստաբանի հայացքով: Նա ցույց է տալիս ոչ միայն Սուրենյանցի առնչությունը, կապը սիմվոլիզմի հետ, այլև նրա անձնական ներդրումը նկարչական սիմվոլիզմի կայացման գործում: «Միայն մեկ-երկու տասնամյակ հետո դրանք դրվեցին գեղարվեստական շրջանառության մեջ, իսկ ապագայապաշտ ֆուտուրիստ-

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 82:

⁸ Նույն տեղում:

ների արվեստում բացառիկ արժեք և նշանակություն ստացան», - գրում է արվեստաբանը⁹:

Անշուշտ, նման համարձակ համադրումը խոսում է հայ արվեստագետ-նկարիչ Վարդգես Սուրենյանցի նոր եղանակների որոնման մասին: Նկարի հեղինակը հակադրության միջոցով փորձում էր հրապարակախոսական առոգանություն հաղորդել կոմպոզիցիային, ամոթանք տալ արևմտյան քաղաքակիրթ հանրությանը՝ գյուտարարներին, որոնց անտարբեր հայացքի ներքո սուլվան Համիդը մի ամբողջ ազգ էր կոտորում: Նշելով հանգամանքները, որոնց դրդամաբ նկարիչը փորձեց հանրության ուշադրությունը հրավիրել ցեղասպանության խնդրին, Ա.Աղասյանը փաստում է, որ արտահայտիչ միջոցներով ու այլաբանական եղանակով, հակադրությամբ լուծված, մարդկության խղճին դիմող ստեղծագործություններ արևմտյան կերպարվեստում ուշ երևան եկան: Դրանք իրենց ծայրահեղ դրսևորումը գտան միայն Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական էքսպրեսիոնիստների՝ պատերազմի արհավիրքները պատկերող ու պատերազմի դեմ բողոքող աշխատանքներում:

«Առավել ևս ցավալի է, որ Սուրենյանցի այդ մեծադիր, իր ժամանակից առաջ անցած, հայ կերպարվեստում եզակի ստեղծագործության ճակատագիրը ցայսօր անհայտ է, - ափսոսանքով նշում է Արարատ Աղասյանը ու հուսադրող ինտոնացիայով ավարտում ասելիքը, - Եթե հանգամանքների բերումով այն չի ոչնչացել, ապա մեր պարտքն է որոնել-գտնել Սուրենյանցի երբևէ վրձնած այդ խոշորագույն յուղաներկը»¹⁰:

Անհայտ կտավի հետազոտությունն արժևորվում է ոչ միայն նրանով, որ նոր էջ է բացվում Սուրենյանցի ծանրակշիռ ժառանգության հետազա ուսումնասիրության խնդրում, այլև նրանով, որ այն ևս մի օղակ է մոդեռնիստական ուղղություննե-

⁹ **Աղասյան Ա., Ասատրյան Ա.**, Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 69:

¹⁰ **Արարատ Աղասյան**, Վարդգես Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին: Տե՛ս Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի զեկուցումները, էջ 82:

րին հարող Սուրենյանցի նորարարական փորձերից կազմված շղթայի մեջ:

Յուրաքանչյուր ազգային արվեստի ուժը ստեղծագործական անհատականությունների, նրանց անկրկնելիության մեջ է: Ճշմարիտ արվեստագետը միշտ էլ հայտնագործող է, գյուտարար, նախակարապետ. նա ճանապարհ է հարթում նոր ուսումնասիրությունների համար, վճռում նորանոր խնդիրներ, բացահայտում անհայտի անսպառ, հավերժական հանքաշերտերը:

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԻ ՎԱՍՏԱԿԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՌԵՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի հետ իմ ծանոթությունը տեղի է ունեցել 1999-ին, երբ ես ընդունվեցի Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա և դարձա Ա.Աղասյանի բազմաքանակ ուսանողուհիներից մեկը: Ա.Աղասյանի ղեկավարությամբ գրեցի իմ առաջին կուրսային աշխատանքը՝ «Աթենքի Ակրոպոլիս» թեմայով:

Ա.Աղասյանը կրթել է ուսանողների մի քանի սերունդների, նրա ուսումնական, կրթական «դարբնոցով» անցել են շատ արվեստաբաններ: Վաստակաշատ գիտնականի կերպարը՝ ստեղծագործական, գիտական հարուստ փորձով, կերպարվեստի ոլորտի ձեռքբերումներով, նվաճումներով հանդերձ, անգնահատելի է իր արվեստի երիտասարդ տեսաբանների համար դաստիարակող, ոգևորող և կրթող նշանակությամբ: Միայն իրեն հատուկ կրթական մեթոդով և մոտեցմամբ Ա.Աղասյանը երիտասարդ արվեստաբաններին սովորեցնում է մտածել, հասկանալ ստեղծագործությունը և վերլուծել «արվեստի լեզվով»: Դեռևս ուսանողական տարիներին իրապաշտական գեղանկարչության հանդեպ դրսևորված իմ նախընտրությունները, հետաքրքրություններն արժանացան մեծ գիտնականի հավանությանը, ով հետագայում ևս մշտապես աջակցեց ինձ իր արժեքավոր խորհուրդներով:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան գերազանցությամբ ավարտելուց հետո՝ 2004-ին, ես ընդունվեցի ակադեմիայի ասպիրանտուրա՝ արտադրությունից չկտրված, և իմ ատենախոսության գիտական ղեկավարը դարձավ Արարատ Աղասյանը: Այդ օրվանից նրա անվան հետ կապվեց իմ գիտաստեղծագործական հետագա գործունեությունը:

Արվեստագիտության բնագավառում իմ առաջին քայլերը կատարել եմ հայ արվեստի բոլոր բնագավառներն ընդգրկող, պատմատեսական հետազոտություններ կատարող ՀՀ միակ արվեստագիտական կենտրոնում՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում: 2005–ին ես աշխատանքի անցա Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

Անցան տարիներ. 2013-ի նոյեմբերի 14-ին Ա.Աղասյանի գիտական ղեկավարությամբ ես պաշտպանեցի իմ թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված էր Փանոս Թերլեմեզյանի կյանքին և ստեղծագործությանը, իսկ մեկ տարի անց՝ 2014-ին ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող ԵԳԱԾ ծրագրի շրջանակներում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ հրատարակվեց իմ անդրանիկ՝ «Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը¹, որի գիտական խմբագիրը, բնականաբար, պրոֆեսոր Ա.Աղասյանն էր:

2014-ից ես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ եմ, որի նախագահն է Ա.Աղասյանը...

Այսօր ես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող

¹ Տե՛ս **Մերի Կիրակոսյան**, Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 190 էջ: Իմ առաջին մենագրության մասին տե՛ս **Ասատրյան Ա.**, Մերի Կիրակոսյան. Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը //«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, N 3 (645), էջ 261-262: **Քամայան Մ.**, Մերի Կիրակոսյան. Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը //«Պատմաբանասիրական հանդես», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, N 2 (199), էջ 260-263: **Ասատրյան Ա.**, Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը և հայ արվեստագիտության ապագան, «Գիտություն», սեպտեմբեր, N 9 (286), 2015, էջ 5:

եմ, բաժնի քարտուղարը: Ի դեպ, այսօր մեր բաժնի վարիչն է Արարատ Աղասյանը...

Անգնահատելի է Ա.Աղասյանի ավանդը երիտասարդ մասնագետների պատրաստման, արվեստագիտության բնագավառում նրանց կայանալու, զարգանալու տեսանկյունից, ինչպես նաև ճիշտ խորհուրդներով սատարելու և գոտեպնդելու առումով: Ծանրակշիռ է նրա աշխատանքը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Բավական է նշել, որ նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է 13 թեկնածուական ատենախոսություն. Ա.Աղասյանը գիտական դպրոցի հիմնադիր է. նոր և նորագույն շրջանի կերպարվեստի ուսումնասիրության գործին են նվիրվել նրա նախկին ասպիրանտները, ովքեր այսօր արդեն կայացած արվեստաբաններ են:

2004 թվականին Արարատ Աղասյանի աջակցությամբ և նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տարբեր ստորաբաժանումների երիտասարդ գիտաշխատողներից, ասպիրանտներից և հայցորդներից (այդ թվում՝ հրավիրված անդամներ ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախներից) կազմավորվեց երիտասարդ արվեստաբանների խորհուրդը, որն իր գործունեության շուրջ 12 տարիների ընթացքում մշտապես զգացել է պրոֆեսոր Ա.Աղասյանի հոգաձությունը և օգնությունը: Ի դեպ, տասնամյակներ առաջ Ա.Աղասյանը եղել է Արվեստի ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների գիտխորհրդի նախագահը²:

Սկզբնական շրջանում խորհրդի անդամները 13-ն էին, իսկ այսօր՝ 54-ը: Այս երիտասարդական կառույցն իր հաստատմամբ և նման արագընթաց զարգացմամբ պարտական է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրինությանը՝ նրա անկողմնակալ, օբյեկտիվ մարտավարությանը և երիտասարդ սերնդի գիտական աճը խթանող գործառույթին:

Ես սա կարող եմ ասել ամենայն պատասխանատվությամբ, քանի որ 2010 թվականից խորհուրդը ղեկավարում եմ

² Ասատրյան Ա., ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, էջ 90:

ես: Այս ընթացքում երիտասարդ արվեստաբանների խորհուրդը գումարել է գիտական 11 նստաշրջան, տպագրվել են բոլոր նստաշրջանների նյութերի ժողովածուները: Ի դեպ, չնայած իր զբաղվածությանը, Ա.Աղասյանը միշտ ժամանակ է գտել մասնակցելու մեր նստաշրջանների նիստերին, լսելու մեր զեկուցումներն ու ուղղորդելու մեզ իր արժեքավոր խորհուրդներով:

Անկասկած, երիտասարդ արվեստաբանների գիտաստեղծագործական աճի համար Ա.Աղասյանն ինստիտուտում ստեղծել է բոլոր պայմանները: Եվ եթե այսօր ակադեմիական ինստիտուտներից շատերում ցավոտ հարց է երիտասարդների արտահոսքը, ծառացած է գիտական անձնակազմի սերնդափոխության խնդիրը, ապա մեզ մոտ ճիշտ հակառակն է. Արվեստի ինստիտուտը երիտասարդ գիտաշխատողների համար դարձել է հարազատ օջախ, երկրորդ տուն, առանց որի մենք չենք պատկերացնում մեր հետագա գիտական գործունեությունը:

Կարծում եմ, որ գիտության ճանապարհին ընտրած, այդ բնագավառում իր առաջին, դեռևս անվստահ քայլերը կատարող երիտասարդների համար անչափ կարևոր և կենսական են ավագ սերնդի, կայացած, բազմափորձ գիտնականների օժանդակությունը և աջակցությունը: Այդ առումով երիտասարդ արվեստաբանների ստեղծագործական, գիտական զարգացմանը միտված պրոֆեսոր Ա.Աղասյանի դերը և գործունեությունը կարող են դիտարկվել որպես բացառիկ օրինակելի երևույթ:

Նա վստահում է երիտասարդներին և սիրով իր փորձն ու գիտելիքները փոխանցում մեզ: Մենք շատ բան ենք սովորում նրանից: Նա միշտ իր խորհուրդներով պատրաստ է ուղղորդելու մեզ:

* * *

Ծանրակշիռ է Արարատ Աղասյանի ներդրումը արևմտահայ կերպարվեստի ուսումնասիրության գործում: Նրա աշխատությունների շարքում իրենց արժանի և կարևոր տեղն են գրավում արևմտահայ կերպարվեստի պատմության վերաբերյալ հետազոտությունները: Ի տարբերություն իր նախորդների՝ Եղիշե Մարտիկյանի և Ռուբեն Դրամբյանի, ովքեր հիշատակել են

ընդամենը 8-9 արևմտահայ արվեստագետների անուններ, Ա.Աղայանը գիտական շրջանառության մեջ է դրել տասնյակ նոր անուններ:

XIX-XX դարերի հայ կերպարվեստի պատմության էջերում իր ուրույն տեղը զբաղեցնող արևմտահայ կերպարվեստը մեզանում բավարար ուսումնասիրված չէ: Սակավաթիվ են XIX դարի արևմտահայ արվեստագետների մասին տեղեկությունները, քիչ են պահպանված և մեզ հասած ստեղծագործությունները³:

Այս բնագավառում կարևոր հանգրվան է 2009 թվականին ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ պետական պատվերի շրջանակներում հրատարակված «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» հիմնարար աշխատության «Արևմտահայ կերպարվեստը» ենթաբաժինը⁴:

Երևան բերելով նոր փաստեր՝ վաստակաշատ գիտնականն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել տասնյակ մոռացված անուններ և ստեղծագործություններ:

Հետազոտողի ուշադրության կենտրոնում է հայտնվել ուսումնասիրության կարոտ արևմտահայ 28 արվեստագետների (Մանասներ, Աբդուլլահ (Աբդուլլահյան) եղբայրներ՝ Վենսան (Վիչե), Գևորգ և Հովսեփ, Հովհաննես Պեյզատ (Ումետ Բեհզատ), Աբրահամ Սաքայան, Պետրոս Սրապյան, Մամբրե (Կարապետ) Մարկոսյան, Տիրան Չրաքյան (Ինտրա), Մելքոն Տիրացույան (Տիրատուրյան), Սոփոն Պեգիրճյան, Հովհաննես Սա-

³ 2004 թվականին Ստամբուլում թուրքերեն և անգլերեն լեզուներով հրատարակվեց Գարո Քյուրքմանի՝ 1600-1923 թթ. Օսմանյան կայսրությունում ծնված հայ արվեստագետներին ներկայացնող երկհատոր գիրքը, որը խորացրեց մեր գիտելիքները XIX դարի արևմտահայ կերպարվեստի մասին, տե՛ս **Kürkman G.** Armenian painters in the Ottoman Empire (1600-1923). In two volumes Istanbul, Matusalem publications, 2004, volume 2, 913 p.

⁴ Ա.Աղայանի «Արևմտահայ կերպարվեստ» վերտառությամբ աշխատությունը ներկայացված է նաև համահեղինակային մեծահատոր «Հայ արվեստի պատմություն» գրքում, տե՛ս **Աղայան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ.,** Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2009, էջ 280-285:

գրգյան, Հովհաննես Աճեմյան, Դավիթ Թրյանց, Պետրոս Աղամյան, Հարություն Պաղտատյան, Հարություն Հեքիմյան, Մկրտիչ Ճիվանյան, Ճանիկ Արամյան, Պողոս Թաթիկյան, Տելեմաք Էքսերճյան, Սիմոն Յազճյան և Հարություն Հեքիմյան) կյանքի և ստեղծագործության հետազոտությունը:

Աշխատության վերոնշյալ բաժինն Ա.Աղասյանը սկսում է Մանասների նկարչական ընտանիքի (Ալեքո (Ալեքսանդր), Գասպար, Մաքսուդ, Սեպուհ, Ռուբեն, Ժոզեֆ (Հովսեփ) շառավղի ներկայացմամբ: Առաջին անգամ համեմատական քննության մեջ են դրվել XIX դարի կեսերին՝ 1830-1860-ական թվականներին, արևելահայ և արևմտահայ կերպարվեստի բնորոշ միտումները, գեղարվեստական համանման և յուրահատուկ երևույթները⁵: Հեղինակը դիպուկ համեմատականներ է անցկացրել Ռուբեն Մանասի և Հակոբ Հովնաթանյանի՝ միևնույն տարում ստեղծված տարբեր դիմանկարների միջև:

Հարկ է նշել, որ ավելի վաղ՝ խորհրդային շրջանում՝ 1971-ին, արվեստաբան Եղիշե Մարտիկյանն իր «Հայկական կերպարվեստի պատմություն» գրքի Ա հատորում անդրադարձել է արևմտահայ արվեստագետներին՝ շոշափելով 8 նկարիչների (Մանասներ՝ Ռուբեն, Սեպուհ, Գասպար, Ալեքսանդր և Ժոզեֆ, Ումետ Բեհզատ, Աբրահամ Սաքայան, Պետրոս Սրայյան) կյանքին և արվեստին առնչվող փաստեր⁶:

Արժևորելով Ե.Մարտիկյանի՝ արևմտահայ կերպարվեստագետներին նվիրված անդրանիկ ուսումնասիրությունը, այնուամենայնիվ արձանագրում ենք որոշ բացթողումներ: Համադրելով երկու հեղինակների՝ Ե.Մարտիկյանի և Ա.Աղասյանի աշխատությունները՝ նկատում ենք, որ Ա.Աղասյանը գեղանկարիչ Ումետ Բեհզատին նվիրված հատվածում նշում է. ««Խաչից իջե-

⁵ Տե՛ս **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում (1828-1991) (արվեստագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր), Երևան, 2007, էջ 4:

⁶ Տե՛ս **Մարտիկյան Ե.**, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1971, էջ 190-204:

ցումը» և այլ գործերը ընդօրինակվել են եվրոպական դասական նկարիչների՝ Ռաֆայելի, Տիցիանի, Տինտորետոյի, Ռիբերայի, Ռուբենսի և այլոց աշխատանքներից»⁷: Մինչդեռ Ե.Մարտիկյանի մոտ բացակայում են ստեղծագործությունների ինքնուրույն վերլուծությունները:

Ե.Մարտիկյանի վերոնշյալ աշխատության մեջ առկա են փաստագրական որոշ անճշտություններ՝ կապված նկարիչ Աբրահամ Սաքայանի հետ: Հեղինակը թյուրիմացաբար կարծում է, որ Փարիզում Ա.Սաքայանը սովորել է Ժյուլիենի գեղարվեստի ակադեմիայում. սա անշուշտ սխալմունք է, քանի որ ակադեմիան բացվել է միայն 1868-ին⁸: Ա. Սաքայանի վերաբերյալ դրվագում Ա.Աղասյանը ներկայացնում է նկարչի մի գործի անվանման ճիշտ տարբերակը՝ «Նիկողայոս Զորայանի դիմանկարը», մինչդեռ Ե.Մարտիկյանը սխալմամբ նշում է «Նիկողայոս Զոկոյան»⁹:

Մեծարժեք է, որ Պետրոս Սրապյանին անդրադարձող շարադրանքում Ա.Աղասյանը մատնանշում է Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող նկարչի աշխատանքների մասին, ինչպես նաև ակնարկում Պ.Սրապյանին վերագրված անստորագիր գործերի վերաբերյալ:

Նկատում ենք, որ Ե.Մարտիկյանի ուսումնասիրության մեջ բացակայում են Սրապյանի ծննդյան և մահվան տարեթվերի հետ կապված փաստերը, որոնք լրացվում են Ա.Աղասյանի կողմից:

Նշանակալի է, որ Ա.Աղասյանը հիշատակում է Պ.Սրապյանի մասնակցության հանգամանքը 1882-ին Բերայի Ալքազար հանրային այգում կազմակերպված 200 ստեղծագործություն ընդգրկող ընդարձակ պատկերահանդեսում՝ գիտական շրջանառության մեջ դնելով ժամանակի մամուլում հրատարակված հոդվածները: Միաժամանակ հեղինակն առաջ է քաշում վար-

⁷ **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատարակչություն, 2009, էջ 31:

⁸ Նույն տեղում, էջ 238:

⁹ Տե՛ս **Մարտիկյան Ե.**, նշվ. աշխ., էջ 200:

կաճ, ենթադրություն՝ տվյալ ցուցահանդեսին մասնակցած նկարիչների շարքում նշելով ոմն Չիրաչու նկարիչներից մեկին, և պարզաբանում, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է կատակերգու դերասան Հովսեփ Չերաչեին¹⁰:

«Ծանոթագրություններ» բաժնում Աղասյանն անդրադառնում է Պետրոս Ադամյանի լավագույն կենդանագրերից մեկին՝ «Մամբրե Մարկոսյանի դիմանկարին» (1882), որը տարիներ հետո սխալ թվագրմամբ (1885) արտատպվել է Թեոդիկի տարեցույցի մեջ¹¹:

Պետք է վստահաբար փաստել, որ առանձնակի գնահատելի է այն հանգամանքը, որ Ա.Աղասյանն արևմտահայ կերպարվեստին նվիրված իր ուսումնասիրություններում ճշգրտում է գրականության մեջ շրջանառվող, ժամանակին սխալ թվագրված թյուր տեղեկությունները, մասնավոր վրիպակները և գիտական լուրջ հիմնավորումներով լրացնում է այդ բացը՝ ներմուծելով հավաստի տվյալներ: Մինևույն ժամանակ նա մատնանշում է արևմտահայ արվեստագետների այն եզակի գործերը, որոնք այժմ պահվում են ինչպես Հայաստանի ազգային պատկերասրահում, այնպես էլ այլ թանգարաններում և մասնավոր հավաքածուներում:

«Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» ստվարածավալ աշխատության արևմտահայ կերպարվեստի պատմությանը նվիրված հատվածը եզրափակվում է բեմանկարչության ասպարեզում ակնառու նկարիչների հիշատակմամբ՝ Հարություն Պաղտատյան, Հարություն Հեքիմյան, Մկրտիչ Ճիվանյան: Ընդգծում է նաև նույն շրջանում արևմտահայ գրաֆիկայի հիմքերը դրած վիմագրության վարպետներ Ճանիկ Արամյանի և Պողոս Թաթիկյանի անունները և անդրադառնում 1860-1870-ական թվականներին Կ.Պոլսում լույս ընծայվող «Մե-

¹⁰ Տե՛ս **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 238:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 239:

ղու» և «Թատրոն» երգիծաթերթերում հանդիպող Տելեմաք Էքսերճյանին, Սիմոն Յագճյանին և Հարություն Հեքիմյանին¹²:

Բազմավաստակ գիտնականի ուսումնասիրությունների դիտակետում է հայտնվել նաև պոլսահայ շնորհալի գեղանկարիչ Տիրան Չրաքյանի (Ինտրա) կյանքի և ստեղծագործության անհայտ էջերը բացահայտող հետազոտությունը:

Հայ գրականության պատմության մեջ Տիրան Չրաքյանը հանդես է եկել որպես շնորհալի գրող, բանաստեղծ, քննադատ և գեղագետ: Գրականության ասպարեզում նրա թողած ավանդը և գրական ստեղծագործություններն ուսումնասիրված և ներկայացված են¹³: Ակնառու արվեստագետի մասին քիչ են անդրադարձները, սակավ են ուսումնասիրությունները, գրվել են միայն սակավաթիվ հոդվածներ: Նկարչի արվեստի համապարփակ ներկայացման առումով կրկնակի կարևորվում է Ա.Աղասյանի «Տապալված նոճին. Տիրան Չրաքյանի (Ինտրա) նկարչությունը» հոդվածը¹⁴: Հեղինակը տալիս է կենսագրական կարևոր տվյալներ, ներկայացնում է Ինտրայի որպես նկարիչ ձևավորվելու ճանապարհը՝ հենվելով փաստագրական տվյալների վրա, խոսում նկարչի՝ գեղանկարչության բնագավառում հետաքրքրություններ-

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 35-36:

¹³ 2003 թվականին լույս ընծայվեց գրականագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Պետրոս Դեմիրճյանի մենագրությունը, տե՛ս **Դեմիրճյան Պ.**, Վարք Ինտրայի, Երևան, «Առերեսում»-Անի հրատարակչություն, 2003, 176 էջ, որից երկու տարի անց՝ 2005-ին, հրատարակվեց գրականագետ, բանաստեղծ, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Ավետիսյանի աշխատությունը, տե՛ս **Ավետիսյան Լ.**, Տիրան Չրաքյանի պոետիկան, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 2005, 160 էջ: 2014-ին «Կանթեղ» գիտական պարբերականում լույս տեսավ գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Աիդա Մարտիրոսյանի՝ Տիրան Չրաքյանին նվիրված հոդվածը, տե՛ս **Մարտիրոսյան Ա.**, Ներաշխարհը միստիկական անուրջներում. Ինտրա //Կանթեղ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2014, N 2-3, էջ 64-81:

¹⁴ Տե՛ս **Աղասյան Ա.**, Տապալված նոճին. Տիրան Չրաքյանի (Ինտրա) նկարչությունը // Մեծ եղեռն-90, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, «Դպիր» հրատ., 2005, էջ 139-147:

րի մասին: Ա.Աղասյանը քննության է առնում նկարչի՝ Եգիպտոս այցելության փաստի վերաբերյալ գրականության մեջ առկա իրարամերժ կարծիքները և վկայությունները, անդրադառնում Ինտրայի՝ 1890-ական թվականների ստեղծագործական բեղուն շրջանին՝ խոսելով այն գրաֆիկական գործերի մասին, որոնք տպվել են ժամանակին հրատարակվող ամսագրերում: Հոդվածում հատկապես արժեքավոր են նկարչական մեթոդի, աշխատելաոճի մասին տեղեկությունները, նկարչի գեղանկարչական ոճի դիպուկ բնորոշումները:

Ա.Աղասյանը գրում է. «Եթե Ինտրայի պեյզաժներում արտացոլումն են գտել նկարչի բնականից քաղած տպավորությունները, որոնք ընդհանուր առմամբ իրապաշտական են, ապա 1898-ին կատարված «Աղբիւր» թեմատիկ-կոմպոզիցիոն գծանկարը երևակայությամբ մտապատկերված, այլաբանական-սիմվոլիկ լեզվով կյանքի և մահվան մասին խորհրդածող աշխատանք է»¹⁵:

Վաստակաշատ գիտնականի՝ արևմտահայ կերպարվեստի հետազոտություններում կարևոր տեղ է զբաղեցնում արևմտահայ քանդակագործության երևելի դեմքերից մեկի՝ Երվանդ Ոսկանի արվեստի ուսումնասիրությունը:

2010 թ. ապրիլի 28-ից 30-ը Լեհաստանի Զամոստյե քաղաքում¹⁶, Հայկական փողոց N° 30 հասցեում գտնվող թանգա-

¹⁵ **Աղասյան Ա.**, Տապաված նոճին. Տիրան Զրաքյանի (Ինտրա) նկարչությունը, էջ 145:

¹⁶ Պատահական չէր գիտաժողովը Զամոստյեում կազմակերպելը, որովհետև այն այսօրվա Լեհաստանի տարածքի ուշ միջնադարի հայկական խոշոր գաղութ ունեցող միակ քաղաքն է (Լվովը, Կամենեցը, Ստանիսլավը 1940 թ. անցան Ուկրաինային): Զամոստյեն հիմնադրվել է 1580 թ., իսկ արդեն 1585 թ. ձևավորվել է հայկական գաղթօջախը, որը XVII դ. ունեցել է լայն ինքնավարություն՝ իր ավագների խորհրդով, դատարանով և այլն: Հայերի թիվը XVII-XVIII դդ. հասել է մոտ երկու հազարի, որոնք հիմնականում զբաղվել են առևտրով և արհեստներով: Նրանց բարեկեցության և քաղաքային կյանքում ունեցած իրենց հեղինակության ու բարձր դիրքի վկան է Զամոստյեի կենտրոնական հրապարակից, ուղղակի Ռատուշայի կողքից դեպի արևելք ձգվող Օրմյանսկի փողոցը, որը ուշ միջ-

րանի շենքում տեղի ունեցավ «Հայ գաղթօջախների արվեստը» թեմային նվիրված կոնֆերանսը, որը կազմակերպել էր Կարդինալ Ստեֆան Վիշինսկու անվան համալսարանի Արվեստի պատմության ինստիտուտը Զամոստյեի թանգարանի և Արևելյան արվեստների լեհական ընկերության մասնակցությամբ:

Տարբեր երկրներից (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Բելգիա, Իտալիա, Ռումինիա, Հունգարիա և այլն) ժամանած արվեստաբանները հանդես եկան հայ գաղթօջախների ճարտարապետությանը, կերպարվեստին, կիրառական արվեստին նվիրված զեկուցումներով, որոնք պարունակում էին հայագիտության համար արժեքավոր նոր նյութեր, տեսակետներ, եզրահանգումներ: Այս գիտական ֆորումին հայկական պատվիրակությունը ներկայացավ հանձինս Արարատ Աղասյանի և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանի¹⁷:

Ա.Աղասյանի զեկուցումը նվիրված էր հայկական և թուրքական քանդակագործության հիմնադիր Երվանդ Ոսկանին¹⁸:

Շուտով Երևանում հրատարակվում է Երվանդ Ոսկանին նվիրված ծավալուն ուսումնասիրությունը¹⁹, որտեղ Ա.Աղասյանը հանգամանորեն ներկայացնում է Ե.Ոսկանի կենսագրության հետ կապված կարևոր փաստեր, մասնավորապես ուսումնառու-

նադարում հայերը կառուցապատել են իրենց պատկանող, 3–4-հարկանի շքեղ, ուշ վերածննդի ոճով ձևավորված ճակատներով շենքերով: Փողոցն ավարտվել է դրա առանցքով տեղադրված, 1625 թ. կառուցված Սբ. Աստվածածին խոշոր խաչածն գմբեթավոր հայկական եկեղեցիով (քանդվել է 1802 թ., պահպանվել է նախագիծը):

¹⁷ Մ.Հասրաթյանի զեկուցումը Նոր Զուղայի եկեղեցիների ճարտարապետության առանձնահատկությունների մասին էր:

¹⁸ **Aghasyan A.** Yervand Osgan's work and his contribution to the professional Armenian and Turkish sculpture //Art of the Armenian Diaspora. International conference. Programme and abstracts of papers. Zamość (Poland), Avril 28-30, 2010, p. 35.

¹⁹ Տե՛ս **Աղասյան Ա.**, Երվանդ Ոսկանն ու նրա դերը հայ և թուրքական պրոֆեսիոնալ քանդակի կայացման գործում //«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 1-2 (627-628), էջ 392-402:

թյան տարիներին առնչվող տեղեկություններ, տալիս քանդակագործի ստեղծագործական վաղ շրջանի գործերի բնորոշումներ՝ նշելով մասնակցած ցուցահանդեսի անուններ, ընդգծում է Ե.Ոսկանի դերը ինչպես հայկական, այնպես էլ թուրքական քանդակագործության հիմնադրման մեջ²⁰:

Հակադրվելով արվեստաբանության մեջ առկա կարծիքին՝ նա առաջ է քաշում համոզիչ տեսակետներով հիմնավորված հավաստի տվյալներ և հաստատում, որ կոմպոզիտոր Տիգրան Զուխաճյանի դիմաքանդակի հեղինակը հենց Ե.Ոսկանն է, և ներկայացնում է մանրամասներ այդ քանդակի ճակատագրից, մասնավորապես վերջինիս՝ Երևան հասնելու պատմությունից: Ա.Աղասյանը ձևակերպում է քանդակագործի աշխատանքների ոճային բնորոշումները, զուգահեռներ է անցկացնում եվրոպացի վարպետներ Լորենցո Բեռնինիի, Էդմ Բուշարդոնի, Էտյեն Մորիս Ֆալկոնեի և Կլոդիոնիի միջև, դիտարկում վերջիններիս ազդեցության հանգամանքը Ե.Ոսկանի որոշ աշխատանքների վերլուծության առանցքում:

Առհասարակ ինչպես իր մյուս աշխատություններում, Ա.Աղասյանի հեղինակած այս հոդվածը ևս, ներառելով բազում գիտական նորույթներ, լույս է սփռում արվեստաբանական գրականության մեջ առկա որոշ անճշտությունների վրա և կատարում կարևոր ճշգրտումներ:

2012թ. հունիսի 24-ից հուլիսի 1-ը Երևանում և Ստեփանակերտում ՀՀ ԳԱԱ-ն կազմակերպեց «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովը, որի արվեստի և ճարտարապետության մասնաճյուղում Ա.Աղասյանը հանդես եկավ «Հայ քանդակագործությունը Օսմանյան կայսրության մեջ» զեկուցումով²¹: Արևմտահայ քանդակագործության նոր անունների բացահայտման տեսանկյունից խիստ կարևոր այս զեկուցման մեջ արվեստաբանը գիտական շրջանառության մեջ է դրել 12 մոռացված անուններ (Երվանդ

²⁰ Նույն տեղում:

²¹ **Աղասյան Ա.**, Հայ քանդակագործները Օսմանյան կայսրության մեջ //Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը: Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 171-173:

Ոսկան, Հայկ Բաղիկյան, Ջեք (Հակոբ) Փափազյան, Հակոբ Արապյան, Զարեհ Բեյության, Տիրուհի Կիվմիշյան, Ավետիս Ամպարաճյան, Արմենակ Գուլանճյան, Հակոբ Պեգիրճյան, Հրանտ Բենդերի (Բենդերյան), Գևորգ Գաբամաճյան, Նշան Թուրին (Թուրունջյան):

Ա.Աղասյանը գրում է. «Արևելահայ նոր կերպարվեստի համեմատությամբ, արևմտահայ կերպարվեստում այդ ժամանակ տեղի ունեցած բարեփոխումներն ընթացել են ավելի դանդաղ: Միայն այսպես կոչված «թանգիմաթի» շրջանում, երբ որոշակի աշխուժանում է արևմտահայ մշակութային կյանքը, աստիճանաբար գիտակցվում է կերպարվեստի՝ նկարչության և քանդակագործության նշանակությունը»²²:

Հեղինակն անդրադառնում է քանդակագործների կենսագրական տեղեկություններին: Առանձին դեպքերում նշված արևմտահայ արձանագործների մասին ծանոթությունները սուղ են, այդ բացը լրացվում է արվեստագետների նշանակալից ստեղծագործությունների հիշատակմամբ՝ մատնանշելով վերջիններիս գտնվելու վայրը, ինչպես նաև Հայաստանի ազգային պատկերասրահում հանգրվանած եզակի գործերի հիշատակմամբ²³:

Արարատ Աղասյանի գրչին պատկանող բազմաքանակ գրքերը, մենագրությունները, գիտական հոդվածները և հրապարակումները հիրավի արժեքավոր են: Դրանք նաև ուսանելի են գիտության արահետով ընթացող երիտասարդ արվեստաբանների համար:

Պրոֆեսոր Ա.Աղասյանի ուսումնասիրությունների հիմքում ընկած գիտական մեթոդը՝ մոտեցումը, կատարյալ է իր բազմապլան բնույթով: Նրա հետազոտությունները բազմակողմանի են, որոնք ներառում են ինչպես արվեստագետների կյանքի և արվեստի համալիր ուսումնասիրության ոլորտը՝ չկտրելով վերջիններիս իրենց պատմական միջավայրից, զուգահեռաբար դիտարկվում են եվրոպական կերպարվեստի համատեքստում առ-

²² Նույն տեղում, էջ 171:

²³ Նույն տեղում, էջ 171-173:

կա ազդեցությունների ներքո՝ միաժամանակ բուն նյութը չճանրացնելով պատմական մանրամասներով:

Ա.Աղասյանի աշխատասիրությունները լույս կերպարվեստի պատմության շարադրանք չեն, գիտնականն արժանի տեղ է հատկացնում նաև նկարչական մեթոդի, տեխնիկայի, աշխատելաոճի վերաբերյալ կարևոր տեղեկությունների ներկայացմանը: Նա գիտական շրջանառության մեջ է դնում արխիվային հարուստ նյութեր՝ նշելով անհայտ ստեղծագործությունների գտնվելու վայրը, կատարելով փաստագրական պարզաբանումներ, առաջ քաշում ծանրակշիռ վարկածներ և տեսակետներ:

Խորհրդանշական է, որ Ա.Աղասյանն արևմտահայ կերպարվեստի պատմությանը նվիրված իր հետազոտությունները կատարել է ՀՀ անկախության տարիներին:

Խորհրդանշական է նաև, որ Ա.Աղասյանն այսօր Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի մագիստրատուրայում դասավանդում է հենց «Արևմտահայ և սփյուռքահայ արվեստի պատմություն» առարկան:

Արարատ Աղասյանին՝ հայ կերպարվեստագիտության առաջատարին, իմ սիրելի գիտական ղեկավարին, բազմաժանր տակ գիտնականին, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նվիրյալ ղեկավարին, մաղթում եմ երկար տարիների առողջ և երջանիկ կյանք, ստեղծագործական, գիտական նոր հաջողություններ, կանաչ ճանապարհ՝ սրընթաց վերելքներով և է՛լ ավելի մեծամեծ նվաճումներով ու հաղթանակներով...

**ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԱՐՎԵՍՆ
ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի արվեստը մշտապես գտնվել է թե՛ արվեստասեր հանրության, թե՛ արվեստաբանների ուշադրության կենտրոնում: Նկարչի ստեղծագործություններին նվիրված բազմաթիվ հոդվածներ, գրքեր ու ալբոմներ են հրատարակվել, այնուհանդերձ սարյանական արվեստի վաղ շրջանը որոշ ժամանակ գտնվել է ստվերում և տարակարծությունների տեղիք տվել: Այդ շրջանում նկարչի ստեղծագործական կյանքը սերտորեն կապված էր ռուսական արվեստում տիրող գեղարվեստական անցուդարձի, մասնավորապես սիմվոլիզմի էսթետիկական հայացքների ու գեղանկարչական միտումների հետ:

XIX դարի վերջում՝ Ֆրանսիայում որպես գեղարվեստական ուղղություն ձևավորվելուց հետո, սիմվոլիզմը շատ արագ տարածում գտավ թե՛ Արևմտյան, թե՛ Արևելյան Եվրոպայում, ապա հասավ նաև Ռուսաստան: Ծանր պատմական բովերի միջոցով անցնող ռուս մտավորականության համար սիմվոլիզմը ներկայացավ իբրև նոր աշխարհի կերտման յուրատեսակ բանալի: Այս ընկալման շնորհիվ Ռուսաստանում սիմվոլիզմը հանդես եկավ ոչ թե իբրև եվրոպական տարբերակի պարզունակ կրկնություն կամ վերարտադրություն, այլ ձեռք բերեց խոր տեսական հիմքեր, լուրջ գաղափարական դրույթներ և լիովին անկախ արտահայտում գտավ թե՛ գրականության, թե՛ արվեստի էջերում՝ նպաստելով մեծարժեք ժառանգության կերտման: Ռուսաստանում սիմվոլիզմի ամրապնդմանը մեծապես նպաստում էին այս ուղղությանը հարող ամսագրերը՝ «Վեսին» (Կշեռք), «Պերեվալը» (Անցելք), «Զոլոտոյե ռունոն» (Ոսկե գեղմ): Այս ամսագրերում էին հանդես գալիս գրական սիմվոլիզմի ավագ սերունդը ներկայացնող Վալերի Բրյուսովը, Դմիտրի Մերեժկովսկին, Վյաչեսլավ Իվանովը, Կոնստանտին Բալմոնտը,

Ֆյոդոր Սոլոգուբը, երիտասարդ սերնդից՝ Անդրեյ Բելին, Սերգեյ Սոլովյովը, Ալեքսանդր Բլոկը և ուրիշներ:

Գեղարվեստական սիմվոլիզմը Ռուսաստանում ծավալվեց երկու փուլով: Առաջին փուլն ընդգրկում է 1880-1890-ական թթ., և, ինչպես եվրոպական սիմվոլիզմը, բնութագրվում է խիստ բազմազանությամբ: Սիմվոլիստներից ոմանց համար ստեղծագործությունների ներշնչման աղբյուր էին գրական երկերը, մյուսներն օգտվում էին պատմության էջերից, քիչ չէին նաև կրոնական թեմաներին նախապատվություն տվողները: Իրենց ոճով և աշխարհընկալմամբ միմյանցից խիստ տարբեր էին նաև ռուս գեղարվեստական սիմվոլիզմի «հայրեր» Միխայիլ Վրուբելն ու Վիկտոր Բորիսով-Մուսատովը: Եթե Մ. Վրուբելի պաթետիկ պոռթկումներով հագեցած ստեղծագործություններն առանձնանում են ծայրաստիճան զգայականությամբ և ներքին լարվածությամբ, ապա Վ. Բորիսով-Մուսատովի երկերը բնորոշվում են պոետիկ նրբագեղությամբ: «Երկրորդ սերնդի» սիմվոլիստների ջանքերով էր, որ մշակվեց սիմվոլիզմի գեղանկարչական ընդհանուր լեզուն: Առանձնակի նշանակություն ունեցավ 1904 թվականը, երբ լույս ընծայվեցին Ալեքսանդր Բլոկի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն ու Վյաչեսլավ Իվանովի առաջին երկու գրքերը, հիմնադրվեց «Վեսի» ամսագիրը, և Սարատովում կազմակերպվեց «Ալայա ռոզա» (Ալ վարդ) ցուցահանդեսը: Թեև «Ալայա ռոզան» մեծ արձագանք չգտավ, այն հետաքրքրություն է ներկայացնում նրանով, որ ցուցահանդեսում առաջին անգամ միասնական բեմահարթակ է դուրս գալիս ռուսական սիմվոլիզմի «կորիզը»՝ Կուլենցով, Ուտկին, Արապով, Մատվեն, և նրանց կողքին՝ Սարյան:

1903թ. ավարտելով Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը՝ Վալենտին Սերովին և Կոնստանտին Կորովինին աշակերտած Սարյանն արդեն պատրաստ էր սկսելու իր ստեղծագործական ինքնուրույն ուղին: Գեղարվեստական նոր մեթոդների փնտրտուքը շուտով տվեց իր պտուղները: Նույն 1903թ. է թվագրվում նկարչի «Հեքիաթներ և երազներ» շարքի սկիզբը: Թեմատիկ առումով «Հեքիաթներ և երազներ» շարքը, ինչպես և բխում է

անվանումից, ներկայացնում է մի երազ-աշխարհ՝ «բնակեցված» արքայադուստրերով ու թագավորներով, գեղանի աղջիկներով ու երիտասարդ տղաներով, թռչուններով ու վիթերով: Այսպիսին են շարքի «Նոճիների պուրակում», «Արևելյան հեքիաթ», «Հովիտների հեքիաթ: Օրփեոս», «Հեքիաթ: Երազ», «Արքան արքայադստեր հետ: Հեքիաթ», «Ծառի մոտ: Հեքիաթ», «Փերիների լիճը», «Հեքիաթ: Սեր», «Պոետ», «Գիսաստղ», «Ծովի մոտ: Սֆինքս» (1903-1908) նկարները:

Մարտիրոս Սարյանի «Հեքիաթներ և երազներ» շարքում արտացոլված է ռուսական արվեստում այդ ժամանակ տիրող սիմվոլիստական ոգին: Ասվածն ակնհայտ է նախ թեմատիկայի առումով. շարքի գործերը փոխկապակցված են անխզելի թելով, ինչն է՝ փախուստ առօրեականից դեպի իրականի և երևակայականի համադրմամբ կերտվող երազ-աշխարհ: Շարքում Սարյանի գեղանկարչական լեզուն ևս համահունչ է սիմվոլիզմին: Ընդ որում, եթե եվրոպական սիմվոլիզմը դիտարկելիս անչափ դժվար է խոսել մեկ ընդհանուր գեղանկարչական լեզվի մասին, ապա ռուսական իրականությունում Վ. Բորիսով-Մուսատովի արվեստով ոգեշնչված «երկրորդ սերնդի» սիմվոլիստների գործերը կարծես ստեղծված լինեն երաժշտական մեկ տոնայնության մեջ: Այս փաստի խոսուն վկան է 1907թ. Մոսկվայում բացված «Գոլուբայա ռոզա» (Երկնագույն վարդ) ցուցահանդեսը, որին մասնակցում էին Ա. Արապովը, Պ. Կուզնեցովը, Ա. Մատվենը, Միլիոտի եղբայրները, Ն. Ռյաբուշինսկին, Ն. Սապունովը, Մ. Սարյանը և այլք: Այս նկարիչները համախոհներ էին, և դա արտահայտվում էր նրանց նկարների ու քանդակների և՛ թեմաներում, և՛ արտահայտչական լեզվում, և՛ ընդհանուր գաղափարական հենքում: Յուրահատուկ գունային գամմայով լուծված կտավները կարծես պարուրված լինեին մշուշով, կերպարները կորցրել էին նյութականությունը՝ փոխարենը ձեռք բերելով նրբագեղություն և ոգեղենություն, հեռանկարային ճշգրիտ լուծումները տեղի էին տվել ֆոնի դեկորատիվ-հարթային մշակմանը: Այս հատկանիշներով է բնորոշվում նաև Սարյանի «Հեքիաթներ և երազներ» շարքի մեծ մասը:

Այսպիսով, Մարտիրոս Սարյանի «Հեքիաթներ և երազներ» շարքը լիովին համահունչ էր ռուսական արվեստում սիմվոլիզմի ներթափանցման և զարգացման արդյունքում ձևավորված մթնոլորտին: Միաժամանակ շարքը վկայում է նկարչի ստեղծագործ «ես»-ի կայացման մասին: Շարքը միասնականությամբ հանդերձ ներքին զարգացում ու վերափոխում է ապրում, և եթե ջրաներկ աշխատանքներն առանձնանում են բաց, լուսաշող, երբեմն գրեթե թափանցիկ երանգներով, աննյութական, գրեթե անէացող կերպարներով, ապա տեմպերայով ստեղծված գործերում արդեն իսկ կարևորվում են գիծն ու գույնը:

«Հեքիաթներ և երազներ» շարքի փայլուն երկերը, ցավոք, խորհրդային տարիներին երկար ժամանակ գրեթե մոռացության էին մատնված՝ թե՛ ժամանակի գաղափարախոսությանն անհամապատասխան լինելու, թե՛ սարյանական արվեստի ընդհանուր կերպարային նկարագրից խիստ տարբերվելու պատճառով: Շարքի վերարժևորմանը մեծապես նպաստում է 1980թ. Մոսկվայում բացված Մարտիրոս Սարյանի անհատական ցուցահանդեսը՝ նվիրված նկարչի 100-ամյակին¹: Մինչ այդ «Հեքիաթներ և երազներ» շարքն առանձին քննում է Ռուբեն Դրամբյանը «Մարտիրոս Սարյան» մենագրության մեջ²: Ապա շարքի կարևորությունն ընդգծում է Վիլիելմ Մաթևոսյանը Սարյանի «Գրառումներ իմ կյանքից» գրքի 1966թ. հրատարակության առաջաբանում. «Իր ֆանտաստիկ գործերը Վարպետը անվանում է «Հեքիաթներ» և «Երազներ» ու «Գրառումներում» մանրամասն անդրադառնում դրանցից մի քանիսին: Նկարչի բացատրությունները խիստ կարևոր են, որովհետև այդ ստեղծագործությունները երբեք լուրջ չեն քննարկվել կամ լավագույն դեպքում համարվել են զուտ էկզոտիկ հետաքրքրության, գեղանկարչական որոնումների, անցյալ փուլի արդյունք: Մինչդեռ դրանք գլուխգործոցներ են և բացահայտում են Սարյանի աշ-

¹ Տե՛ս **Мартирос Сарьян**. Альбом, автор текста и биографической канвы А. А. Каменский, Ленинград, “Аврора”, 1987, с. 12.

² Տե՛ս **Դրամբյան Ռ.**, Մարտիրոս Սարյան, Երևան, ՀՍՍՌ հրատարակչություն, 1960, էջ 24-27:

խարհայացքի մի քանի էական գծերը»³: 1980թ. հրատարակությունում Վ. Մաթևոսյանը վերոհիշյալ տողերին հավելում է. «Հենց դրանք են (նկատի ունի «Հեքիաթներ և երազներ» շարքի գործերը՝ Մ.Մ.), որ առաջին անգամը լինելով և արդեն օրգանական միասնությամբ, ակնհայտորեն ընդգրկում են թե՛ նկարչի կյանքի ուղեկից-մոտիվներ հանդիսացող մանկական տպավորությունները, թե՛ հասուն տարիքում աշխարհը մանկական հայացքով տեսնելու կարողությունը և թե՛ հզոր տեմպերամենտ ու ձևավորված փիլիսոփայական խորը հետաքրքրություններ ունեցող երիտասարդ արվեստագետի մտորումները»⁴: «Հեքիաթներ և երազներ» շարքին Վ. Մաթևոսյանն առանձնակի ուշադրություն է դարձնում նաև «Մարտիրոս Սարյան» մենագրությունում՝ կարևորելով այն որպես շրջադարձ «պարտադրվող դպրոցի» պոզիտիվ ռեալիզմից⁵: «Հակառակ նկարչի 1890-1903թթ. գործերի, «Հեքիաթներն ու երազները» ոչ թե առօրյա փորձի էմպիրիկ ցուցադրումը և ճանաչելի առարկաների պասիվ վերարտադրությունն են, այլ գոյանիշների փոխհարաբերմամբ ստեղծված տեսիլքներ: Սրանցում ներկայացված է մի երազ աշխարհ՝ քաղաքակիրթ և հավասարապես վայրենի, կուսական»⁶:

«Հեքիաթներ և երազներ» շարքի արժևորումը, սակայն, իր հետ բերեց նոր տարակարծություններ: Այժմ խնդիրը շարքի ճիշտ և անաչառ վերագնահատումն էր: Մեծամասամբ արվեստաբանները ձգտում էին ապացուցել շարքի յուրահատկությունը՝ նշելով, որ այն առանձնանում է սարյանական արվեստում և չի պատկանում որևէ գեղարվեստական ուղղության առհասարակ: Մասնագետները խուսափում էին շարքը սիմվոլիստական որակելուց, իսկ սիմվոլիզմի հետ առնչությունը վկայող փաստերի համար գտնվում էին արհեստական հակակռվաններ: Այս-

³ **Մարտիրոս Սարյան**, Գրառումներ իմ կյանքից, Երևան, «Հայաստան», 1966, էջ 4-5:

⁴ **Մարտիրոս Սարյան**, Գրառումներ իմ կյանքից, Երևան, «Սովետական գրող», 1980, էջ 8:

⁵ **Մաթևոսյան Վ.**, Մարտիրոս Սարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975, էջ 16:

⁶ Նույն տեղում, էջ 14:

պես, Ռ. Դրամբյանը նշելով, որ Սարյանը մասնակցում էր սիմվոլիստական ուղղվածություն ունեցող «Գոլուբայա ռոզա» և «Ձուլտոյե ռունո» ցուցահանդեսներին, սարյանական գործերը չի ընդգրկում սիմվոլիզմի շրջանակներ՝ անվանելով դրանք «հեքիաթային-ֆանտաստիկական թեմատիկայով հրապուրվելու կարճատև ժամանակաշրջանի» արդյունք։ Շարքի գեղարվեստական արժեքի մասին հեղինակը երկակի կարծիք է արտահայտում. «Սարյանի այս սկզբնական աշխատանքները, ձևի ու գույնի դիտումնավոր պարզեցմամբ հանդերձ, վկայում են գեղարվեստական նոր ձևեր որոնող երիտասարդ նկարչի դեռևս անբավարար հմտությունը։ Բայց այդ աշխատանքներում արդեն կարելի էր տեսնել նկարչի համոզվածությունն այն խնդիրների մեջ, որ նա դնում էր իր առջև»⁷։ Ընդհանուր առմամբ անաչառ քննելով «Հեքիաթներ և երազներ» շարքը՝ Վ. Մաթևոսյանը վերոհիշյալ մենագրության մեջ, այդուհանդերձ, գերծ է մնում շարքն անմիջականորեն սիմվոլիստական կոչելուց։ Ա. Կամենսկին, ընդունելով շարքի կարևորությունը, այն դուրս է մղում սիմվոլիզմի շրջանակներից և ժխտում Սարյանի արվեստում այս ուղղության ազդեցությունը։ Նա նաև «Ալայա ռոզա» ցուցահանդեսում Սարյանի հանդես գալն անկարևոր է համարում՝ ներկայացված գործերի փոքրաքանակ լինելու պատճառով⁸։ Կամենսկու խոսքերով «Գոլուբայա ռոզայի» անդամների արվեստին Սարյանի գործերը նմանվում են գլխավորապես դեկորատիվությամբ, իսկ աշխարհայացքով խիստ տարբեր են. «Հեքիաթայնությունը, որը տառաջիորեն ողողում է 1900-ականների երկրորդ կեսի Սարյանի գործերը, որոշակիորեն հարում է «Գոլուբայա ռոզայի» «արարվող առասպելի» էսթետիկային։ Սակայն սարյանական հեքիաթներում չկան որոշակի սիմվոլիստական ենթատեքստ, հատուկ բազմիմաստություն, անորոշ ակնարկներ և նախազգացումներ։ Դրանցում գերիշխում են կյանքի զգացողության պարզությունն ու թարմությունը, դրա ուրախության և հարստության զգացումը, ինչն ակնհայտորեն հակադրվում է

⁷ Դրամբյան Ռ., Մարտիրոս Սարյան, էջ 24:

⁸ Мартирос Сарьян. Альбом, с. 11.

«Գոլուբայա ռոզայի» անդամների կտավների անհանգիստ, երբեմն նույնիսկ տանջալի և տխուր ինտոնացիաներին»⁹:

Մարտիրոս Սարյանի արվեստում սիմվոլիզմի արտահայտման, ինչպես նաև «Հեքիաթներ և երազներ» շարքի ճշգրիտ գնահատման խնդիրներին առաջին անգամ հանգամանալից անդրադառնում է Արարատ Աղասյանը Սարյանի վաղ շրջանի արվեստին նվիրված հոդվածներում և «Մարտիրոս Սարյան. վաղ ստեղծագործությունը» գրքում: Այսպես, «Սարյանական գեղարվեստական մեթոդի ձևավորումը (1900-ական թթ.)» հոդվածում¹⁰ Ա. Աղասյանը նկարչի ուղու ձևավորման հարցում առանձնակի կարևորում է 1901թ. այցը Հայաստան՝ նշելով, որ հայրենի բնության գույները ստիպեցին վերաիմաստավորել գեղարվեստական մեթոդները և սրեցին գույնի զգացողությունը: «Այսուհետ Սարյանի համար հիմնական գեղանկարչական միջոցը գույնն է, իսկ նրա ստեղծագործության գլխավոր թեման՝ Արևելքը»¹¹: Որպես նորն ընկալելու և փոխանցելու առաջին փորձերի օրինակներ՝ արվեստաբանը հիշատակում է «Արագածը» և «Մաքրավանք գյուղը» (1902), որպես առավել հաջողված տարբերակ՝ «Երեկոն այգում» (1903) ստեղծագործությունը: Ա. Աղասյանը կարևորում է Սարյանի մասնակցությունը «Ալայա ռոզա» ցուցահանդեսին, ինչպես նաև նկարչի հետաքրքրությունը 1906-1907թթ. Ս. Շչուկինի և Ի. Մորոզովի հավաքածուներում Ռե-նուարի, Սիսլեյի, Մոնեի, Վան Գոգի, Մանեի, Գոգենի և մյուսների նկատմամբ: Անդրադառնալով այդ շրջանում Սարյանի լավագույն գործերից «Արևելյան հեքիաթ» ջրաներկին (1903)՝ արվեստաբանն արձանագրում է. «Այս և նմանատիպ աշխատանքներով նկարչի արվեստում սկսվում է նոր փուլ, որը կապված է ռուսական գեղանկարչական սիմվոլիզմի պատմության հետ»: Միևնույն ժամանակ Ա. Աղասյանի աչքից չեն վրիպում Սարյանի և սիմվոլիզմի մյուս հետևորդների միջև առկա տարբերություն-

⁹ Նույն տեղում, էջ 12:

¹⁰ **Агасян А.**, О становлении сарьяновского живописного метода (1900-ые гг.) // «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, N1 (46), Երևանի համալսարանի հրատարակչություն, 1982, էջ 188-192:

¹¹ Նույն տեղում, էջ 188:

ները: «Այս ժամանակի սարյանական արվեստում, ի տարբերություն նրա համախոհների արվեստի, գրեթե ամբողջովին բացակայում է վերացական միստիցիզմը, և բնությունը հանդես է գալիս ոչ թե իբրև տրանսցենդենտալ Գաղափարի մարմնացում, այլ որպես օբյեկտիվ եղելություն՝ միայն թե խիստ պոետականացված»¹²:

Սարյանի վաղ շրջանի արվեստում Արևելքի ունեցած դերը, որն արդեն իսկ շոշափվել էր վերոնշյալ հոդվածում, առավել մանրամասն քննվում է նկարչի արվեստը լուսաբանող Ա. Աղասյանի հաջորդ՝ «Արևելքի մշակույթի արտացոլումը «Գոլուբայա ռոզայի» շրջանի Մ. Սարյանի արվեստում» հոդվածում¹³: Այստեղ արվեստաբանը գալիս է հետևյալ եզրահանգմանը. «Այսպիսով, ձևավորման առաջին փուլում Սարյանի արվեստը կրում է Արևելքի ազդեցությունը երկու ուղղությամբ. նոր գունաշարի ձեռքբերմամբ և իր զգացումները բացեիքաց արտահայտելու ունակությամբ՝ առանց չոր դատողականությամբ դիմելու ու տրամաբանական «ցենզուրայի» ենթարկելու»¹⁴:

«Սիմվոլիզմի որոշ մոտիվները և դրանց մեկնաբանումների առանձնահատկությունները 1903-1908թթ. Մ. Ս. Սարյանի ստեղծագործություններում» հոդվածում¹⁵ Ա. Աղասյանն առավել հանգամանալից է բացահայտում Սարյանի վաղ շրջանի աշխատանքների անմիջական կապը սիմվոլիզմի հետ: Արվեստաբանը փաստում է, որ տվյալ շրջանի Սարյանի արվեստը բացատրել միայն որպես հետաքրքրություն ֆանտազիաների և հեքիաթային մոտիվների նկատմամբ՝ անտեսելով դրանց կապը «Ալայա» և «Գոլուբայա ռոզա» ցուցահանդեսների էսթետիկայի հետ,

¹² Նույն տեղում, էջ 190:

¹³ **Агасян А.**, Отражение культуры Востока в искусстве М. Сарьяна периода “Голубой Розы” // «Հայկական արվեստ»: Հոդվածների ժողովածու: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, գիրք 2, էջ 129-134:

¹⁴ Նույն տեղում, էջ 132:

¹⁵ **Агасян А.**, Некоторые мотивы символизма и особенности их интерпретации в творчестве М. С. Сарьяна 1903-1908 годов // Советская живопись - 9, сборник статей, Москва, “Советский художник”, 1987, сс. 202-214.

կնշանակի «պարզեցնել և աղավաղել սարյանական արվեստի իրական բովանդակությունը»¹⁶: Ա. Աղասյանի այս հոդվածն արդեն իսկ բավական խիզախ խոսք էր Սարյանի վաղ շրջանի արվեստի ուսումնասիրության պատմության մեջ, իսկ նրա՝ 1992 թվականին լույս տեսած մենագրությունը լիովին նոր էջ բացեց սարյանագիտության ասպարեզում:

Ա. Աղասյանի «Մարտիրոս Սարյան. վաղ ստեղծագործությունը»¹⁷ գրքի երեք գլուխներից առաջինը¹⁸ նվիրված է նկարչի ստեղծագործական անդրանիկ քայլերին և ուսանողական տարիներին: Գլխի սկզբում անդրադարձ է կատարվում Սարյանի ծննդավայրին՝ Նոր Նախիջևանին, նկարչի մանկության և պատանեկության ժամանակ այնտեղ տիրող սոցիալ-մշակութային կյանքին: Ապա՝ ներկայացվում են Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը, այնտեղ Սարյանի անցած ուսումնական ծրագիրը և ուսուցիչները: Առանձին ակնարկ է կատարվում նկարչի ծանոթությանը հայ մշակույթին և հայաստանյան այցերին: Ներկայացվում են այդ շրջանում ստեղծված դիմանկարներից և բնանկարներից առավել աչքի ընկնող օրինակները, բացահայտվում է դրանցում Սարյանի ուսուցիչների ազդեցության աստիճանը:

Գրքի երկրորդ գլուխը¹⁹, որը բացահայտում է Սարյանի արվեստում սիմվոլիզմի ի հայտ գալը, սկսվում է սիմվոլիզմի պատմության ընդհանուր ակնարկից և ռուսական սիմվոլիզմի ընդհանուր բնութագրից: Ապա՝ արվեստաբանն անցնում է «Հեքիաթներ և երազներ» շարքի քննությանը: Սարյանի սիմվոլիստական շրջանն Ա. Աղասյանը բաժանում է երեք փուլի: Առաջին փուլը, երբ նկարիչը հարում է սիմվոլիզմին, ընդգրկում է 1903-

¹⁶ Նույն տեղում, էջ 203:

¹⁷ **Агасян А.**, Мартирос Сарьян. Раннее творчество, Ереван: Изд-во АН Армении, 1992, 210 с.

¹⁸ Глава I. Юные годы. В Московском училище живописи, ваяния и зодчества. Творчество Сарьяна ученического периода (1898-1905), նույն տեղում, էջ 8-41:

¹⁹ Глава II. Приобщение Сарьяна к символизму. Акварельный цикл Сказки и грезы (1903-1906), նույն տեղում, էջ 42-86:

1906թթ.: Այս շրջանում են ստեղծվում «Հեքիաթներ և երազներ» շարքի՝ ջրաներկով և գուաշով ստեղծված գործերը: Երկրորդ փուլը 1905-1908թթ. ներառող ժամանակաշրջանն է, երբ ստեղծվում են տեմպերայով կատարված աշխատանքները: Իսկ ահա 1907-1909թթ. արդեն նշանավորում են երրորդ շրջանը, երբ նկարիչն աստիճանաբար հեռանում է սիմվոլիզմից²⁰: Սարյանական գործերն այս գլխում քննվում են եվրոպական և ռուսական սիմվոլիզմի գեղագիտական ու գեղանկարչական առանձնահատկությունների համեմատականների օգնությամբ:

Գրքի երրորդ գլխում²¹ բացահայտվում են այն փոփոխությունները, որոնց հանգեցրեց նոր տեխնիկայի՝ տեմպերայի կիրառումը: Այստեղ խոսվում է Սարյանի վաղ շրջանի արվեստին բնորոշ «պատկերագրական» առանձնահատկությունների մասին, մատնանշվում է դրանց փոխկապակցվածությունը XIX-XX դարագլխի ռուսական և արևմտաեվրոպական արվեստում հանդիպող օրինակների հետ: 1905-1909թթ. ստեղծագործություններն Ա. Աղասյանը բաժանում է երեք խմբի: Առաջին խմբի աշխատանքները 1905-1908թթ. զուտ սիմվոլիստական բնութագիր ունեցող գործերն են («Պոետ», «Գիսաստղ», «Ծովափին և սֆինքս» ևն): Երկրորդ խմբում 1907-1909թթ. այն երկերն են, որոնցում սիմվոլիստական պատկերներն ու մոտիվները համադրվում են իրականությունից վերցված օրինակների հետ («Ծառերի տակ», «Տապ օր», «Ջրհորի մոտ: Տապ օր», «Ինքնանկար» ևն): Երրորդ խումբը, որ հիմնականում թվագրվում է 1909 թվականով, արդեն իսկ ազատված է սիմվոլիզմի ազդեցությունից («Տապ: Վազող շուն», «Հովազներ», «Դեպի աղբյուր» ևն)²²: Այս գլխում ևս Ա. Աղասյանը հիմնավորում է Սարյանի «Հեքիաթներ և երազներ» շարքի բովանդակային և գեղանկարչական կապակցվածությունը ռուսական սիմվոլիզմին, ինչպես նաև զուգահեռներ է անցկացնում հայ նկարչի և արևմտաեվրոպական վարպետների, մասնավորապես Վան Գոգի արվեստի միջև:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 54-55:

²¹ Глава III. Эволюция живописного метода Сарьяна во второй половине 1900-х годов, նույն տեղում, էջ 87-144:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 95:

Այսպիսով, Ա. Աղասյանի «Մարտիրոս Սարյան. վաղ ստեղծագործությունը» մենագրությունը նկարչի վաղ շրջանի արվեստը ներկայացնող առաջին մանրագնին և անաչառ քննությունն է:

Տարիներ անց Արարատ Աղասյանը կրկին վերադառնում է Մարտիրոս Սարյանի վաղ շրջանի ստեղծագործությանը՝ այս անգամ ավելի լրամշակված, պատկերաշարով հարստացված նոր՝ «Սիմվոլիզմը և Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունը» գիրքը²³ մասնագետներին և արվեստասեր հանրությանը ներկայացնելու պայմանով: Գիրքը բաղկացած է երեք գլխից, որոնցից յուրաքանչյուրը հաջորդաբար ներկայացնում է Սարյանի հարումը սիմվոլիզմին ու «Հեքիաթներ և երազներ» շարքը²⁴, նկարչի գեղարվեստական լեզվի զարգացումն ու սիմվոլիզմի ծաղկումը²⁵ և, վերջապես, սիմվոլիզմի անկումն ու Սարյանի վերադարձը բնությանը²⁶: Գիրքը հարուստ է պատմամշակութային ակնարկներով և համեմատականներով: Այս փաստն իր գրախոսականում արժևորում է արվեստաբան Արթուր Ավագյանը. «Մենագրության մեկ այլ անվիճելի արժանիքն այն է, որ նկարչի վաղ ստեղծագործությունը քննվում է ոչ թե մեկուսացված, միայն ինքն իրենով, այլ լայն պատմամշակութային ֆոնի վրա, XX դարի սկզբի գաղափարական-գեղագիտական ծրագրերի և գեղարվեստական գործընթացների համատեքստում՝ համեմատելով ռուսական և արևմտաեվրոպական այն վարպետների աշխատանքների հետ, որոնք այս կամ այն չափով առնչվում են Սարյանի ստեղծագործական կայացմանը»²⁷: Հաշվի

²³ **Агасян А.**, Символизм и творчество Мартироса Сарьяна, Ереван, “Воскан Ереванци”, 2012, 118 с.

²⁴ Глава I. Приобщение Сарьяна к символизму. “Сказки и грезы”, նույն տեղում, էջ 5-33:

²⁵ Глава II. Эволюция живописного метода Сарьяна. Расцвет символизма, նույն տեղում, էջ 34-50:

²⁶ Глава III. Закат символизма. Возвращение Сарьяна к натуре, նույն տեղում, էջ 51-70:

²⁷ **Авакян А.**, Арагат Агасян. Символизм и творчество Мартироса Сарьяна, Ереван, Изд-во “Воскан Ереванци”, 2012, 188 с. с илл. // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1 (633) հունվար-

առնելով Սարյանի վաղ շրջանի ստեղծագործություններում ռուսական արվեստի ունեցած մեծ դերը՝ Ա. Աղասյանը գրքում առանձնակի ուշադրություն է դարձնում ռուսական սիմվոլիզմին: «Խոսելով Մ. Սարյանի վաղ ստեղծագործության սիմվոլիստական ուղղվածության մասին՝ Ա. Աղասյանը, ըստ էության, ներկայացրել է նաև ռուսական սիմվոլիզմի համառոտ պատմությունը: Յուրաքանչյուր երևույթի ու փաստի մենագրության հեղինակը նայում է թե՛ անցյալում եղած տեսակետներից, թե՛ ժամանակակից արվեստաբանի հայացքով»²⁸: Առանձին քննության առնելով Սարյանի այս շրջանի առավել ակնառու աշխատանքները՝ Ա. Աղասյանը յուրաքանչյուր անգամ զուգահեռներ է գտնում ռուսական և արևմտաեվրոպական օրինակներում ու հանգամանալից ցուցադրում սարյանական գործերի կապը սիմվոլիզմի հետ՝ թե՛ գեղանկարչական, թե՛ գաղափարական կողմերով: Գրքի երրորդ գլխում արվեստաբանն արձանագրում է Սարյանի արվեստում սիմվոլիզմի աստիճանական մարումը և դրան զուգահեռ նկարչի հետագա արվեստին բնորոշ գծերի ի հայտ գալը: Ընդհանուր առմամբ գիրքն ամբողջականացնում է Սարյանի վաղ շրջանի արվեստի «դիմագիծը», տալիս դրա ճշգրիտ և համակողմանի բնութագիրը:

Մարտիրոս Սարյանի ստեղծագործական վաղ շրջանին նվիրված Արարատ Աղասյանի աշխատությունները նկարչի արվեստի ընդհանուր ուսումնասիրության պատմության անգնահատելի էջերից են: Դրանք ոչ միայն նորովի գնահատական տվեցին վարպետի տվյալ շրջանի երկերին, մասնավորապես «Հեքիաթներ և երազներ» շարքին, հիմնովին ապացուցեցին սիմվոլիզմի հետ դրանց աներկբա առնչությունը, այլ նաև հեռա-

ապրիլ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2012, էջ 345:

²⁸ **Փիլիպոսյան Հ.**, Արարատ Աղասյան, Սիմվոլիզմը և Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունը, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, 188 էջ նկարներով // «Պատմաբանասիրական հանդես», 2012, N 3 (191), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2012, էջ 225:

նկար բացեցին ընդհանրապես հայ արվեստում սիմվոլիզմի ունեցած ազդեցության ուսումնասիրության համար²⁹:

Հ.Գ. Արարատ Աղասյանի 60-ամյակի առթիվ հրատարակվող հոդվածների այս ժողովածուն թեև գիտական հիմք ունի, կարծում եմ, այնուամենայնիվ, թույլ է տալիս հեղինակներին փոքր-ինչ ազատ գտնվել և գիտական վերլուծությունից բացի նաև սրտի խոսքն ասել: Ես անչափ հպարտ եմ, որ Արարատ Աղասյանի սաներից եմ և աշխատում եմ այնպիսի մարդու ղեկավարությամբ, ով ոչ միայն փայլուն արվեստաբան է, հեղինակել է մի շարք արժեքավոր մենագրություններ ու բազմաթիվ գիտական հոդվածներ, այլև ստեղծում է արվեստաբանական դպրոց՝ երիտասարդ մասնագետներին անշահախնդրորեն փոխանցելով իր փորձն ու գիտելիքը: Այս ամենով մեկտեղ Ա. Աղասյան մարդ-տեսակը համեստ է ու խիստ, որ բնորոշ է միայն կայացած մարդուն ու գիտնականին: Վստահ ենք՝ Արարատ Աղասյանի հետագա գործունեությունը ևս կլինի նույնքան բեղուն ու արգասաբեր՝ ի շահ հայ արվեստաբանական մտքի:

²⁹ Տողերիս հեղինակի «Սիմվոլիզմ. արձագանքը հայ կերպարվեստում: XIX դարի վերջ – XX դարի սկիզբ» մենագրությունն այս ընձեռած հնարավորության արդյունքն է:

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԸ՝ ԽՈՐՀՐԴԱՎՅԱԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ

Հայ արվեստի պատմության մեջ խորհրդային ժամանակաշրջանն առանձին մի գլուխ է կազմում: Ազգային պետության շուրջ 70-ամյա գոյությունը, մշակույթի ակտիվ, գործուն դերը հասարակության կյանքում, ստեղծագործական ուժերի համեմատաբար անխափան սերնդափոխությունը նպաստեցին հայ կերպարվեստի ամբողջական զարգացմանը՝ Հայաստանը դարձնելով գեղարվեստական կյանքի կարևոր կենտրոն:

Խորհրդահայ կերպարվեստի ուսումնասիրության խնդիրն արդիական է մնում նաև մեր օրերում, երբ պատմական որոշակի հեռավորություն է առաջացել մեր և անցած դարաշրջանի միջև: Սա լրացուցիչ հնարավորություն է տալիս նորովի, ավելի օբյեկտիվ իմաստավորելու անցյալը, դրանից պատմական դասեր քաղելու:

Խորհրդահայ կերպարվեստի ուսումնասիրության ասպարեզում շոշափելի ներդրում ունի ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը, ով այս տարի բոլորում է իր ծննդյան 60-ամյակը: Ավելի քան երեք տասնամյակ ընդգրկող իր գիտական գործունեության ընթացքում նա բազմիցս և տարբեր ձևաչափերով անդրադարձել է խորհրդահայ արվեստի խնդիրներին, նրա նշանավոր ներկայացուցիչների ստեղծագործությանը, ամբողջացրել այդ ամենը հիմնարար աշխատություններում: Ուստի, հոբելյանական բարեմաղթանքներին զուգահեռ, տեղին ենք համարում ներկայացնել Ա. Աղասյանի հետազոտական նախասիրությունների այդ հատվածը՝ բնավ չհավակնելով համակողմանի և խոր վերլուծության, որը, մեր համոզմամբ, ապագայի գործ է:

Խորհրդահայ կերպարվեստի անցած ուղին ամփոփելու անդրանիկ, քիչ թե շատ ընդգրկուն փորձերը ձեռնարկվել են արդեն 1930-ական թվականներից: Թեև դրանց հեղինակները, որպես կանոն, ոչ թե պրոֆեսիոնալ արվեստաբաններ էին, այլ

գործող արվեստագետներ, նրանց նպատակը հստակ էր՝ ի մի բերել նորաստեղծ խորհրդային հանրապետության գեղարվեստական պատմությունը՝ մշակույթին ներկայացվող գաղափարական և գեղագիտական պահանջների տեսանկյունից¹:

Հետագայում հայ արվեստագիտությունը երկար ճանապարհ անցավ և ապրեց մի քանի սերնդափոխություն՝ արտացոլելով և՛ պետության մշակութային քաղաքականության դիրքորոշումները, և՛ (մանավանդ 1950-ական թվականների կեսերից) հասարակական ու ստեղծագործական խմորումները: Խորհրդահայ կերպարվեստի ուսումնասիրության բնագավառում աչքի ընկան այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Ռուբեն Դրամբյանը, Եղիշե Մարտիկյանը, Մինաս Սարգսյանը, Վահան Հարությունյանը, Մանյա Ղազարյանը, Նոնա Ստեփանյանը, Հենրիկ Իգիթյանը, Վիլհելմ Մաթևոսյանը և ուրիշներ:

Ինչ վերաբերում է Ա. Աղասյանին, ապա նա, գիտական ասպարեզ գալով դեռևս խորհրդային տարիներին, իր գործունեության գերակշիռ մասը ծավալեց նորանկախ Հայաստանում, որն էական հանգամանք է նրա մասնագիտական հայեցակարգը հասկանալու իմաստով: Ա. Աղասյանի՝ խորհրդահայ կերպարվեստին նվիրված առաջին հրապարակումները լույս տեսան 1970-ականների վերջին: Հետզհետե դրանց ցանկն ընդլայնվեց՝ ներառելով նաև գրախոսություններ, հանրագիտարանային հոդվածներ և, վերջապես, մենագրություններ, որտեղ խորհրդահայ կերպարվեստի պատմությունն ստացավ մինչ օրս առավել ամբողջական և հանգամանալի լուսաբանում: Այս առումով հատկապես ուշագրավ էին նրա «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» հիմնարար աշխատությունը և ավելի լայն ընթերցողին հասցեագրված «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ հրատարակությունը (երկուսն էլ՝ Երե-

¹ Տե՛ս, օրինակ. **Արվեստագետ**. Մեր արվեստի տասնամյա ուղին (կերպարվեստ) // Արվեստի ֆրոնտում, 1930, № 2, էջ 7–10, **Արուսյան Մ.**, Կերպարվեստը Խորհրդային Հայաստանում // հոկտեմբեր–նոյեմբեր «Տարեգիրք», Երևան, 1932, էջ 186–220, **Գյուրջյան Գ.**, Խորհրդային կերպարվեստի անցած ուղին // «Խորհրդային արվեստ», 1934, № 10, էջ 9–15 և այլն:

վան, 2009), որի համար Ա. Աղասյանը, համահեղինակների (< Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան) հետ մեկտեղ, արժանացավ ՀՀ պետական մրցանակի:

Սակայն ինչպե՞ս ձևավորվեց Ա. Աղասյանի հետաքրքրությունը խորհրդահայ կերպարվեստի նկատմամբ, որն ի վերջո պսակվեց նրա այդ հիմնարար աշխատանքների ստեղծմամբ:

Մասնագիտական գերազանց կրթություն ստանալով Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում՝ նա մեծապես ձևավորվեց գիտական այն ըմբռնումների միջավայրում, որոնք ընդունված է անվանել «Մոսկվայի արվեստաբանական դպրոց»: Ի տարբերություն ավելի պահպանողական և «ակադեմիական» համարվող լենինգրադյան դպրոցի՝ նոր և նորագույն արվեստի ուսումնասիրությամբ զբաղվող մոսկվացի արվեստաբաններն ավանդաբար մեծ ուշադրություն էին դարձնում պատմագեղարվեստական նյութը թարմ ընկալելու, նրա հետ «մեն-մենակ», առանց «միջնորդների» երկխոսելու, արվեստի գործերի հուզաէմոցիոնալ բովանդակությունը նրբորեն բացահայտելու, տեսածը դիպուկ և պատկերավոր բանաձևելու կարողությանը: Այսպիսով, իր ծագումով առավել դեմոկրատական, ժամանակակից գեղարվեստական պրոցեսներին մոտ կանգնած «մոսկովյան դպրոցը» կարևորում էր արվեստագիտության երկու ենթաճյուղերի՝ արվեստի պատմության և արվեստի քննադատության ներդաշնակ սինթեզը, որի միջոցով մշակութային կենդանի կապ է հաստատվում անցյալի ու ներկայի միջև: Նշենք, որ այս ավանդույթի փայլուն ներկայացուցիչներ էին Ա. Աղասյանի գիտական ուսուցիչները՝ արվեստաբաններ Դմիտրի Սարաբյանովը (1923–2013) և Նոնա Ստեփանյանը (1932–2014), ովքեր, անշուշտ, ազդեցություն են ունեցել նրա արվեստաբանական «ձեռագրի» ձևավորման վրա:

Ավարտելով ուսումը և վերադառնալով Հայաստան՝ Ա. Աղասյանը արվեստաբան Մանյա Ղազարյանի հետ ձեռնամուխ է լինում խորհրդահայ կերպարվեստին վերաբերող իր անդրանիկ հրատարակությանը: Նկատի ունենք Մարտիրոս Սարյանի կյանքի և գործունեության ընդարձակ տարեգրությունը, որը լույս

տեսավ 1980 թվականին, վարպետի 100-ամյա հոբելյանի առթիվ²: Երիտասարդ գիտնականի համար սա լավ հնարավորություն էր՝ առնչվելու խորհրդահայ արվեստի փաստական և մատենագիտական նյութին, ծանոթանալու մի շարք կարևոր աղբյուրների: Ու թեև ստեղծագործական առումով այդ աշխատանքը համեստ մի դրվագ էր արվեստաբանի կենսագրության մեջ, փաստերը հայթայթելու, ստուգաբանելու, լրջորեն գործառելու փորձը չէր կարող անօգուտ լինել նրա մասնագիտական կայացման համար:

Ձուգահեռաբար նա հետաքրքրություն է ցուցաբերում ժամանակակից հայ արվեստի նկատմամբ, հոգվածներ տպագրում Ռուբեն Շահվերդյանի, Ռուբեն Ադայանի, Լևոն Թոքմաջյանի, հայ արդի գեղանկարչության և կերպարվեստի, հետպատերազմյան տասնամյակում ծնված շնորհալի արվեստագետների ստեղծագործության վերաբերյալ³: Այդ ուղղությամբ կատարած իր որոնումներն Ա. Ադայանն ի մի է բերում «Հայաստանի երիտասարդ նկարիչները» երկվեզու (հայերեն և ռուսերեն) պատկերագրքի (Երևան, 1987) ներածական հոդվածում: Ոչ այնքան ծավալուն, բայց բովանդակալից այդ տեքստն արդեն որոշակի պատկերացում է տալիս նրա գիտական մտածողության մասին՝ խնդրի ընդգրկման ամբողջականություն, նյութի կուտ և տրամաբանական համակարգում, մտքերի ստույգ ու հղկված շարադ-

² **Ադայան Ա., Ղազարյան Մ.**, Մարտիրոս Սարյան. Կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, 1980:

³ Տե՛ս **Ադայան Ա.**, Ռուբեն Շահվերդյանի արվեստը // «Սովետական արվեստ», 1979, № 6, էջ 13–16, **Նույնի**, Рубен Адалян (Дар поиска) // Литературная Армения, 1983, № 10, с. 104–105, **Նույնի**, Քանդակագործ Լևոն Թոքմաջյան // «Սովետական արվեստ», 1983, № 10, էջ 20–26, **Նույնի**, Հայ արդի գեղանկարչությունը // «Սովետական արվեստ», 1984, № 4, էջ 1–9, **Նույնի**, О современном изобразительном искусстве Армении // Мхатвари, 1986, апрель, без пагинации, **Նույնի**, Ինքնահաստատման ճանապարհին (Հայ երիտասարդ արվեստագետները) // «Սովետական արվեստ», 1986, № 1, էջ 58–60, **Նույնի**, О творчестве молодых художников Армении // Армянское советское искусство на современном этапе. Ереван, 1987, с. 104–115:

րանք: 1970–1980-ական թվականների հայ կերպարվեստը ներկայանում է գեղանկարիչներ Ռ. Աբովյանի, Վ. Գաբազյանի, Ֆ. Եղիազարյանի, Ա. Իսաբեկյանի, Մ. Մանուկյանի, Վ. Մարգարյանի, Փ. Միրզոյանի, Կ. Մկրտչյանի, Վ. Վարդանյանի, քանդակագործներ Գ. Բաղդասարյանի, Ն. Կարգանյանի, Գ. և Ս. Ղազարյանների, Ն. Ջանջուղազյանի, գրաֆիկներ Ս. Համբարձումյանի և Հ. Սամուելյանի, դեկորատիվ-կիրառական արվեստի վարպետներ Գ. Ալումյանի, Ա. Աթանյանի, Հ. Մանուկյանի և այլոց աշխատանքների օրինակով, իր ժանրային, թեմատիկ և ձևաոճական բազմազանությամբ: Ի դեպ, թվարկված արվեստագետներից շատերը գրեթե հայտնի չէին լայն հանրությանը, մինչդեռ հետագայում ձեռք բերեցին ժողովրդական ճանաչում: Նույն տարիներին Ա. Աղասյանը հոգված է գրում «Популярная художественная энциклопедия» երկհատորյակի համար⁴, արձագանքում խորհրդահայ արվեստին առնչվող նշանակալից գրական նորույթներին⁵:

Եթե վերը թվարկված իր աշխատանքներում Ա. Աղասյանը հիմնականում կապված էր ժամանակակից գեղարվեստական կյանքին, ապա սկսած 1990-ական թվականներից՝ նա ավելի մեծ ուշադրություն է դարձնում խորհրդային արվեստի պատմության ավելի վաղ էջերին: Այսպես, հայ նորագույն գեղանկարչության դասական նմուշներից մեկը՝ Հակոբ Կոջոյանի «Կոմունիստների գնդակահարությունը Տաթևում» մեծադիր կտավը (1930), նոր և անսպասելի մեկնաբանություն է ստանում գիտնականի զեկուցման մեջ, որն ընթերցվում է Հայաստանի ազգային պատկերասրահում՝ Ռուբեն Դրամբյանի հիշատակին նվիրված գիտաժողովի (1996) նիստում⁶:

⁴ **Агасян А.** Изобразительное искусство Армении 19–20 веков // Популярная художественная энциклопедия. Книга первая, Москва, 1986, с. 41–43.

⁵ Տե՛ս, օրինակ. **Агасян А.** Тернистый путь древней культуры (Рецензия на книгу Н. С. Степанян «Искусство Армении». Москва, 1989) // Искусство, 1990, № 5, с. 68 և այլն:

⁶ **Агасян А.** О библейских мотивах в картине А. Коджояна «Расстрел коммунистов в Татеве» // Ռուբեն Դրամբյանի (1891–1991) հիշատակը

Միաժամանակ Ա. Աղասյանի հետազոտական նախասիրությունների դաշտում հայտնվում է հայ մեծանուն նկարիչ և քանդակագործ Երվանդ Քոչարի ստեղծագործությունը, որի արդյունքում 1999-ին՝ վարպետի ծննդյան 100-ամյակի առթիվ, լույս է տեսնում արվեստաբանի «Ерванд Кочар» մենագրությունը: Հարկ է նշել, որ Հ. Փիլիպոսյանի՝ դեռևս 1978-ին պաշտպանած և անտիպ մնացած թեկնածուական ատենախոսությունից⁷ հետո սա արվեստագետի կյանքն ու գործունեությունն ամբողջականորեն ներկայացնելու առաջին գիտական փորձն էր, որը, սակայն, նախաձեռնվել էր արդեն Քոչարի մահից հետո ու, կարևորը, հետխորհրդային իրողության պայմաններում: Իսկ դա որոշակի խնդիրներ էր առաջադրում հեղինակին՝ կապված մասնավորապես խորհրդային անցյալը, նրա մշակութային ժառանգությունը պատմական նոր դիրքերից իմաստավորելու և արժևորելու անհրաժեշտության հետ: Փոքր չէր այդ անցյալն արմատապես վերանայելու գայթակղությունը, մանավանդ որ դրան էին նպաստում Քոչարի կենսագրական հանգամանքները. վերադառնալով խորհրդային երկիր՝ նա ենթարկվել էր քաղաքական հետապնդման և շուրջ երկու տարով բանտարկվել: Բացի այդ, նրա հախուռն ստեղծագործական խառնվածքը, ուրույն գեղարվեստական մտածողությունը, նորարարական պլաստիկական զանազան, ոչ միանշանակ մեկնաբանությունների տեղիք էին տալիս:

Ի պատիվ գիտնականի՝ նա ձեռնպահ մնաց քմահաճ «օրախնդրի» թելադրած ծայրահեղ մոտեցումներից, ըստ որում՝ ինչպես ժխտողական, այնպես էլ ջատագովական: Վստահելով փաստերին և անաչառորեն քննելով նյութը՝ նա հանգեց կշռադատված, հիմնավոր եզրակացությունների, այդ թվում՝ Քոչարի երևանյան կենսագրության վերաբերյալ, որին նվիրված էր աշխատության ամենածավալուն վերջին գլուխը: Ինչ խոսք, Հայաստանում վարպետի կյանքը դյուրին չէր, նրան բաժին ընկան և՛

կին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեգեր, Երևան, 1996, էջ 28-29:

⁷ **Пилипосян А.** Ерванд Кочар. Автореф. дис. ...канд. Искусствоведения. Баку, 1978.

գրկանքներ, և՛ ճնշում, և՛ հիասթափություն: Սակայն հենց այստեղ նա ստացավ իր կոթողային մտահղացումներն իրականացնելու հնարավորություն, արժանացավ պետական բարձրագույն կոչումների, ձեռք բերեց հիրավի համազգային փառք: Այսպիսով, Քոչարի կենսագրության այս հատվածը լուսաբանված է հավաստի, հակասական ընթացքով: Հավելենք, որ հեղինակի սթափ, անկանխակալ հետադարձ հայացքը զերծ է ակադեմիական չորությունից, այն ներդաշնակորեն համակցված է նրա անձնական ընկալումներին, արվեստի երկերը զգուշորեն վերծանելու, դրանց «ձայնը լսելի դարձնելու» մտայնությանը: Ընթերցողին դարձնելով պատմական այդ գրավիչ երկխոսության մասնակիցը և մղելով սեփական մտորումների՝ հետազոտողը լիովին կատարում է իր գերխնդիրը, որը միանգամայն լուծված համարեցին նաև աշխատության գրախոսները⁸:

Հետագա տարիներին Ա. Աղասյանը ևս անդրադառնում է թե՛ խորհրդահայ արվեստի ընդհանուր պրոբլեմներին⁹, թե՛ նրա առանձին կարկառուն դեմքերի ստեղծագործությանը¹⁰, հեղինակում է համապատասխան բաժինը «Հայոց պատմության» ակադեմիական բազմահատորյակի համար¹¹: Բայց և այնպես նրա

⁸ **Нерсисян А. В** пространстве Ерванда Кочара // Ճարտարապետություն և շինարարություն, 2013, № 7, էջ 50: Ունենալով մեծ պահանջարկ ընթերցողների շրջանում՝ մենագրությունը 2013 թվականին վերահրատարակվեց «Երվանդ Քոչարի տարածության մեջ» վերտառությամբ, այս անգամ երկլեզու (հայերեն և ռուսերեն) տարբերակով և զգալիորեն համալրված պատկերաշարքով: Ա. Ներսիսյանը գրախոսել է հենց այդ հրատարակությունը:

⁹ Տե՛ս **Աղասյան Ա.**, 1960–1980 թթ. հայ դեկորատիվ քանդակը // Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողով. Հիմնադրույթներ. Երևան, 2004, էջ 7–8, **Նույնի**, 1930–1950-ական թթ. հայ բեմանկարչության պատմությունից // «Տարեգիրք Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի». Գիտական աշխատությունների ժողովածու. Երևան, 2005, էջ 53–61 և այլն:

¹⁰ **Աղասյան Ա.**, Ստեփան Թադյանի արվեստը // «Կերպարվեստ», 2010, № 1–2, էջ 6–7, **Նույնի**, Երվանդ Քոչար, Երևան, 2010, **Նույնի**, Էդուարդ Իսաբեկյան–100. Երևան, 2014 և այլն:

¹¹ **Աղասյան Ա.**, Կերպարվեստ // Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 689–697:

հիմնական գիտական նվաճումը տվյալ բնագավառում, անշուշտ, «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» ստվարածավալ մենագրությունն էր, որն արդեն հիշատակել ենք այս հոդվածում և ժամանակին առիթ ենք ունեցել գրախոսելու¹²:

Ի տարբերություն նախկինում հրատարակված աշխատությունների, որոնք կոչված էին ամբողջությամբ լուսաբանելու խորհրդահայ կերպարվեստի անցած ուղին՝ Ա. Աղասյանի գիրքն այդ խնդրին նվիրված առաջին *հայերեն* մենագրությունն էր, որը, սեղանին դրվելով արդեն հետխորհրդային շրջանում, ամփոփում էր պատմական *ողջ* նյութը, ընդհուպ մինչև 1991 թվականը՝ կերպարվեստի բոլոր տեսակների (գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա, բեմանկարչություն) ընդգրկմամբ: Սա իսկապես համապարփակ ուսումնասիրություն էր՝ ոչ միայն գերծ գաղափարական այն շեղումներից և սահմանափակումներից, որոնք այս կամ այն չափով անխուսափելի էին խորհրդային տարիներին տպագրվող նմանօրինակ աշխատություններում, այլև մեծապես հարստացված նոր նյութով, որն ինչ-ինչ պատճառներով վրիպել էր նախորդ հեղինակների ուշադրությունից կամ միտումնավոր անտեսվել: Բնականաբար, Ա. Աղասյանը պետք է հենվեր տվյալ ասպարեզում կուտակված հետազոտական հսկա փորձի վրա, և այն առավելագույն օգտագործելու կարողությունը, ինչպես նաև նախորդ ուսումնասիրողների ջանքերն ըստ պատշաճի գնահատելու նրա բարեխղճությունը որևէ կասկած չեն հարուցում: Սակայն, հաշվի առնելով, թե որքան աշխատանք է գումարվել այդ փորձին և ջանքերին՝ մենագրությունն իր այս տեսքով կայացնելու համար, համոզվում ես, որ սա շատ և շատ ինքնուրույն ձեռնարկում է՝ եղած գիտելիքները համակարգելու, լրացնելու, ճշտելու և, գլխավորը, պրոֆեսիոնալ խորությամբ իմաստավորելու տեսանկյունից: Նշենք, որ աշխատությունը գրվել է ինչպես Հայաստանի, այնպես էլ

¹² **Ավագյան Ա.**, Ա.Աղասյան. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում // «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, № 2, էջ 259–262:

Ռուսաստանի, Վրաստանի, արտերկրի թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում պահվող պատմագեղարվեստական վիթխարի նյութի, գիտական և տեղեկատու ընդարձակ գրականության, պարբերականների, արխիվային և անտիպ աղբյուրների համակողմանի, մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում:

Խորհրդահայ կերպարվեստի պատմությունն ամփոփված է գրքի երկրորդ մասում: Նրա զարգացման ներքին տրամաբանությանը, առանձին փուլերի գեղարվեստական առանձնահատկություններին և ուրույն սպեցիֆիկային լիովին համապատասխանում է Ա. Աղասյանի նախընտրած պարբերացումը, որը որոշակի այս տեսքով գրեթե չի հանդիպում խորհրդահայ արվեստի պատմությանը նվիրված ընդհանրացնող բնույթի աշխատություններում՝ 1920–1932 թվականներ, 1930–1950-ական թվականներ և 1960–1980-ական թվականներ¹³:

Խորհրդահայ կերպարվեստի առաջին տասներկու տարիները բնութագրվում են իբրև գաղափարագեղագիտական և ստեղծագործական ուղղությունների գոյակցության, մշակույթի բնագավառում համարձակ նախաձեռնումների և կազմակերպական նոր ձևերի, հանրապետության գեղարվեստական կյանքի ընդհանուր աշխուժացման շրջան: Իրադրությունը կտրուկ փոխվում է 1930-ական թվականների կեսերից, երբ ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի տխրահռչակ որոշմամբ Խորհրդային Միությունում լուծարման ենթարկվեցին գրական-գեղարվեստական բոլոր կազմակերպությունները, և խորհրդային արվեստի պաշտոնական մեթոդ հռչակվեց «սոցիալիստական ռեալիզմը»: Կուսակցական գաղափարախոսության հարկադրանքն ու քաղաքական

¹³ Ճիշտ է, դեռևս 1979 թվականին Ն. Ստեփանյանն առաջարկեց խորհրդահայ արվեստի հենց այդ պարբերացումը (տե՛ս **Степанян Н.** Вопросы периодизации армянского советского искусства // IV Республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Ереван, 1979, с. 255–256), որը, սակայն, չստացավ շրջանառություն: Միայն մեկ որոշակի ժամանակաշրջանին վերաբերող բացառություն կազմեց տողերիս հեղինակի «Из истории художественной жизни Армении: 1920–1932» (Երևան, 2002) գիրքը:

բռնությունները հայ կերպարվեստագետների նկատմամբ, իրոք, «անդառնալի կորուստներ» (էջ 96) պատճառեցին 1930–1950-ական թվականների ազգային գեղարվեստական մշակույթին:

Այդուհանդերձ, պահպանելով գիտական օբյեկտիվությունը, հեղինակը ցույց է տալիս, որ այդ շրջանում հայ կերպարվեստը հարստացավ մի շարք շոշափելի ձեռքբերումներով, այդ թվում՝ Ս. Առաքելյանի, Մ. Սարյանի, Գ. Գյուրջյանի, Մ. Աբեղյանի, Մ. Ասլամազյանի, Ա. Բեքարյանի, Հ. Զարդարյանի, Է. Իսաբեկյանի գեղանկարներով, Մ. Սարյանի, Մ. Արուտչյանի, Ա. Շաքարյանի թատերական ձևավորումներով, Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Մ. Արուտչյանի, Տ. Խաչվանքյանի, Ե. Քոչարի, Գ. Խանջյանի գրաֆիկական թերթերով, Ա. Սարգսյանի, Ս. Ստեփանյանի, Ա. Ուրարտուի, Ե. Քոչարի քանդակներով: Խորհրդահայ կերպարվեստի համատեքստում են դիտվում Հայրենական մեծ պատերազմից հետո Հայաստան ներգաղթած արվեստագետներ Ռ. Շիշմանյանի, Բ. Վարդանյանի, Պ. Կոնտուրաջյանի, Ա. Ղարիբյանի, Հ. և Ա. Գալենցների, Հ. Ասատրյանի, Գ. Ահարոնյանի, ինչպես նաև թիֆլիսաբնակ նկարիչներ Ա. Բաժբեուկ-Մելիքյանի, Հ. Կարալյանի, Գ. Գրիգորյանի (Ջիոտտո), Հ. Ղարիբջանյանի ստեղծագործությունները:

Գրքի ամենածավալուն հատվածը 1960–1980-ական թվականների կերպարվեստի պատմությանը նվիրված գլուխն է, որտեղ վերակերտված է խրուշչովյան «ձնհալի» տարիներից ի վեր աննախադեպ զարթոնք ապրած գեղարվեստական կյանքի գունեղ և խայտաբղետ պատկերը՝ նրան ներհատուկ ժանրաթեմատիկ և ոճապլաստիկական բազմազանությամբ, գեղարվեստական հայացքների և «բարբառների» արտակարգ առատությամբ, ստեղծագործական ինքնարտահայտման՝ մինչ այդ աներևակայելի ազատությամբ: «Սկսած 1950-ական թթ. վերջից հայ կերպարվեստում կարևորվում են ու արժևորվում ստեղծագործանհատի գեղարվեստական ինքնատիպ մտածողությունը, նրա աշխատանքներում արտացոլված սուբյեկտիվ ընկալումներն ու մոտեցումները, ոճական ուրույն ձեռագիրը», – նշում է Ա. Աղասյանը (էջ 129): Այս դրույթն են հաստատում տասնյակ հայ

արվեստագետների՝ մենագրության տվյալ մասում գետեղված ստեղծագործական ամփոփ դիմապատկերները՝ որոշակի երկերի համոզիչ վերլուծություններով, անհրաժեշտ զուգահեռներով և համեմատություններով, բանաձևի չափ հստակ սահմանումներով, որոնք ի ցույց են դնում 1960–1980-ական թվականների հայ նկարչության և քանդակագործության պատկերաբովանդակային և ոճաձևաբանական մեծ ամպլիտուդը: Ու թեպետ XX դարի երկրորդ կեսին այսպես կոչված «սարյանական գիծն» ավանդաբար մնում էր հայ գեղանկարչության զարգացման մայրուղին, «դրան զուգընթաց, – գիտնականի խոսքով,– զարգանում էին նաև այլ ուղղություններ, որոնք կապված չէին ո՛չ սարյանական արվեստի պատկերագրության ու կերպարային բովանդակության, ո՛չ էլ սարյանական ոճի կամ կոլորիզմի հետ, թեև օժտված էին ազգային յուրահատուկ, նույնքան հարազատ ու ճանաչելի գունապլաստիկական հատկանիշներով» (էջ 137): Ըստ պարագրաֆների բաշխելով հաստոցային և մոնումենտալ գեղանկարչությունը, գրքարվեստն ու հաստոցային գրաֆիկան, մոնումենտալ, դեկորատիվ և հաստոցային քանդակն ու մանր պլաստիկան՝ հեղինակը մեր տպավորությամբ ընդգրկել է ժամանակաշրջանի ողջ պրոբլեմատիկան, ներառյալ արվեստների համակեցության, սինթեզի խնդիրը, չի անտեսել որևէ նշանակալի երևույթ, անուն, հուշարձան:

Գրքի բովանդակությանը հիանալի ներդաշնակում է նյութի մատուցման եղանակը: Աշխատությունը գրված է գիտականորեն ճշգրիտ, հղկված ու միևնույն ժամանակ գեղեցիկ, պատկերավոր հայերենով: Միանգամայն արդարացված է Ա. Աղասյանի փոքր-ինչ սեղմ, լակոնիկ գրելաոճը, որը բնավ չի հակասում վերլուծական մտքի խորությանն ու ճկունությանը: Համոզիչ և դիպուկ են թե՛ որոշակի երկերի, թե՛ առանձին վարպետների, թե՛ գեղարվեստական ընդհանուր երևույթների վերաբերյալ արված դիտողություններն ու մեկնաբանությունները: Հետազոտողը մեծապես ընդլայնել է մասնագիտական բառապաշարը՝ գործածելով արվեստաբանական եզրերի մոռացված կամ պարզապես անտեսվող, բայց կենսունակ տարբերակները: Ակնհայտ է, որ հոմանիշների տեղին, ճկուն կիրառությունը խիստ օգտա-

կար կարող է լինել հայալեզու արվեստագիտության համար, որի եզրաքանական համակարգը զարգանում է նաև նման աշխատությունների շնորհիվ:

Այսպիսով, «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» գիրքը դարձավ հայ նոր և նորագույն կերպարվեստի ուսումնասիրության բնագավառում Ա. Աղասյանի կատարած երկարամյա աշխատանքի փայլուն հանրագումարը, որն իրավամբ ձեռք բերեց դասագրքի կարգավիճակ:

Ամփոփելով այս հոդվածը՝ կցանկանայինք մտաբերել մի դրվագ: Տարիներ առաջ՝ հեռավոր 1995-ին, երբ նոր էինք ձեռնամուխ լինում Հայաստանի 1920-ական թվականների գեղարվեստական կյանքին նվիրված թեկնածուական թեզի նախապատրաստմանը, մեր գիտական ղեկավար Ա. Աղասյանից ստացանք իր կողմից կազմված արժեքավոր մի քարտարան՝ ատենախոսության թեմային վերաբերող աղբյուրների, փաստերի, պրոբլեմների մանրամասն նշումով: Ավելորդ է ասել՝ որքան նպաստավոր էր այդ տեղեկատվությունը՝ մեր աշխատանքը սկզբից ևեթ փաստական և մեթոդաբանական հուսալի, ամուր հիմքերի վրա դնելու համար: Թերևս սա էր մեր գիտական աշխատելաոճի, մասամբ էլ նախասիրությունների մեկնակետը:

Հավատացած ենք՝ Ա. Աղասյանի անձնական արխիվում այդ քարտարանը միակը չէր: Մյուսները ևս պիտի գործի դրվեն՝ ինչպես հեղինակի, այնպես էլ նրա աշակերտների ու հետևորդների ուժերով: Հուսանք, որ բազմաբեղուն գիտնականը չի սպառել իր հետաքրքրությունը խորհրդահայ գեղարվեստական մշակույթի նկատմամբ, և նրանից ակնկալենք նորանոր հրապարակումներ՝ կոչված այդ կարևոր ժամանակաշրջանի առավել լիարժեք ու համակողմանի լուսաբանմանը:

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԸ՝ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ

Այս տարի՝ օգոստոսի 11-ին, լրացավ հայ անվանի արվեստաբան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Սանկտ Պետերբուրգի Պետրոս Առաջինի անվան գրականության և արվեստների ակադեմիայի թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր¹ Արարատ Աղասյանի 60-ամյակը...

Ա.Աղասյանի մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը լայն է։ Նրա բեղուն գրիչը ծնունդ է տվել հայ կերպարվեստին նվիրված տասնմեկ գրքերի ու մենագրությունների և մոտ հարյուր հիսուն գիտական և գիտահանրամատչելի հոդվածների, նրա խմբագրությամբ լույս են տեսել 53 մասնագիտական գրքեր և ժողովածուներ։ Միևնույն ժամանակ հայ գիտնականը շատ լայնահայաց է. մասնավորապես նրա ստեղծագործական միտքը հագուրդ է ստանում ռուս պոեզիայի գոհարների թարգմանության մեջ։

Անկասկած է Աղասյանի ավանդը հայ արվեստագիտության մեջ։ Սակայն գիտական ձեռքբերումների կողքին չեմ կարող չառանձնացնել նրա մարդկային որակը։

Ա.Աղասյանն իսկական մտավորական է։ Նրա մեջ համատեղված են մարդկային և գիտական բարեխղճությունը։ Նա վեհ է, աննախանձ, բարի, կամեցող, անկեղծ, անաչառ, հարգալից, համեստ, ըմբռնող... «Բայց, այնուամենայնիվ, չեմ կարող չընդգծել, որ իսկական մեծ գիտնականը միշտ էլ բարի անձնավորություն է լինում և միշտ էլ փորձում է օգնել այլոց և հասկապես իր աշակերտներին ու ավելի շատ հպարտանում է նրանց հա-

¹ Աղասյանը նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության «Հուշամեդալի» (2008) և ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալի» (2008) ասպետ է։

ջողովություններով, քան թե մտածում իր հաջողության մասին», - գրում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս և փիլիսոփա Գեորգ Բրուտյանը²: Այս խոսքերն, ասես, լավագույնս բնութագրում են Աղասյանի կերպարը:

2006-ին ընդունվեցի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրա, որտեղ Ա.Աղասյանի գիտական ղեկավարության ներքո ստանձնեցի ֆրանսահայ անվանի նկարիչ Ժան Գառզուի բեմանկարչությանը նվիրված գիտական ուսումնասիրությունս:

Թերևս ամենալավը մի քանի երկար ու ծիգ տարիների ուսումնասիրությունից հիշվել է ղեկավարիս խստապահանջությունը: Երբ ատենախոսությանս որևէ հատվածն արժանանում էր նրա հավանությանը, դա դառնում էր ինձ համար փոքրիկ հաղթանակ: Նման խստապահանջությունն արդարացված էր, քննադատությունը՝ կոնստրուկտիվ: Այն նպաստում էր ուժերիս կենտրոնացմանը, ինքնակրթության, շարադրանքի բյուրեղացմանը: Նման վերաբերմունքը գիտության հանդեպ արժանի է հարգանքի: Այսօր ես ինձ երջանիկ եմ համարում՝ իմ կյանքում նման մարդու հանդիպելու և նման գիտական ղեկավար ունենալու համար, ում խրախուսական խոսքը և աշխատանքիս հավանության արժանացնելն օգնել են ինձ շարունակել գիտության մեջ արվող քայլերը: «Ես համոզվել եմ իմ կյանքի փորձից, - գրում է Բրուտյանը, - որ գիտական ղեկավարի դերը չափազանց մեծ է ինչպես ատենախոսության պատրաստման և պաշտպանության գործընթացում, այնպես էլ այդ գործընթացն ավարտելուց հետո»³:

Անկասկած, Ա.Աղասյանը դեռ շարունակում է մեծ դեր խաղալ իմ և իր մյուս սաների մասնագիտական կայացման գործում, խրախուսում մեր մասնագիտական աճը, այդ թվում՝ մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովների: Առօրյա շփման մեջ, գիտաժողովների կամ ատենախոսությունների պաշտպանությունների ժամանակ նրա գիտական

² **Բրուտյան Գ.**, Գիտական աշխատանքի տեխնոլոգիան, Երևան, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի հրատարակչություն, 2010, էջ 228:

³ Նույն տեղում, էջ 113:

հարցադրումները մտածելու, խորհելու, ինչ-որ բան վերանայելու առիթ են տալիս: Մշտական կատարելագործումը, հոգվածների գիտական պատշաճ մակարդակը, գիտական էթիկայի նորմերի կիրառությունը այն ուղենիշներն են, որոնցով նրա շնորհիվ փորձում ենք առաջնորդվել մեր գիտական գործունեության մեջ:

2010-ին ընդունվեցի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժին՝ որպես կրտսեր գիտաշխատող: Որպես ինստիտուտի աշխատակից՝ ես ականատեսն եմ նրա, թե ինչպիսի անձնավորությամբ ու սիրով են վաստակավոր գիտնականները և նրանց երիտասարդ գործընկերներն այստեղ իրականացնում իրենց մտավոր գործը, ինչը նաև ինստիտուտում հաստատված բարյացակամ մթնոլորտի շնորհիվ է: Կարծում եմ, որ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն այսօր էլ, ինչպես սրանից 50-60 տարի առաջ, կանթեղ է, քանի որ շարունակում է կատարել մշակութային, գիտական, լուսավորչական իր առաքելությունը, պահպանում է լավագույն ավանդույթները: Նշեմ նաև, որ վերջին տարիներին ինստիտուտը համալրվել է երիտասարդ կադրերով, որոնք մշտապես զգում են տնօրինության աջակցությունը:

Ա.Աղասյանի սաների՝ այս ժողովածուում զետեղված հոդվածները լուսաբանում են արվեստաբանի գիտական աշխատությունները, դրանց արդիականությունը, ներդրումը հայ արվեստագիտական մտքի զարգացման մեջ:

Այս հոդվածը նվիրված է Աղասյանի գիտահետազոտական գործունեության մի ասպեկտի՝ հայ Սփյուռքի արվեստին առնչվող նրա գիտաստեղծագործական գործունեությանը:

2009 թվականին լույս տեսավ Աղասյանի՝ ամերիկահայ անվանի նկարիչ Քաջագին (Քաջագունի Քեչեճյան, 1924-2004) նվիրված մենագրությունը⁴: 2009-ի սեպտեմբերի 25-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, արվեստաբան-

⁴ **Աղասյան Արարատ**, Քաջագի մշտավառ կանթեղը, Երևան, «Տիգրան Մեծ», 2009, 128 էջ:

ներ Շահեն Խաչատրյանը, Էմանվել Հակոբյանը, ինչպես նաև նկարչի այրին՝ Սաթենիկ Քեչեճյանը: «Քաջագի երազանքը իրականություն դարձավ այսօր,- նշեց Սաթենիկը,- նրա կյանքը, գործունեությունը, արվեստը ամբողջությամբ ամփոփված են այս գրքում»⁵: Երեկոյթին հնչեցին կոմիտասյան խմբերգերը՝ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյան)⁶: Ծրագրի ընտրությունը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի վկայությամբ, պատահական չէր, «մի կողմից շնորհանդեսը Կոմիտասի ծննդյան 140-ամյակի նախօրյակին էր, իսկ մյուս կողմից՝ Քաջազն իր ստեղծագործության մեջ քանիցս անդրադարձել է Կոմիտասի կերպարին»⁷:

Լիբանանում ծնված, 1947-ին հայրենադարձված ինքնուս նկարիչ Քաջագի տաղանդը դրսևորվել է հասուն տարիքում, բայց արժանացել է բարձր գնահատականի ինչպես հայրենիքում՝ գեղանկարչության տիտաններ Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի կողմից, այնպես էլ հայրենիքից դուրս՝ ԱՄՆ-ում, Եվրոպայում: 1970-ականներից Լոս Անջելեսում բնակություն հաստատած նկարիչը, Աղասյանի բնութագրմամբ, «...սփյուռքահայ այն սակավաթիվ արվեստագետներից էր, որոնց գործերում հայկական շունչը, ազգային ոգին դրսևորվել են ոչ միայն դրանց գաղափարական՝ թեմատիկ ու կերպարային բովանդա-

⁵ **Aris G. Sevag**, Prof. Ararat Aghasyan's Monograph, "Katchazi Mshtavar Kanteghe/The Everlasting Lantern of Katchaz", Presented in Yerevan, Massis Weekly, Volume 29, N 44 (1444), Saturday, December 5, 2009, p. 12.

⁶ **Ասատրյան Աննա**, Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Լիբանանահայ թատրոն, Երևան, Ոսկան Երևանցի, 2011, էջ 9-10: **Ասատրյան Աննա**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ-50, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 179:

⁷ **Ասատրյան Աննա**, Արարատ Աղասյան. Քաջագի մշտավառ կանթը, «Գիտություն», Երևան, նոյեմբեր 11 (216), 2009, էջ 8:

կության, այլև գեղարվեստական մտածողության, նկարչական ինքնատիպ լեզվի, ստեղծագործական անկրկնելի ձեռագրում»⁸:

Իտալիայի «Լեոնարդո դա Վինչի» միջազգային ակադեմիայի թղթակից անդամ, Փարիզի «Լյութեն» միջազգային ակադեմիայի անդամ, բազմաթիվ մրցանակների դափնեկիր Քաջագի մասին գրվել են բազմաքանակ հոդվածներ հայ և արտասահմանյան մամուլում, 2004-ին լույս է տեսել նրա արվեստին նվիրված «Քաջագ. գեղանկար, գրաֆիկա, մոնտաժ» գիրք-ալբոմը⁹: Վերջինիս մեջ արվեստագետի գեղանկարների վերատպությունների կողքին զետեղված են Երվանդ Քոչարի, Շահեն Խաչատրյանի հոդվածները, քաղվածքներ արտասահմանյան մամուլից, Քաջագի նամականուց, արվեստագետի խոհերը, ընդգրկված են նաև Քաջագի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, մատենագրությունը, նկարչի մրցանակների ցուցակը: Սակայն սփյուռքահայ արվեստագետի ստեղծագործական դիմանկարի համակողմանի ուսումնասիրությունն առջևում էր:

Ա. Աղասյանի հեղինակած «Քաջագի մշտավառ կանթեղը» մենագրությունը ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համատեղ համագործակցության արդյունքում հիմնարկված «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության» մատենաշարի առաջին հատորն է: Այն ունի ոչ միայն գիտահետազոտական, այլև քարոզչական նշանակություն. երկլեզու այս մենագրությունն ամփոփում, հայ և օտարազգի հանրության դատին է ներկայացնում Քաջագի արվեստը, վկայում օտար հողում ազգային կենսունակության մասին, գիտականորեն լուսաբանում սփյուռքահայ արվեստի բարդ, գույնզգույն խճանկարի ինքնուրույն արժեք ներկայացնող, վառ, «ոսկևոր» «գունախիճը»:

Մենագրության մեջ հեղինակն առաջին անգամ համակողմանի քննության է ենթարկում Քաջագի կյանքը և ստեղծագործական ուղին: Սաթենիկ Քեչեճյանի անձնական արխիվում

⁸ **Աղասյան Արարատ**, Քաջագի մշտավառ կանթեղը, էջ 49-50:

⁹ **Քաջագ (Քեչեճյան, Քաջագունի)**: Գեղանկար: Գրաֆիկա: Մոնտաժ: Գիրք-ալբոմ: /Նախաբանը՝ Շ. Խաչատրյան: Վերլուծ. հոդվածները՝ Ե. Քոչարի/, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2004, 176 էջ նկ.:

պահվող նամականու, տպագիր մամուլի հիման վրա գիտնականը վեր է հանում հետաքրքիր դեպքեր արվեստագետի կյանքից, բացահայտում նրա մարդկային և ազգային ակտիվ դիրքորոշումը, հայրենանպաստ գործունեությունը, ներկայացնում արվեստագետի մարդկային վեհ որակը, հուզական ներաշխարհը և մտավոր ներուժը:

Կատարվել է լուրջ աշխատանք Քաջազի անթվակիր գեղանկարների և գրաֆիկական թերթերի ստեղծման մոտավոր ժամանակը պարզելու ուղղությամբ՝ գրավոր աղբյուրներում այդ ստեղծագործությունների առաջին հիշատակումների հիման վրա: Առավել ամբողջական է հայալեզու և օտարալեզու մամուլը, ցուցահանդեսների կատալոգներն ընդգրկող 144 անուն մատենագրությունը, արժեքավոր և հետաքրքրական են ծանոթագրությունները:

Միևնույն ժամանակ այս մենագրության անկյունաքարային արժանիքը, ըստ իս, այն է, որ Աղասյանը ծանոթացնում է ընթերցողին Քաջազի ստեղծագործության գաղափարաբովանդակային, ժանրաթեմատիկ, ոճական, կոմպոզիցիոն, տեխնիկական առանձնահատկություններին մասնագիտական և պատկերավոր, արտահայտիչ և խորիմաստ, բազմակողմանի և համապարփակ վերլուծության շնորհիվ: Նա ներթափանցում և վեր է հանում անհատական և ազգային վառ դրոշմը կրող արվեստի բուն ոգին, դրա զարկերակը: Մասնավորապես քննվում է արվեստագետի անհատական ոճի ձևավորումը հայաստանյան շրջանում, նրա ստեղծագործության հասուն փուլը ԱՄՆ-ում, առաջին անգամ համակողմանի մասնագիտական վերլուծության են ենթարկվում ինչպես աստվածաշնչյան թեմաներով, հնագույն ժամանակների հայոց պատմությունից ներշնչված թեմատիկ պատկերները, նատյուրմորտները, այնպես էլ Կոմիտասին, հայոց Եղեռնին, սումգայիթյան կոտորածին, Անիին, Ապոկալիպսիսին նվիրված նկարաշարերը և այլն: Ոճական առումով Քաջազի արվեստի ակունքները որոնելիս Աղասյանը հանգում է մի կողմից Մարտիրոս Սարյանի, Հարություն Կալենցի, Երվանդ Քոչարի և մյուս կողմից ավելի խորքային, «սկզբնագիր»՝ միջնադարյան հայ արվեստի՝ հարթաքանդակների և մանրանկար-

չության ազդեցությանը: Միննույն ժամանակ արդիական շունչ կրող Քաջազի արվեստը զուգադրվում է եվրոպական ավանգարդիստական ուղղությունների՝ էքսպրեսիոնիզմի և «պրիմի-տիվիզմի» հետ:

Մենագրությունը լայն արձագանք ստացավ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ ի դեմս բազմաթիվ գրախոսությունների¹⁰: «Պատմագեղարվեստական նյութի խոհուն, նրբանկատ «ընթերցմամբ» ուսումնասիրողը մեզ է հասցնում Քաջազի գեղագիտական «ուղերձն» ու բարոյագիտական քարոզը, կերտում նրա գունեղ ու գրավիչ ստեղծագործական դիմապատկերը», - գրում է արվեստաբան Արթուր Ավագյանը¹¹:

Ա.Աղասյանը համակողմանի մասնագիտական վերլուծության է ենթարկել նաև ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, «հանճարեղ» (Անդրե Պասկալ Լևիս, արվեստի պատմաբան, Ֆրանսիա) նկարիչ և քանդակագործ Երվանդ Քոչարի արվեստը: Ու թեև Քոչարը չի համարվում սիյուռքահայ արվեստագետ,

¹⁰ **Արմինե Մինասեան**, Քաջազի մշտավառ կանթեղը // «Նոր կեանք», Գլենդեյլ, ԱՄՆ, դեկտեմբեր 3, 2009, էջ 18, 39: **Aris G. Sevag**. Prof. Ararat Aghasyan's monograph The Everlasting Lantern of Katchaz presented to an appreciative public in Yerevan // Nor Gyank, Glendale, December 3, 2009, p. 20; **Aris G. Sevag**. Prof. Ararat Aghasyan's monograph The Everlasting Lantern of Katchaz presented in Yerevan // Massis Weekly, Los Angeles, USA 5 December 2009, p. 4; **Aris G. Sevag**. Prof. Ararat Aghasyan's monograph The Everlasting Lantern of Katchaz presented in Yerevan // Abaka, Montreal Canada, 14 December 2009; **Aris G. Sevag**. Prof. Ararat Aghasyan's monograph The Everlasting Lantern of Katchaz presented in Yerevan // USA Armenian Life Magazine, Glendale USA December 2009; **Aris Sevag**. Book on Katchaz presented in Yerevan // The Armenian reporter, Burbank USA and Yerevan Armenia 5 February 2010, **Արմինե Մինասեան**, Քաջազի մշտավառ կանթեղը // «Ազգ», Երևան, 16 դեկտեմբերի, 2009, հ. 230: **Արմինե Մինասեան**, Նոր գիրք Քաջազի մշտավառ կանթեղը, «Ալիք», Թեհրան, դեկտեմբեր 26, 2009: **Ավագյան Ա.**, Արարատ Աղասյան, Քաջազի մշտավառ կանթեղը // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2010, հ. 1-2, էջ 494-496 և այլն:

¹¹ **Ավագյան Արթուր**, Արարատ Աղասյան, Քաջազի մշտավառ կանթեղը..., էջ 495:

քանի որ նա իր կյանքի նշանակալի մասն անց է կացրել Հայաստանում, սակայն Փարիզում ապրած կարճատև ժամանակահատվածում՝ 1923-1936 թթ., նա ձեռք էր բերել համբավ՝ որպես նորարար ավանգարդիստական նկարիչ, և իր ուրույն տեղը գրավել ֆրանսիական ժամանակակից արվեստում: Փարիզում բնակվելու տարիներին Քոչարն ունեցավ հինգ անհատական ցուցահանդես, իր վրա հրավիրեց ֆրանսիացի հեղինակավոր քննադատների ուշադրությունը, նրա ստորագրությունը դրված է 1936-ի Դիմենսիոնիզի հռչակագրում՝ Վասիլի Կանդինսկու, Պաբլո Պիկասոյի, Նաում Գաբոյի, Ժակ Լիպշիցի, Ռոբեր Դելոնեի և այլ անվանի արվեստագետների կողքին, արվեստագետի ստեղծագործությունները պահվում են Փարիզի Ժորժ Պոմպիդուի անվան արվեստի և մշակույթի կենտրոնում, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և այլ երկրների թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում, նրա անունն ընդգրկված է արտասահմանյան հանրագիտարաններում¹²:

Բարդ ճակատագիր և դժվար կյանք է ունեցել իր հանճարով եզակի արվեստագետը: Թիֆլիս-Փարիզ-Երևան՝ իր կյանքի երեք հիմնական փուլերը, թեև միավորում է Քոչարի «արարչագործ» ձեռքը, սակայն անջրպետում են նրա ստեղծարար որոնումները և արտահայտչամիջոցները:

Ա.Աղասյանի՝ Քոչարին նվիրված մենագրությունների մեջ

¹² Քոչարի արվեստն ընդգրկվել է նաև սովետական և հայաստանյան բառարաններում, ընդհանրական բնույթի աշխատություններում: Տե՛ս **Դգնունի Դ.**, Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան), Երևան, «Լույս», 1977, էջ 510-511: Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, հատոր 2, 2007, էջ 666-667: Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, Հայկական սովետական հանրագիտարան գլխավոր խմբագրություն, հատոր 12, 1986, էջ 474-476: **Avedissyan O.**, Peintres et Sculpteurs Arméniens du 19ème siècle à nos jours, Le Caire, Amis de la culture arménienne, 1959, p. 202-203 և այլն:

առանձին գլուխ է հատկացված նրա փարիզյան շրջանին¹³։ Փարիզյան շրջանի արվեստը լուսաբանվել է նաև «Երվանդ Քոչարի տարածության մեջ» հոդվածաշարի երկրորդ մասում¹⁴, իսկ մինչ այդ՝ 1999-ին՝ ակադեմիկոս Ռուբեն Զարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովին, արվեստաբանը հանդես է եկել Երվանդ Քոչարի տարածական գեղանկարչության որոշ նախադրյալներին և գեղարվեստական առանձնահատկություններին նվիրված բանախոսությամբ¹⁵։ Քոչարի արվեստին Աղասյանն անդրադարձել է նաև իր հեղինակած ընդհանրական բնույթի աշխատություններում¹⁶, Ե.Քոչարի երևանյան թանգարանում

¹³ Գիրքն առաջին անգամ հրատարակվել է 1999-ին Երևանում ռուսաց լեզվով, տարիներ անց՝ 2013-ին, այն վերահրատարակվել է արդեն երկվեզու՝ հայերեն և ռուսերեն տեքստերով, որակյալ վերատպություններով։ Մեր կարծիքով լուրջ արվեստագիտական հիմքերի վրա դրված այս ուսումնասիրությունը մնայուն արժեք է ներկայացնում, և շատ ցանկալի կլիներ, եթե այն թարգմանվեր նաև անգլերեն՝ արևմտյան գիտական հանրությանը հասանելի և հասկանալի լինելու համար։ Տե՛ս **Агасян А.**, Ерванд Кочар. Ереван, Издательство "Гитутюн" НАН РА, 1999, 90 с.; **Աղասյան Ա.**, Երվանդ Քոչարի տարածության մեջ, Երևան, «Ոսկան Երևանցի», 2013, 196 էջ։

¹⁴ **Աղասյան Ա.**, Երվանդ Քոչարի տարածության մեջ // «Ակունք», Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Երևան, 2013, թիվ 1(7), էջ 74-90։ Տե՛ս նաև հեղինակի հանրամատչելի հոդվածները. Երվանդ Քոչար // Վարուժան («Ազատամարտ» թերթի գրական-մշակութային հավելված), Երևան, թիվ 1, հուլիս 1992։ Երվանդ Կոչար։ послание в будущее (К 90-летию со дня рождения) // Советский Карабах, Степанакерт, 27 июля 1989; Лидер авангардного искусства (Интервью о творчестве Ерванда Кочара) // Эфир, Ереван, 2000, 21 декабря, N 51, с. 5։

¹⁵ **Агасян А.**, О некоторых предпосылках и художественном своеобразии Живописи в пространстве Ерванда Кочара // Ակադեմիկոս Ռուբեն Զարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողով։ Զեկուցումների թեզեր։ Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999, էջ 38-39։

¹⁶ Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում (1828-1991 թթ.), Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, էջ 6, 11, 18, 56, 74, 79, 96, 101, 102, 110, 114, 116-118, 120, 123-125, 128, 129, 146-148, 166, 168, 178, 186-188, 191, 193-194, 220, 230, 234, 243, 252, 263-

տեղի ունեցած արվեստագետի հորելյանական ցուցահանդեսի կատալոգի առաջաբանում¹⁷: Գերմանիայի Բոխում քաղաքում 1994-ին տեղի ունեցած Հայաստանի մշակույթին նվիրված հետահայաց ցուցահանդեսի գիտական կատալոգում զետեղվել է արվեստաբանի՝ Քոչարին նվիրված գերմաներեն հակիրճ հոդվածը¹⁸:

Խորհրդային շրջանում Քոչարի ստեղծագործությանը նվիրված հոդվածները, ցուցահանդեսների կատալոգների առաջաբանները, պատկերագրքերն ավելի շուտ տեղեկատվական են և ընդհանրական բնույթ են կրել¹⁹: Ուսումնասիրողների ուշադրությունից հատկապես դուրս է մնացել կամ հպանցիկ ակնարկվել փարիզյան շրջանը, որը դրոշմված էր ավանգարդիստական արվեստի վառ կնիքով: Թերևս միայն 1978-ին Բաքվում Հ.Փիլիպոսյանի պաշտպանած «Երվանդ Քոչար» թեկնածուական ատենախոսության հինգ գլուխներից մեկն առավել մասնագիտական և հանգամանալից է ներկայացրել արվեստագետի փարիզյան շրջանը²⁰, որի որոշ դրույթներ, սակայն, հետագայում ճշգրտվել, ընդլայնվել և վերանայվել են Աղասյանի կողմից: Ֆրանսիայում 1920-1930-ականներին Քոչարի արվեստը լայնորեն լուսաբանվել

266, **Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ.**, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009: Կերպարվեստ // Հայոց պատմություն: Հատոր IV, գիրք առաջին, Երևան, «Զանգակ-97», 2010, էջ 693, 696, 697:

¹⁷ Երվանդ Քոչար: Հորելյանական ցուցահանդեսի կատալոգ (տեքստը՝ Արարատ Աղասյանի), Երևան, «Փրինթինֆո» հրատարակչատուն, 2010 (առանց էջակարգման):

¹⁸ **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ - 50, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, էջ 157: **Aghassian A.** Yervand Kotschar // Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft. Museum Bochum, 1995, S. 384-385: Համառոտ կենսագրականի կողքին ներկայացված են տարածական գեղանկարչության գեղարվեստական առանցքային հատկանիշները:

¹⁹ Տե՛ս Երվանդ Քոչար, Ստեղծագործությունների ցուցահանդես, Երևան, 1980, էջ 135-143:

²⁰ **Пилипосян А.** Ерванд Кочар. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения, Баку, 1978, 25 с.

է, գրվել են հողվածներ, հրատարակվել են կատալոգներ, նրա անունն ընդգրկվել է հանրագիտարաններում²¹, սակայն արդեն 1930-ականների վերջում՝ Քոչարի հայրենադարձությունից հետո, նա աստիճանաբար մոռացության է մատնվել: 1960-ականներին նկարչի երկրորդ կնոջ՝ Մելինե Քոչարի ջանքերով Փարիզում կազմակերպված Քոչարի փարիզյան գործերի անհատական հետահայաց ցուցահանդեսը, և այդ առիթով հրատարակված ֆրանսիացի անվանի արվեստի քննադատ և պատմաբան Վալդեմար Ժորժի գրքույկը²² հայ արվեստագետին վերստին ներկայացրեցին Ֆրանսիայի գիտական հանրությանը: Վ. Ժորժի ակնարկը համառոտակի լուսաբանում է Քոչարի տարածական գեղանկարչությունը, շեշտադրում դրա կարևորությունն ավանգարդիստական արվեստում, ինքնատիպությունը՝ «սեփական բառամթերքը»²³, ու նորարարությունը: «Նկարչութիւնը տարածութեան մէջ» դպրոցը պայթեցուց շրջանակը արձանայնութեան եւ հարթանկարչութեան... Ան քայլ կը պահէ ուրուակերպարանային դարու մը հետ», հավաստում է ֆրանսիացի համբավավոր արվեստաբանը²⁴: Ուսումնասիրությունը ներառում է նաև Քոչարի կենսագրական ուրվագիծը, նրա փարիզյան հոչակը վկայող ցուցահանդեսները, «Պարմանին», «Փարիզի երդիկները» գործերի վերլուծությունը, հատվածներ Դիմանսիոնիզմի մանիֆեստից (1936), Կանդինսկու, Մարսել Դյուշանի, Ռոբեր Դելունեի մտքերից:

Հայ ականավոր արվեստաբանի ուսումնասիրությունն իր հերթին կոչված է ավելի ընդլայնելու մեր պատկերացումները

²¹ **Benezit E.** Dictionary of artists, Paris, éd. Gründ, Vol. 8, 2006, p. 38; **Bénézit E.** Dictionnaire critique et documentaire des peintres, sculpteurs, dessinateurs et graveurs de tous les temps et de tous les pays par un groupe d'écrivains spécialistes français et étrangers. Tome sixième, 1976, Librairie Gründ, p. 296.

²² Տես. **Waldemar G.** Kotchar et la peinture dans l'espace, Paris, Galerie Percier, 1966; **Վալտեմար Ժ.**, Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ (թրգմ. ֆրանս.), Պեյրոյթ, տպ. Մեսրոպ, 1972, 62 էջ, պտկզ.:

²³ Նույն տեղում, էջ 27:

²⁴ Նույն տեղում, էջ 40:

Քոչարի փարիզյան ստեղծագործությունների մասին և խարսխված է արվեստագիտության մեջ լայնորեն կիրառվող բազմազան՝ քննական-համեմատական, նկարագրական, ոճաբանական և այլ գիտական մեթոդներով: Աղասյանը դիտարկում է Քոչարի տարածական գեղանկարչությունն արևմտամերձադարյան և ռուսական ավանգարդիզմի լայն համատեքստում, բացահայտում դրա ակունքները, վերլուծում գեղագիտական սկզբունքները, ծանոթացնում դրանց հիմքում ընկած տեսական մտքին: «Չնահանջելով կուբիստների պես, բայց և մինչև վերջ չհարմարվելով կոնստրուկտիվիզմին, Քոչարը նախանշում է այլընտրանքային իր ուրույն, դեռ անկոխ ճանապարհը: Պահպանելով նկարչության կերպարային հիմքը՝ նա մինևույն ժամանակ այն անջատում, կտրում է կտավից ու ներքաշում տարածության մեջ»,- եզրակացնում է արվեստաբանը²⁵: Նա ներկայացնում է նաև տարածական գեղանկարների տեխնիկական առանձնահատկությունները, լուսաբանում դրանց բովանդակային և ձևաոճական լեզուն, որը կրում է սյուրռեալիզմի չափավոր ազդեցությունը:

Մենագրության մեջ քննվում են նաև Փարիզում Քոչարի գեղանկարչական, գրաֆիկական ստեղծագործությունների²⁶ և քանդակների գեղարվեստական առանձնահատկությունները, որոնք, ինչպես փաստում է հեղինակը, բացահայտում են առնչություններ սյուրռեալիզմի, ֆուտուրիզմի և դասական արվեստի հետ: Ժակ Լիպշիցի, Պաբլո Գարգալոյի, Օսիպ Ցադկինի, Հենրի Մուրի «տրանսպարենտ»՝ թափացանց քանդակային հորին-

²⁵ **Աղասյան Ա.**, Երվանդ Քոչարի տարածության մեջ, էջ 16:

²⁶ Գլխում քննվում են ինչպես մատիտներով, գրիչով, վրձնով ստեղծված գծանկարչական թերթերը, այնպես էլ "repoussé" տեխնիկայով իրականացված աշխատանքները: 2004-ին Երվանդ Քոչարի գրաֆիկական ժառանգությանը նվիրված իր թեկնածուականատենախոսությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի նիստում պաշտպանեց Աղասյանի սանը՝ Հակոբյան Արթուրը (տե՛ս **Հակոբյան Ա.**, Երվանդ Քոչարի գրաֆիկան, սեղմագիր, Երևան, 2004, ինչպես նաև՝ **Акопян А.**, Графика Ерванда Кочара. Ереван, Грабер, 2007, 96 с.)

վածքների հետ է արվեստաբանը զուգահեռում Քոչարի սնամեջ գիպսե արձանները՝ «Գլխաքանդակը», «Հերմաֆրոդիտը», «Կնոջ գլուխը» և այլն: Սակայն, եթե Քոչարն ազդվել է այլ արվեստագետներից և գեղարվեստական ուղղություններից, ապա նա իր համար հետաքրքիր գաղափարներն անց է կացրել իր տաղանդի և անհատականության պրիզմայի միջով՝ ստեղծելով բոլորովին ինքնատիպ գործեր: Փոխազդեցությունների և անհատականի այս յուրօրինակ խառնարանն է ուսումնասիրել հայ արվեստաբանը²⁷:

Ուսումնասիրության մեջ առանձնահատուկ վերլուծվում են գեղարվեստական առումով աչքի ընկնող գեղանկարչական գործերը, 1920-ական թվականների կեսերին նկարչի վրձնած «Տեսիլք», 1924, «Ընտանիք, սերունդներ», 1925, կտավները, որոնցում Աղասյանի կարծիքով. «Քոչարը հասել է խոհական-փիլիսոփայական որոշակի խորության, օգտագործել գեղարվեստական սուր, արտահայտիչ և ընդհանրացնող, արդիականորեն հնչող գունագծային ու պլաստիկական զանազան ձևեր, յուրովի համադրել եվրոպական և արևելյան նկարչության՝ առաջին հայացքից իրարամերժ մոտեցումները»²⁸: Այլաբանական հնչողություն ունեցող, բազմիմաստ այդ կտավները ենթարկվում են պատկերաբանական և ձևաոճական համակողմանի և խորագնին վերլուծության: Առանձին դիտարկվում է նաև նույն տարիներին ստեղծված, Ստալինի՝ սյուրռեալիզմի և ֆուտուրիզմի ազդեցությունը կրող կիսանդրին:

²⁷ Ժամանակին նաև Քոչարն իր գրախոսություններից մեկում առանձնացրել է արվեստագետների ստեղծագործությունները համաշխարհային արվեստի համատեքստում դիտարկելու, փոխազդեցություններն ուսումնասիրելու կարևորությունը: «Զե՞ որ ազդեցությունը կուլտուրա է, եթե արվեստը չի ազդվում, չի հետևում, չի զարգանում, դառնում է մի տեսակ ինքնագործ, ժողատեղծագործության երևույթ և չի մնում համաշխարհային արվեստի էվոլյուցիայի շղթայակապության մեջ, չի կազմում արվեստի պատմության մի օղակը» (տե՛ս **Քոչար Ե.**, Ռ. Շիշմանյանի Էդգար Շահին մենագրությունը // **Քոչար Ե.**, Ես և դուք, Երևան, Մուղնի հրատարակչություն, 2007, էջ 66):

²⁸ Երվանդ Քոչար, Երևան, 2010 (առանց էջակարգման):

«Ժամանակը եկած է, որ վճարուի Քոչարին, այս ստեղծագործ չաստուածին, յարգանքի այն տուրքը որուն իրաւունքը ունի», - գրել է Վ. Ժորժը²⁹: Ուրախալի է, որ հայրենիքում նրան արժանի հարգանքի տուրք մատուցեց նաև հայ արվեստաբանը: Ա.Աղասյանն իր հետազոտության շնորհիվ նշանակալի ավանդ ունեցավ Քոչարի արվեստի ուսումնասիրման, XX դարի եվրոպական կերպարվեստի զարգացման և հայ կերպարվեստի բարենորոգման գործընթացում Քոչարի ստեղծագործական ժառանգության դերի ու նշանակության հստակեցման առումով:

2009-ին Երևանում «Ոսկան Երևանցի» հրատարակչությունը ՀՀ ԳԱԱ գրահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս ընծայեց Աղասյանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» հիմնարար գիտական ուսումնասիրությունը³⁰: 2009-ի մայիսի 14-ին Հայաստանի ազգային պատկերասրահում տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը: Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Չուգասզյանը, արվեստաբան Սարո Սարուխանյանը և այլք: Շնորհանդեսը եզրափակեց Արամ Խաչատրյանի անվան պետական լարային քառյակը (գեղարվեստական ղեկավար՝ միջազգային մրցույթների դափնեկիր, արվեստագիտության թեկնածու Վաչե Հովեյան)³¹: Գրքի անկասկած արժեքը և ներդրումը հայ արվեստագիտության մեջ արձանագրվեց մասնագետների կողմից³²:

²⁹ **Վալտեմար Ժ.**, Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ, էջ 40:

³⁰ **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում: /Պատ. խմբ.՝ Ա. Ասատրյան, Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, 292 էջ, 192 էջ նկ.:

³¹ Տե՛ս **Ասատրյան Աննա**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ - 50: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, էջ 182-183:

³² Տե՛ս **Ավագյան Ա.**, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2009, հ. 2, էջ 259-262: Նոր աշխատու-

Վաղուց սպասված, երկուդարյա հայ արվեստի զարգացման միտումները լուսաբանող այս երկասիրության գլխավոր նպատակն է «...ընդլայնել և խորացնել ազգային նոր կերպարվեստի մասին առկա պատկերացումները, ընդարձակել և հնա-

թյուն // Կերպարվեստ, Երևան, 2009, հ.1,2,3 (18,19,20), էջ 83: **Հասարթյան Մ.**, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2009, հ. 2-3 (181-182), էջ 271-275: **Տեր-Մինասյան Ա.**, Հայկական կերպարվեստին նվիրված կարևոր ուսումնասիրություն // Ճարտարապետություն և շինարարություն, Երևան, 2009, հ. 4 (38), ապրիլ, էջ 32-33: **Սանթրյան Վանիկ**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում // «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 23 մայիս 2009, շաբաթ, թիվ 97 (4688), էջ 5: **Մկրտչյան Գայանե**, Հայ կերպարվեստի երկու դարը՝ մեկ գրքում // «Ազատամտություն», Երևան, 28.05.2009թ., հինգշաբթի, № 99 (184), էջ 8: **Բադալյան Մելանյա**, Արարատ Աղասյանի նոր աշխատությունը՝ «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» // «Ազգ», Երևան, մայիս 2009: «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում ընթացքին» գիրքին շնորհահանդես // «Հայրենիք», Վաթերթաուն (ԱՄՆ), յուլիս 3, 2009, ուրբաթ, էջ 14: **Ծիրանի Մ.**, Շատոնց սպասուած կարեւոր աշխատութիւն մը // «Ազդակ», Պէյրութ, երկուշաբթի, 7 սեպտեմբեր 2009, էջ 6: **Գրիգորյան Կ.**, «Հայ արվեստի պատմություն» // «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 21 նոյեմբեր 2009, թիվ 226 (4817), էջ 5: **Авакян С.** Ценное издание // Комсомольская правда в Армении, Ереван, 26 июня – 2 июля 2009 г., № 25, **Степанян М.** Культурный феномен // Голос Армении, Ереван, 30 июня 2009 г., № 71(19862), с. 6; **Микаелян К.** Фолиант что надо. Весомый и красивый // Новое время, Ереван, 24 ноября: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը ներկայացրեց մենագրությունը ՀՀ պետական մրցանակի կերպարվեստի ոլորտում, տե՛ս **Ասատրյան Ա.**, Ներկայացված է Հայաստանի պետական մրցանակի // «Գիտություն», Երևան, 2009, Երևան, հ. 10 (215), հոկտեմբեր, էջ 6: **Ասատրյան Ա.**, Ներկայացված է Հայաստանի պետական մրցանակի՝ Արարատ Աղասյան. «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» // «Ազգ», Երևան, 27 նոյեմբեր 2009, ուրբաթ, հ. 217 (4359), էջ 6: Նույն՝ 2009-ին լույս տեսավ նաև Ա.Աղասյանի, Մ.Հասարթյանի, Հ.Հակոբյանի և Վ.Ղազարյանի «Հայ արվեստի պատմություն» գիրքը, որն իր հեղինակներին բերեց ՀՀ պետական մրցանակ կերպարվեստի ոլորտում (**Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասարթյան Մ., Ղազարյան Վ.**, Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2009, 575 էջ նկ.):

րավորինս ամբողջացնել տվյալ շրջանի հայ նկարչության և քանդակագործության պատմական համապատկերը, նյութը դիտարկել տարբեր կողմերից, լայն տեսանկյունով, գիտական շրջանառության մեջ դնել մինչ այժմ անհայտ, մոռացության մատնված կամ ժամանակին անտեսված անուններ և ստեղծագործություններ, ցույց տալ ազգային նոր կերպարվեստի գեղարվեստական ուրույն գծերը»³³:

Մենագրության մեջ լուսաբանվում է XIX-XX դարերի արևելահայ և արևմտահայ կերպարվեստը, միևնույն ժամանակ դիտարկվում է նաև արտերկրում ապրած և ստեղծագործած հայ նոր շրջանի կերպարվեստին առնչվող հայ կերպարվեստագետների ստեղծագործությունը: Առհասարակ հայ Սփյուռքի արվեստի ընդգրկումը հայ արվեստի պատմության մեջ բավականին խնդրահարույց է, ինչի մասին վկայում է նաև հեղինակը. «...հայ նոր կերպարվեստի համատեքստում այն (*սփյուռքահայ արվեստը-Մ.Ք.*) ընդգրկելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզել գեղարվեստական այդ տարաբնույթ ու խայտաբղետ հայ մասնագետներին հիմնականում անծանոթ կամ անմատչելի (նկատի ունենք բնօրինակները) երևույթի ազգային ինքնության գիտական որոշակի մոտեցումներ ու չափորոշիչներ պահանջող բարդ խնդիրը»³⁴: Ուշագրավ է, սակայն, որ այս ուսումնասիրության մեջ արդեն փորձ է արվում առաջին անգամ կամրջելու սփյուռքահայ արվեստն ազգային կերպարվեստի զարգացման հիմնական մայրուղու հետ: Ի տարբերություն ասպարեզում եղած ընդհանրական բնույթի հայալեզու և ռուսալեզու այլ ուսումնասիրությունների³⁵, որոնցում կարելի էր հանդիպել արտ-

³³ **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 4:

³⁴ Նույն տեղում, էջ 232:

³⁵ Տե՛ս **Խաչատրյան Շ.**, XIX-XX դարերի հայ նկարիչներ, Երևան, Հայաստանի ազգային պատկերասրահ, 2001 (երկրորդ հրատարակություն), առանց էջակարգության, նկ., Խորհրդային Հայաստանի կերպարվեստը. 1922-1934, Երևան, «Հայպետհրատ», 1934, 268 էջ, նկ., **Սարգսյան Մ.**, Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը XIX-XX դարերում, Երևան, Հայկական ՍՍԴ ԳԱ հրատարակչություն, 1953, 180 էջ նկ.: **Մարտիկյան Ե.**, Հայկական կերպարվեստի

երկրում ստեղծագործած սակավաթիվ արվեստագետների մասին հիշատակումներ, այս հետազոտության մեջ ընդգրկվել է սփյուռքահայ արվեստագետների ավելի լայն համապատկեր, ավելին՝ արժևորվել են նրանց տեղը և դերը XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազգային կերպարվեստի զարգացման մեջ, լուսաբանվել են նրանց կապը և փոխառնչությունները Հայաստանի հետ, ազգային կերպարվեստագիտական միությունների հետ, հայրենիքում և արտասահմանում բնակվող հայրենակից արվեստագետների հետ, անդրադարձ է արվել նրանց արվեստում ազգայինի դրսևորումների վրա և այլն:

Սփյուռքահայ մի շարք արվեստագետների գործունեությունը ներառվել է ուսումնասիրության առաջին բաժնի երկրորդ գլխում, որտեղ ներկայացված է XIX դարի վերջի և XX դարի սկզբի արվեստը (1870-1918թթ.): Նյութը մատուցված է ժամանակագրական հաջորդականությամբ և, ինչպես ուսումնասիրության մյուս գլուխներում, դասակարգված է ըստ ժանրերի՝ դիմանկար, բնանկար, կենցաղային ժանր, պատմանկար, նատյուրմորտ և այլն: Հայկական բնանկարի զարգացման հետ հեղինակը կապում է ինչպես առավել հայտնի սփյուռքահայ ծովա-

պատմություն, Երևան, «Սովետական գրող», 1983, 1987 նկ: Очерки по истории искусства Армении. Сборник статей. Москва-Ленинград, Искусство, 1939, 104 с.; **Измайлова Т., Айвазян М.**, Искусство Армении, Москва, Искусство, 1962, 260 с.; **Казарян М.**, Современная скульптура Армении. Москва, Советский художник, 1975, без пагинации, илл.; **Казарян М.**, Современная живопись Армении, Москва, Советский художник, 1976, без пагинации, ил., **Казарян М.**, Изобразительное искусство Армянской ССР, Москва, Советский художник, 1978, 222 с., ил; Очерк по истории армянского изобразительного искусства. Ереван, Издательство АН АрмССР, 1979, 216 с.; История искусства народов СССР. Москва, Изобразительное искусство, 1979-1984, ил.; **Степанян Н.**, Очерк изобразительного искусства Армении. Москва, Советский художник, 1985, 104 с., ил.; **Степанян Н.**, Искусство Армении. Черты историко-художественного развития, Москва, Советский художник, 1989, 312 с.; **Игитян Г.** Армянская палитра. XX век. Ереван, Тигран Мец, 2004, 363 с, ил; **Игитян Г.** Армянская палитра. Новое поколение, Ереван, Тигран Мец, 2005, 371 с., ил. և այլն:

նկարիչներ Վարդան Մախոխյանի, Արսեն Շաբանյանի, Շառլ Աղամյանի, բնանկարիչ Հովհաննես Ալխազյանի, Արշակ Ֆեթվաճյանի, այնպես էլ մեզանում քիչ հայտնի ֆրանսահայ նկարիչներ Հրանտ (Գյուլբենկ) Գյուլբենկյանի, Հրանտ Ալյանաքի, եգիպտաբնակ Տիրան Կարապետյանի գործունեությունը: Կենցաղային նկարչության զարգացման մեջ առանձնացվում է լեհաստանաբնակ արվեստագետ Գրիգոր Գաբրիելյանի, ֆրանսահայ նկարիչներ Սարգիս Խաչատուրյանի, Շառլ Կարապետ Նշանյանի, Երվանդ Դեմիրճյանի, Լևոն Սերովբե Քյուրքչյանի և այլոց ավանդը: Լուսաբանվում են դիմանկարչության ասպարեզում իրենց դրսևորած մի շարք արվեստագետների, այդ թվում՝ ֆրանսահայ տաղանդաշատ արվեստագետներ Արմինիա (Արմենուհի) Կարբոնել-Բաբայանի, Սարգիս Տիրանյանի, Հովսեփ Փուշմանի գործերը: «Նատյուրմորտը մեծ տեղ չի զբաղեցրել XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ գեղանկարչության մեջ, սակայն առանձին արվեստագետների մոտ այն ոչ միայն կարևորվել, այլև բացառիկ նշանակություն է ստացել», - նկատում է հեղինակը³⁶՝ մատնանշելով ազգային կերպարվեստում նատյուրմորտի հիմնադիր, ֆրանսահայ նկարիչ Զաքար Զաքարյանի դիմանկարները, դիտարկելով Հովսեփ Փուշմանի, Եգիպտոսում և ԱՄՆ-ում ապրած նկարիչ Հարրի Տիրիդի արվեստը, հիշատակելով արտասահմանում որոշակի համբավ ձեռք բերած ռումինաբնակ հայազգի նկարիչներ Թեոդոր Բլըկյանի, Աբգար Բալթազարի (Պալթազարյան), Իտալիայում ապրած Ասլան դ'Աբրոյի (Ապրոյան), Լեհաստանում Կրակովի գեղարվեստից ակադեմիայի առաջին ռեկտոր Թեոդոր Աքսենտովիչի, հունգարական ազգային ռեալիստական դպրոցի հիմնադիր Շիմոն Հոլշիի և այլոց գործունեությունը: XIX դարավերջի և XX դարասկզբի ազգային գրաֆիկայի զարգացման գործում իրենց ներդրումը մուծած արևելահայ ու արևմտահայ արվեստագետների կողքին հետևողականորեն քննվում է օֆորտի փայլուն ֆրանսահայ վարպետներ Էդգար Շահինի (Շահինյան), Տիգրան Փո-

³⁶ **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 53:

լադի (Փոլադյան) գրաֆիկան: XIX դարի վերջում և XX դարի առաջին տասնամյակներում քանդակագործության զարգացման մեջ իրենց լուսն են ունեցել իր ստեղծագործական կյանքը հիմնականում Փարիզում անցկացրած քանդակագործ, Խաչատուր Աբովյանի քանդակի հեղինակ Անդրեաս Տեր-Մարտիքյանը, ծնունդով մշեցի, ամերիկահայ քանդակագործ, Աբրահամ Լինկոլնի հուշարձանի հեղինակ (Սան Ֆրանցիսկո) Հայկ Բադիկյանը, ամերիկահայ քանդակագործ Ջեք (Հակոբ) Փափազյանը, XX դարի խոշորագույն հայ վարպետներից Հակոբ Գյուրջյանը, ֆրանսահայ քանդակագործ Հրանտ Բենդերը, Ֆրանսիայում, ապա Իտալիայում մասնագիտացած Աննա Արդուօյանը և այլք:

Արվեստագիտության մեջ լայնորեն կիրառվող ոճաբանական, ձևաբանական, կառուցվածքային, պատկերագրական ու պատկերաբանական մեթոդների հիման վրա մենագրության հեղինակը վերլուծում է սփյուռքահայ արվեստագետների ամենատիպական աշխատանքները և իր սուր դատողականության, բարձր պրոֆեսիոնալիզմի և խորաթափանց աչքի շնորհիվ վեր է հանում դրանց գեղարվեստական, տեխնիկական, գաղափարաբովանդակային առանձնահատկությունները³⁸: Միևնույն ժամանակ ուսումնասիրությունը դրվում է անաչառ և օբյեկտիվ հիմքերի վրա. այն զերծ է կանխակալ գաղափարական պիտակներից, մակերեսային մեկնաբանություններից, ավելորդ նկարագրական մանրամասներից: Արվեստագետների գործունեությունը լուսաբանվում է հնարավորինս սպառիչ, կենսագրականի կողքին խնամքով և մանրազնին ճշտումներով ներկայացվում են գեղարվեստական գործերի պահպանման վայրերին, ցուցահանդեսներին առնչվող և այլ արժեքավոր ու հարուստ տեղեկություններ³⁹:

³⁸ Նման մեթոդաբանական մոտեցումը բնորոշ է նաև մենագրության մյուս հատվածների համար, որոնց դիտարկումը, սակայն, դուրս է մեր հոդվածի շրջանակներից;

³⁹ Մենագրության ծանոթագրություններում հստակեցվում, ճշտվում, լրացվում և հարստացվում է արվեստագետների գործունեությանն առնչվող տեղեկատվականը: Տե՛ս օրինակ, **Աղասյան Ա.**, Հայ կեր-

Ուսումնասիրության մեջ տեղ գտած համեմատությունը նորագույն եվրոպական ուղղությունների հետ՝ իմպրեսիոնիզմից և մոդեռն ոճից մինչև կուբիզմ, ֆուտուրիզմ և այլն, արդիական է հատկապես արտասահմանում կրթություն ստացած և օտարազգի ուսուցիչների, միջավայրի ազդեցության ներքո ձևավորված սփյուռքահայ արվեստագետների պարագայում: Միևնույն ժամանակ, տեղադրելով նրանց ստեղծագործությունը եվրոպական համատեքստում, արժևորելով նրանց դերն այդ մակարդակի վրա, հեղինակը ջանում է նկատել և վեր հանել ազգային դրսևորումները: Այս մոտեցումն արտացոլում է սփյուռքահայ արվեստի ինքնատիպությունը, յուրօրինակ և խնդրահարույց երկփեղկվածությունը: «Աշխարհագրական այդ լայնասփյուռ, բայց ցաքուցրիվ ու կղզիացած իրողության մեջ հայ արվեստագետների կերտած աշխատանքները միավորող, դրանց ընդհանրության մասին վկայող, տարբերիչ հիմնական գործոնն է դառնում ոչ այնքան գեղարվեստական ինքնարտահայտման սպեցիֆիկ ձևը, որքան գաղափարական ու կերպարային բովանդակությունը՝ ազգային թեման, հայ ժողովուրդը, հայոց պատմությունը, հայերի կյանքը, հայրենի բնաշխարհը», - եզրակացնում է հեղինակը⁴⁰:

Մենագրության առանձին արժեք է մատենագիտական հավելվածը: «Սա հայ արվեստի պատմությանը վերաբերող ամենաընդարձակ ցուցակն է, որն ունի առանձին գիտաճանաչողական նշանակություն և նույնիսկ կարելի է առանձին տպագրել», - նշում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանը⁴¹: Աղբյուրներն ընթերցողին հնարավորություն են ընձեռում ծանոթանալու ասպարեզում տվյալ արվեստագետին առնչվող առկա մեծ կամ փոքր ուսումնասիրություններին: Մասնավորապես այն ընդգրկում է նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստին

պարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 242, 249-251:

⁴⁰ Նույն տեղում, էջ 228:

⁴¹ **Հասրաթյան Մ.**, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 274:

առնչվող ընդհանուր բնույթի աշխատությունները, հայ և օտար-ազգի հեղինակների՝ արտասահմանում կատարած ուսումնասիրությունները, հատկապես Ֆրեդերիկ Մակլերի, Օնիկ Ավետիսյանի, Գարո Քյուրքմանի արժեքավոր աշխատությունները, XIX դարի վերջերից XX դարի սկզբի արևմտահայ, արևելահայ, Սփյուռքի գրական-գեղարվեստական հանդեսները, որոնք հարուստ են տեղեկատվական նյութով և ժամանակի տեսական մտքի դրսևորումներով՝ Գ. Հովսեփյանի, Ա. Սազրգյանի, Գ. Լևոնյանի, Պ. Ադամյանի, Հ. Արապյանի, Ա. Շիրվանզադեի, Ե. Լալայանի, Ա. Չոպանյանի, Տ. Եսայանի, Ռ. Շիշմանյանի և այլոց արվեստաբանական և քննադատական հոդվածներով⁴²:

Հայ նկարիչների և քանդակագործների անվանացանկը դյուրացնում է որոնումը, իսկ գունավոր վերատպությունները տեքստի պատկերավոր ուղեկցորդն են:

Ինչպես այս, այնպես էլ Ա.Աղասյանի մյուս աշխատություններում ակնառու է սերը մայրենի լեզվի հանդեպ, ի հեճուկս ռուսալեզու միջավայրում ստացած մասնագիտական կրթության, գիտնականը հղկել է հայերենը, իր գրվածքներով, մասնագիտական դիպուկ բնութագրերով նպաստել մասնագիտական տերմինաբանության հարըստացմանն ու հստակեցմանը: «Գիտական շրջանառության մեջ են դրվում հայերեն մասնագիտական մի շարք տերմիններ և հասկացություններ, որոնք հարստացնում են արվեստաբանության ասպարեզում գործածվող բառապաշարը», - գրում է Ա.Ասատրյանը⁴³: «Հետազոտողը մեծապես ընդլայնել է մասնագիտական բառապաշարը՝ գործածելով արվեստագիտական եզրերի մոռացված կամ պարզապես անտեսվող, սակայն կենսունակ տարբերակները: Ակնհայտ է, որ հոմանիշների տեղին, ճկուն կիրառությունը կարող է խիստ օգտակար լինել հայալեզու արվեստագիտական տերմինաբա-

⁴² **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 269-283:

⁴³ Տե՛ս **Ասատրյան Աննա**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50, էջ 183:

նությանը, որը ձևավորվում է նաև նման աշխատությունների շնորհիվ», - նկատում է Ա.Ավագյանը⁴⁴:

Այսպիսով, այս ուսումնասիրության անկասկած բյուր արժանիքների կողքին առանձնացնում ենք նաև, որ այն խորացնում է XIX-XX դարերի ազգային կերպարվեստի վերաբերյալ մեր պատկերացումները, ընդլայնում ընդհանուր համապատկերը, ներառում նաև սփյուռքահայ արվեստագետներին, արժևորում նրանց դերը և տեղը հայ արվեստի զարգացման ընդհանուր գործընթացում: Ընդ որում՝ ներկայացվում են ոչ միայն ճանաչված, անուն հանած արվեստագետները, այլ նաև մեզանում քիչ հայտնի նկարիչները: Արտասահմանում ապրած և ստեղծագործած արվեստագետների ամփոփ, հստակ, փաստականորեն ճշգրտված կենսագրականները գոյակցում են նրանց արվեստի ժանրաթեմատիկ, գաղափարաբովանդակային, ոճական, կոմպոզիցիոն առանձնահատկությունների դիպուկ, արտահայտիչ և սեղմ բնութագրերի հետ: «Եվ Ա.Աղասյանի մենագրությունն... կարելի է ասել՝ ունի «որակի նշան»: Այն ավանդ է հայագիտության տվյալ բնագավառում, կծառայի նաև որպես ուսումնական ձեռնարկ արվեստաբան ուսանողների համար», - գրում է Մ.Հասարայանը⁴⁵: Մենագրությունը մեծապես օգտակար է ինչպես հետազոտողների, այնպես էլ բուհերի դասախոսների և ուսանողների համար:

2005 թվականի հոկտեմբերի 7-ին և 8-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում «Տեսի գերկիրն Իտալիոյ» հայ-իտալական բարեկամության օրերի 73 միջոցառումների շրջանակներում մեկնարկեց «Վենետիկյան ընթերցումներ» երկօրյա միջազգային գիտաժողովը: ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և Իտալիայի Հանրապետության նախագահ Կ.Ա. Չամպիի բարձր հովանու ներքո իրականացված այդ «...գիտաժողովը կարևոր նշանակություն ունեցավ հայ-իտալական մշակութային առնչությունների աշխուժաց-

⁴⁴ **Ավագյան Ա.**, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 262:

⁴⁵ **Հասարայան Մ.**, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 275:

ման և գիտական կապերի վերակենդանացման ուղղությամբ»⁴⁶: Հայաստանից և Իտալիայից մասնակցող շուրջ 30 հայագետների թվում էր Ա. Աղասյանը, ում բանախոսությունը կրում էր «Հայ-իտալական գեղարվեստական առնչությունների պատմությունից» խորագիրը⁴⁷:

Իրեն հատուկ հստակությամբ, պատմական լայն ընդգրկումով և հանրագիտարանային արժանահավատությամբ Ա.Աղասյանը ներկայացնում է հայ-իտալական գեղարվեստական առնչությունների բազմադարյա հարուստ պատմությունը, որն սկսվում է մ.թ. VI դարից և շարունակվում մինչ օրս: Առաջին անգամ ամփոփ լուսաբանվում են կերպարվեստի, ճարտարապետության, երաժշտության, թատրոնի ոլորտում երկու հնամենի ազգերի միջև առկա պատմամշակութային կապերը, փորձի փոխանակումը, փոխազդեցությունները, նշանակալի պատմական և գեղարվեստական իրողությունները, երևան են հանվում մեզանում քիչ հայտնի արվեստագետների անունները: «Ա.Աղասյանի բանախոսության մեջ արտացոլվեցին նաև իտալացի, հայ և այլազգի արվեստագետներ Լ. դա Վինչիի, Ջ.Բայրոնի, Հ.Այվազովսկու, Տ.Չուխաճյանի, Ալ.Սկարլատիի, Գ.Դոնի-ցետտիի, Կոմիտասի, Ավ.Իսահակյանի, Մ.Սարյանի, Վ.Փափազյանի, Ա.Խաչատրյանի և այլոց ստեղծագործական կենսագրության հետ կապված հիշարժան փաստեր ու վկայություններ, որոնք առանձնակի արժեք ու հետաքրքրություն, կշիռ ու որակ են տալիս հայ-իտալական գեղարվեստական առնչությունների բազմադարյան պատմությանը», - գրում է Ա.Ասատրյանը⁴⁸: Զե-

⁴⁶ Տե՛ս **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ - 50, էջ 199: Գիտաժողովի մասին ավելի մանրամասն տե՛ս **Ասատրյան Ա.**, Վենետիկյան ընթերցումներ միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ-իտալական պատմամշակութային առնչություններին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2005, N 3, էջ 292-296: Այս գիտաժողովի կազմակերպման և անցկացման համար Ա.Աղասյանը պարգևատրվում է ՀՀ ԳԱԱ պատվոգրով:

⁴⁷ **Աղասյան Ա.**, Հայ-իտալական գեղարվեստական առնչությունների պատմությունից // Տեսի զերկիրն Իտալիոյ. հայ-իտալական բարեկամության օրեր, Երևան, «Տիգրան Մեծ», 2005, էջ 117-127:

⁴⁸ **Ասատրյան Ա.**, Վենետիկյան ընթերցումներ միջազգային գիտա-

կուցումն ասես ամփոփում էր այն հարուստ ավանդույթները, որոնք ամուր հենակետ են դառնում երկու ժողովուրդների ապագա բարեկամության համար:

Սփյուռքահայ առանձին արվեստագետների ստեղծագործության լուսաբանմանն էին նվիրված գիտնականի՝ միջազգային գիտաժողովներին ներկայացրած զեկուցումները. 1995-ին Երևանում «Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ» II միջազգային գիտաժողովին նա հանդես եկավ «Լևոն Թութունջյանի երրորդ «վերադարձը»» ելույթով, 2001-ին Երևանում «Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ» VII միջազգային գիտաժողովին՝ «Արմինիա Կարբոնել-Բաբայան՝ Էժեն Կարիերի հայ աշակերտուհին» հաղորդումով, 2003-ին Երևանում «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները» Հայագիտական միջազգային համաժողովին՝ «Սարգիս Խաչատուրյանի արվեստը» զեկուցումով, իսկ 2006-ին Ստեփանակերտում՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովին՝ «Շուշեցի մեծ քանդակագործը (Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյակի առթիվ)» բանախոսությամբ:

Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուի առաջաբանում Սորբոնի բարձրագույն ուսմանց գործնական կրթարանի (EPHE) պատմաբանասիրական բաժանմունքի դիվանապետ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ժան-Պիեռ Մահեն նշում է, որ այդ տարեկան գիտաժողովները նպատակ ունեն նպաստելու Հայաստանի և Ֆրանսիայի մարդկային և մտավոր փոխանակումներին, նորանոր ուսումնասիրություններով ամրապնդելու երկու հին ժողովուրդների անխզելի բարեկամությունը⁴⁹: Այս համատեքստում Ա.Ա-

ժողով՝ նվիրված հայ-իտալական պատմամշակութային առնչություններին, էջ 294:

⁴⁹ **Մահե Ժ.-Պ.**, Երկու խոսք // Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ: Միջազգային երկրորդ կոնֆերանս (Երևան, 8-9 սեպտեմբերի, 1995): Զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 1997, էջ 5:

ղասյանի ներկայացրած զեկուցումը դառնում է ավելի արդիական նաև նրանով, որ պայմանավորված է 1920-1930-ականներին փարիզյան գեղարվեստական կյանքում կարևոր դեր խաղացած, ֆրանսիական մշակութային գանձարանն իր լույսն ներդրած, բայց տասնամյակներ ստվերված, մոռացված հայազգի նկարիչ Լևոն Թութունջյանի վրա հայ արվեստագիտական, քննադատական միտքը սևեռելու կարևոր մտադրությամբ⁵⁰: Ամփոփ, բայց հնարավորինս ամբողջական լուսաբանվում են Թութունջյանի կյանքի և գործունեության հիմնական ասպեկտները⁵¹, անհատական և խմբային ցուցահանդեսները, կուրիզմին, ապա՝ տաշիզմին և սյուրռեալիզմին հարող գեղարվեստական նախասիրությունները, արժևորվում են նրա դերն ու տեղը ժամանակի ֆրանսիական արվեստի համատեքստում: «Նկարչի մահից հետո նրա ստեղծագործությունները հաճախ են երևում 1930-ական թվականների եվրոպական կերպարվեստին նվիրված տարբեր ցուցահանդեսներում... Մեր աչքի առաջ տեղի է ունենում նկարչի երրորդ, այս անգամ, կարծես, վերջնական «վերադարձը»», - նկատում է Ա.Աղասյանը⁵²: Ա.Աղասյանի՝ Լ.Թութունջյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված մեկ այլ հոդված գերմաներեն լեզվով ներառվել է Գերմանիայի Բոխում քաղաքում 1995-ին հրատարակված Հայաստանի մշակութային նվիրված հետազոտող ցուցահանդեսի գիտական կատա-

⁵⁰ **Աղասյան Ա.**, Լևոն Թութունջյանի երրորդ «վերադարձը» // Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ, էջ 15-21:

⁵¹ Այդ տարիներին անիմաստ էր փնտրել Թութունջյանի կյանքին առնչվող նույնիսկ համառոտ տեղեկություններ հայալեզու աղբյուրներում, հանրագիտարաններում: Մինչույն ժամանակ հայ արվեստագետի անունն արդեն ընդգրկված էր ֆրանսիական հանրագիտարաններում. տե՛ս Léon Arthur Tutundjian. Larousse "Dictionnaire de la peinture" // <http://www.larousse.fr/encyclopedia/peinture/Tutundjian/154685>, **Bénézit E.** Dictionnaire des peintres, sculpteurs, dessinateurs et graveurs. Paris, Librairie Gründ, Tome dixième, 1976, p. 317: 1994-ին Փարիզում հրատարակվել էր Թութունջյանին նվիրված մենագրություն (տե՛ս **Gladys C. Fabre.** Tutundjian. Paris, éd. du Regard, 1994, 175 p., ill):

⁵² **Աղասյան Ա.**, Ֆրանսահայ նկարիչ Լևոն Թութունջյանը, էջ 21:

լոգում⁵³:

Արմինիա Կարբոնել-Բաբայանի՝ XX դարի ֆրանսահայ կերպարվեստի պատմության մեջ ճանաչման արժանացած, բայց հետո գրեթե մոռացված կին արվեստագետի մասին էր «Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ» միջազգային VII գիտաժողովին ներկայացրած Աղասյանի գիտական ելույթը⁵⁴: Այն հրատարակվել է 2001-ին ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսում»: Տասնութեջանոց այս ընդարձակ հոդվածում հանգամանալից լուսաբանվում է ֆրանսահայ նկարչուհու կենսագրությունը, պարզաբանվում են նրա գործունեությանը, մասնագիտական կրթությանը, գեղագիտական հայացքների ձևավորմանն առնչվող տեղեկությունները, ճշգրտվում են նկարչուհու ծննդյան և մահվան տարեթվերին, ծննդավայրին, նրա առանձին ստեղծագործությունների անվանումներին վերաբերող անճշտությունները⁵⁵, ներկայացվում են ժամանակի սփյուռքահայ մամուլի արձագանքները: Ուրույն ուշադրություն է հատկացվում նկարչուհու և նրա ուսուցչի՝ ֆրանսիացի գեղանկարիչ, սիմվոլիզմի հետևորդ Էժեն Կարիերի ստեղծագործությունների համեմատական վերլուծությանը, որը հնարավորություն է ընձեռում վեր հանելու նրանց արվեստում առկա ընդհանրությունները և տարբերությունները, վիճարկելու արվեստագետ, արվեստաբան Հրանտ Ալյանաքի՝ Կարբոնել-Բաբայանի անհատական ձեռագրի ինքնուրույնությունը մերժող կարծիքը: Հոդվածում քննվում են նաև Կարբոնել-Բաբայանի բնա-

⁵³ **Agassian A.**, Léon (Lewon) Tutundjian // Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft. Museum Bochum, 1995, S. 387-388.

⁵⁴ **Աղասյան Ա.**, Արմինիա Կարբոնել-Բաբայան՝ Էժեն Կարիերի հայ աշակերտուհին // Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ: VII միջազգային գիտաժողովի նյութեր: «20-րդ դարի Ֆրանսիան և հայերը» (Երևան, 20 և 22 սեպտեմբերի, 2000), Երևան, «Վան Արյան» հրատարակչատուն, «Մուղնի» հրատարակչություն, 2001, էջ 256-265: **Աղասյան Ա.**, Մի էջ ֆրանսահայ կերպարվեստի պատմությունից // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2001, հ.1(156), էջ 97-114:

⁵⁵ Տե՛ս **Աղասյան Ա.**, Մի էջ ֆրանսահայ կերպարվեստի պատմությունից, էջ 101-102:

նկարները և ինտերիերները: «Իմպրեսիոնիզմ, նոր ռոմանտիզմ և ինչ-որ չափով նաև սիմվոլիզմ՝ ահա այն հիմնաքարերը, որոնց վրա էլ խարսխված է ֆրանսահայ նկարչուհու արվեստը», - եզրակացնում է հեղինակը⁵⁶: Կարբոնել-Բաբայանի արվեստում ազգային ինքնատիպության խնդիրը նույնպես գտնվում է արվեստաբանի հետազոտության ուղեծրում: «Հավանաբար ճշմարիտն այն է, որ Ա.Բաբայանի ստեղծագործությունը պետք է դիտարկել իբրև XX դարում հայ-ֆրանսիական գեղարվեստական բազմաբնույթ և արդեն բավականին հարուստ պատմություն ունեցող կապերի և առնչությունների հաստատուն օղակ», - գրում է Ա.Աղասյանը⁵⁷:

2003-ին «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովին ներկայացրած զեկուցման մեջ Ա.Աղասյանն առավել հանգամանորեն և ամբողջական, խիստ հետաքրքիր և դիպուկ մասնագիտական վերլուծությամբ, փաստական հարուստ նյութի ընդգրկումով լուսաբանում է անվանի նկարիչ Սարգիս Խաչատուրյանի ստեղծագործական կյանքը⁵⁸: Քննվում են 1915-1921-ին նկարչի վրձնած հայոց ցեղասպանության ու տարագրության, հայ ժողովրդական տոների ու ծեսերի, հայաստանյան բնանկարների՝ ազգային արտահայտիչ դիմագիծը կրող աշխատանքները, ներկայացվում և արժևորվում են 1930-ականների պարսկական արքայական պալատների և առանձնատների որմնանկարների և հնդկական տաճարների, քարայրների ու աշխարհիկ որմնանկարների կրկնօրինակումները, մեջբերվում են ժամանակի հայ և օտար

⁵⁶ Նույն տեղում, էջ 106:

⁵⁷ Նույն տեղում, էջ 113:

⁵⁸ **Աղասյան Ա.**, Սարգիս Խաչատուրյանի արվեստը Արևելք-Արևմուտք խաչմերուկում // Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները: Միջազգային համաժողով: Ձեկուցումների դրույթներ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, էջ 165-166: **Աղասյան Ա.**, Սարգիս Խաչատուրյանի արվեստը Արևելք-Արևմուտք խաչմերուկում // Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Միջազգային համաժողով: Ձեկուցումների ժողովածու, Երևան, «Տիգրան Մեծ», 2004, էջ 407-414:

արվեստագետների ու գեղարվեստական քննադատների՝ Խաչատուրյանի արվեստին առնչվող տեսակետները, հիշատակվում են նրա մասնակցությամբ ցուցահանդեսները, տրվում են նոր փաստեր նրա կենսագրությունից և այլն:

Ֆրանսիայում իր կյանքի մեծ մասն ապրած XX դարի հայ խոշորագույն քանդակագործ Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյակին նվիրված զեկուցման մեջ Աղասյանը ներկայացնում է Գյուրջյանի ամփոփ ստեղծագործական դիմանկարը⁵⁹: Լուսաբանվում են նրա կյանքի ուղին, ուսումնառության տարիները, (իտալացի արվեստագետ Պաոլո Տրուբեցկոյի մոսկովյան աշխատանոցը, Ռոդոլֆ Ժուլիանի փարիզյան գեղարվեստական ակադեմիան ևն), քննվում անհատական ոճի բյուրեղացման, գեղագիտական աշխարհայացքի ձևավորման ընթացքը: Դիտարկվում են քանդակագործի հայկական թեմաներով աշխատանքները, ներկայացվում են նաև նրա առավել տիպական ու աչքի ընկնող աշխատանքները (դիմաքանդակները, դիցաբանական և կրոնական թեմաներով կատարված հորինվածքները, անիմալիստական քանդակները), բացահայտվում են դրանց ոճական, կոմպոզիցիոն, գաղափարաբովանդակային կարգը, նյութատեխնիկական առանձնահատկությունները: Հեղինակը գտնում է Գյուրջյանի արվեստի ակունքները, որոնք մի կողմից սնվում են հին եգիպտական, եվրոպական, իսկ մյուս կողմից՝ ազգային միջնադարյան արվեստից: «Հ.Գյուրջյանն ազատորեն է կիրառում ինչպես դասական, այնպես էլ հին Եգիպտոսի, արխաիկ Հունաստանի, հայկական միջնադարի, 1920-ական թվական-

⁵⁹ **Աղասյան Ա.**, Շուշեցի մեծ քանդակագործը (Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյակի առթիվ) // Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան: Միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006, էջ 156-158: **Աղասյան Ա.**, Շուշեցի մեծ քանդակագործը (Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյակի առթիվ) // Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան: Միջազգային գիտաժողովի զեկուցումներ: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007, էջ 254-266: Տե՛ս նաև **Աղասյան Ա.**, Նյութին շունչ տվող արձանագործը (Հակոբ Գյուրջյան) // «Գիտության աշխարհում», Երևան, 2006, N 4, էջ 2-7:

ներին տարածում գտած «զարդային ոճի» («ար դեկո») գեղարվեստական սկզբունքները», - գրում է արվեստաբանը⁶⁰:

Հայաստան-Ֆրանսիա. XX դարի գեղարվեստական կապերին, փոխառնչություններին էր նվիրված Աղասյանի՝ 1991-ին «Սովետական արվեստում» տպագրված ընդհանրական հոդվածը⁶¹: XIX դարի վերջից հայ երիտասարդներին մասնագիտական կրթություն ստանալու համար անչափ հրապուրիչ Եվրոպայի արտիստական մայրաքաղաքը՝ Փարիզը, 1915-ից հետո դարձավ հայաբնակ մեծ գաղութ, «սփյուռքի՝ հայ կերպարվեստագետների կազմով առավել բազմամարդ և իր գեղարվեստական արդյունքներով առավել նշանակալի օղակ»⁶²: Հեղինակը խնամքով վեր է հանում Ֆրանսիայում կրթություն ստացած և գործած հայ արվեստագետների անունները, հիշատակում է Սփյուռքի հայ նկարիչներին միավորող «Անի», «Հայ ազատ նկարիչների միություն», «Թորոս Ռոսլին» ստեղծագործական միությունները: 1920-ականներին հայ-ֆրանսիական գեղարվեստական կապերը դեռ սերտ էին, քանի որ «խորհրդային երկրում դեռևս խրախուսվում էին արտասահմանի հետ ստեղծագործական կապերը»⁶³: Այդ ժամանակ են ԽՍՀՄ-ից Փարիզ ժամանել և բուռն գործունեություն ծավալել հոդվածում լուսաբանված Հակոբ Գյուրջյանը, Երվանդ Քոչարը, Գեորգի Յակուլովը: Աղասյանը ներկայացնում է նաև 1926-1928 թթ. Փարիզում ապրած Մարտիրոս Սարյանի փարիզյան շրջանի ցուցահանդեսներին առնչվող փաստեր: 1930-1950-ականների ընթացքում այսպես կոչված «երկաթակուռ վարագույրի» պայմաններում հայ-ֆրանսիական հարաբերությունները գրեթե մարեցին, սակայն Ֆրան-

⁶⁰ **Աղասյան Ա.**, Շուշեցի մեծ քանդակագործը (Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյակի առթիվ), էջ 263:

⁶¹ **Աղասյան Ա.**, Հայաստան-Ֆրանսիա. գեղարվեստական կապերը XX դարում // «Սովետական արվեստ», Երևան, 1991, հ.4, էջ 17-22: **Агасян А.**, Армения-Франция: о художественных связях в XX веке // Литературная Армения, Ереван, 1991, N8, с. 109-112.

⁶² **Աղասյան Ա.**, Հայաստան-Ֆրանսիա. գեղարվեստական կապերը XX դարում, էջ 17-18:

⁶³ Նույն տեղում, էջ 18:

սիայում դեռ շարունակում էին ստեղծագործել և ցուցադրվել հայ արվեստագետները, որոնց մեջ արվեստաբանը մատնանշում է Ժանսեմին, Լ.Թութունջյանին, Գառզուին, Զարեհ Մութաֆյանին և այլոց: Հետաքրքրությամբ են ընթերցվում խրուշչովյան ձնհալի պայմաններում աշխուժացած հայ-ֆրանսիական գեղարվեստական կապերի դրսևորումների բազմաթիվ օրինակները, Երևանում և Փարիզում կազմակերպվող ցուցահանդեսները: 1980-ականներին կապերը շարունակվել են, և հեղինակը երախտագիտությամբ հիշատակում է Arts S.O.S Arménie-ի բարեգործական նպաստը հոգուտ երկրաշարժից տուժած հայ երեխաների և հույս հայտնում, որ «ապագայում Հայաստանի և Ֆրանսիայի գեղարվեստական կապերն էլ ավելի կընդլայնվեն և կխորանան»⁶⁴: Առհասարակ հոգվածը հարուստ է անուններով և փաստերով, մշակութային հարուստ իրողություններով, որոնք վկայում են հայ-ֆրանսիական սերտ, արդյունավետ համագործակցության մասին:

Սփյուռքահայ արվեստ հասկացությունն ունի շատ եզրեր, «ստորջրյա քարեր» և մինչ օրս ըստ արժանվույն բնութագրված և հասկացված չէ: Սփյուռքի արվեստ հասկացության և արվեստում ազգային ինքնության խնդիրների շուրջ իր քննարկումն է առաջարկել Աղասյանը դեռևս 1995-ին, երբ տասնամյակներ տևած խորհրդային պաշտոնական ուղղագիծ մոտեցումը վերանայելու անհրաժեշտություն առաջացավ⁶⁵: Հոգվածում առաջ են քաշվում սփյուռքահայ արվեստը ոչ թե որպես մեկուսի երևույթ, այլ XX դարի ազգային արվեստի ընդհանուր համատեքստում դիտարկելու ուղղությամբ, քանի որ ազգային արվեստը, ըստ հեղինակի, որոշվում է ոչ թե աշխարհագրական սկզբունքով, այլ միասնական մշակութային հիշողության և հոգևոր փորձի հանրագումարի հիման վրա: Քննվում է համաշխարհային, մասնավորապես ռուսական արվեստագիտության փորձը: Հաջորդը «օրակարգում» գեղարվեստական չափանիշների, ուղենիշների

⁶⁴ Նույն տեղում, էջ 22:

⁶⁵ **Агасян А.**, О понятии “искусство Спюрка” и проблеме национальной идентичности в искусстве // «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1995, № 1, էջ 102–109:

մշակման հարցն էր, որը կոյուրացնի արտասահմանում ստեղծված հայ արվեստը ազգային գեղարվեստական մշակույթի մեջ ներգրավելու խնդիրը: Առաջարկվում է արտաքին ֆենոմենալ հատկանիշների՝ գաղափարաթեմատիկ բովանդակության և ձևաոճական արտահայտչալեզվի հետ մեկտեղ հաշվի առնել և առաջնային համարել հստակ ազգային ինքնագիտակցության առկայությունը: Նման մոտեցումը, սակայն, հեղինակի համոզմամբ, չի հավակնում համապարփակ լինելուն և յուրաքանչյուր դեպքում պահանջում է դիֆերենցված մոտեցում:

Երևելի է հայ ականավոր արվեստաբան Ա.Աղասյանի ավանդը սփյուռքահայ արվեստի ուսումնասիրության, հայագիտության զարգացման գործում: Իր գիտական հետազոտությունների հետ մեկտեղ Ա.Աղասյանը նպաստել է արտասահմանում ապրած և գործած տաղանդաշատ հայ արվեստագետների ստեղծագործության ուսումնասիրությանը նաև իր գիտամանկավարժական և գիտակազմակերպչական գործունեությամբ: Մասնավորապես նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական տասներեք ատենախոսություն, որոնց մի մասը նվիրված է սփյուռքահայ արվեստին՝ *Մովսես Հերկեյյան*. «Ամերիկահայ կերպարվեստ» (2001), *Վահե Գասպարյան*. «Ժանսեմի գրաֆիկան» (2002), *Սաթենիկ Մելիքյան*. «Ալեքսանդր Սարուխանի արվեստը» (2006), *Մարգարիտա Քամայյան*. «Ժան Գառզուի բեմանկարչությունը» (2013), *Շուշանիկ Վարդանյան*. «Արտո Չաքմաքչյանի արվեստը» (2015): Ա.Աղասյանի գիտական խմբագրությամբ 2004-ին լույս է տեսել արվեստաբան Արա Հակոբյանի՝ Վարդան Մախոխյանի արվեստը հանգամանորեն ներկայացնող մենագրությունը⁶⁶: 2009-ի մարտի 1-ին՝ Ա. Աղասյանի տնօրինության օրոք, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում վերաբացվել է սփյուռքահայ արվեստի բաժինը (բաժնի վարիչ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյան (2009-2016), 2013-ից՝ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժին), որի աշխատակիցների գերակա խնդիրներից

⁶⁶ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Ծովանկարիչ Վարդան Մախոխյան, Երևան, «Զանգակ-97», 2004, 131 էջ նկ.:

է սփյուռքահայ արվեստի ուսումնասիրությունը⁶⁷, և որի ղեկավարն է 2016թ. փետրվարի 1-ից Արարատ Աղասյանը:

2013-ի հոկտեմբերի 1-ին ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից Աղասյանն արժանացավ շնորհակալագրի «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, հայապահպանության բնագավառում ներդրած ավանդի, նախարարության հետ ակտիվ համագործակցության և իրականացված ծրագրերին ցուցաբերած համակողմանի աջակցության համար»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական գծով տնօրենի տեղակալ, երաժշտության բաժնի վարիչ Աննա Ասատրյանի նախաձեռնությամբ իրականացված այս գեղեցիկ կոլեկտիվ ժողովածուն շատ ողջունելի է, և ես երախտապարտ եմ ինձ համար չափազանց պատասխանատու և միևնույն ժամանակ շատ ոգևորող այս հոդվածն ինձ վստահելու համար:

Հավարտ շարադրանքիս՝ կցանկանայի ևս մեկ անգամ շնորհավորել Արարատ Աղասյանին և մաղթել նրան արևշատություն, առողջություն, գիտաստեղծագործական, գիտակազմակերպչական, գիտամանկավարժական՝ երկար տարիների ուրախություն պարգևող կյանք:

⁶⁷ Տե՛ս **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 178, 179, 239, 240:

**ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ.
ԱՐՎԵՍՏՆ ԻՆՉՊԵՍ ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Արվեստաբանը ոչ միայն մասնագիտություն է, այլև կոչում: Լինել արվեստում և չապրել նրանով պարզապես անհնար է: Արարատ Աղասյանն այն արվեստաբաններից է, ով ունի աշխարհընկալման ու մտածելակերպի իր յուրահատուկ ոճը: Նրա ձեռագիրը տարբերվում է դիպուկ, խորքային վերլուծությամբ: Գիտական նախասիրությունների հիմնական ոլորտն ընտրելով XIX-XX դդ. հայ արվեստի ու գեղարվեստական մտքի պատմությունը՝ նա ոչ միայն խորապես ուսումնասիրել ու վերլուծել է նշանավոր արվեստագետների կյանքն ու ստեղծագործությունը, այլև իր գիտական աշխատություններով՝ մենագրություններ, հոդվածներ, հիմնադրույթներ և այլն, լրացրել արվեստի գրադարանի այն բացառիկ նմուշները, որոնք կարող են իբրև դասագիրք ծառայել թե՛ արվեստասերների, թե՛ մասնագետների համար: Պետք է նշել նաև, որ Արարատ Աղասյանն ուսումնասիրել է և երևան բերել նույն ժամանակաշրջանի արևելահայ, արևմտահայ և սփյուռքահայ տասնյակ վարպետների անուններ ու ստեղծագործություններ, առանց որոնց հայ արվեստն ամբողջական չէր լինի: Նրա հետազոտությունները դուրս են գալիս հայ արվեստի շրջանակներից՝ ընդգրկելով հարևան երկրների, ռուսական ու նաև եվրոպական ստեղծագործություններ:

Իբրև իրական արվեստաբան՝ նա ունի բացառիկ գեղարվեստական ճաշակ, կերպարային մտածելակերպ, նուրբ զգացողություն, բացարձակ ուշադիր, անկողմնակալ և օբյեկտիվ վերլուծական միտք: Ա.Աղասյանի ուսումնասիրությունները ոչ միայն բացահայտում են արվեստագետին, այլև ընթերցողին ներքաշում իր աշխատության, մտքերի մեջ՝ նրան ևս դարձնելով հետազոտող: Կյանքը, մասնագիտությունը ներշնչել են քայլել ժամանակին համընթաց՝ իր մեջ կրելով անցյալի, պատմության մշակութային ժառանգությունը: Յավոք, այսօր մեզանում շատ քիչ են այլազգի կամ մեր հայրենակից արվեստագետների կյան-

քին ու ստեղծագործությանը վերաբերող հայ հեղինակների հա-
յալեզու տպագրությունները: Ա.Աղասյանի աշխատություններն
առանձնանում են արվեստի գիտական լեզվով, դիպուկ, հստակ
ձևակերպումներով, լեզվի բացառիկ իմացությամբ: Նա անդրա-
դարձել է վերոնշյալ ժամանակաշրջանի ինչպես հայտնի ստեղ-
ծագործողների, այնպես էլ անհատների, որոնց արվեստն ինչ-
ինչ պատճառներով այնքան էլ լուսաբանված չի եղել: Նրա
ուսումնասիրությունների արդյունքում հրատարակվել են «Մար-
տիրոս Սարյան. կյանքի և ստեղծագործության տարեգրություն»,
«Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում»,
«Հայ արվեստի պատմություն», «Քաջագի մշտավառ կանթեղը»,
«Երվանդ Քոչար», «Վարդգես Սուրենյանց», «Երվանդ Քոչարի
տարածության մեջ», «Էդուարդ Իսաբեկյան – 100», "Мартирос
Сарьян. Раннее творчество", "Ерванд Кочар", "Два цвета радуги
– двух судеб отражение..." Произведения армянской и русской
живописи из музеев Армении.", "Символизм и творчество Мар-
тироса Сарьяна" և բազմաթիվ այլ, նաև օտարալեզու աշխա-
տություններ: Ա.Աղասյանի մոտ գեղարվեստական կերպարների
բացահայտումների, նրանց մեկնաբանության հիմքում ընկած է
ժամանակաշրջանի, պատմական իրադրության ու հեղինակի
հոգեվիճակի վերլուծությունը: «Երվանդ Քոչարի տարածության
մեջ» մենագրությունում, վերլուծելով Քոչարի "De profundis..."
(«Ի խորոց սրտի...», 1919) կտավը, Ա.Աղասյանը գրում է. «Քո-
չարը շարունակում էր ստեղծագործական ակտիվ որոնումները,
մի կողմից հենվելով անտիկ արվեստի և Վերածննդի դասական
ավանդույթների վրա, իսկ մյուս կողմից՝ հաշվի առնելով Սե-
զանի ու սեզանիստների, հատկապես՝ կուբիստների նվաճում-
ները: Դասական ու նորարարական այս երկու միտումները հաշ-
տեցնելու փորձ է արվել Քոչարի վաղ շրջանի առավել հաջող ու
տպավորիչ գործերից մեկում՝ 1919-ին վրձնած "De profundis..."
(«Ի խորոց սրտի...») կոչվող մեծադիր յուղանկարում: Թեև այն
կատարված է բնականից, սակայն սա ոչ դիմանկար է, ոչ էլ
անատոմիական ընթացիկ վարժանք, այլ գաղափարապես լիա-
բեռնված այլաբանական պատկեր: Հոգեկան անտանելի ծան-
րության, անգութ լծի տակ ճկված պատանու մերկ մարմինը,

կարծես, անշարժացել է, իսկ նրա կիսախուփ կոպերով, փակ շրթունքներով ու սուր այտուսկներով նիհարուն դեմքը թվում է անշունչ, անկենդան, մեռյալ»¹:

Արվեստի աշխարհը, բազմաթիվ գլուխգործոցներն օգնում են բացահայտելու, ճանաչելու կյանքը: Արարատ Աղասյան արվեստաբանն իր ակադեմիական գիտելիքների, արվեստն ամենայն խորքայնությամբ ընկալելու հատկության շնորհիվ նպաստում է այլոց ուսումնասիրել, ընկալել, վերլուծել արվեստը, նրանց վարակել վերջինիս անմնացորդ նվիրվելու ցանկությամբ: «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» աշխատության մեջ, անդրադառնալով գծանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի յուրահատուկ ոճին, նրա՝ բնությունն առանց մարդու ներկայության շնչավորելու փաստին, նա դիպուկ արձանագրել է. «...Նկարիչը պատկերված բույսերն ու առարկաներն օժտում է մարդկային բնավորությամբ կամ տրամադրությամբ, դրանց միջոցով վկայում, գրեթե տեսանելի դարձնում մարդկանց «բացակա ներկայությունը»: Եվ այդ առումով, ինչպես և գրաֆիկական մանրանուրբ կատարմամբ, գծանկարման բարձր կուլտուրայով Խաչատրյանի նատյուրմորտները հիշեցնում են ֆլամանդական ու հոլանդական «հին վարպետների» նմանօրինակ գործերը»²:

Ա.Աղասյանի յուրաքանչյուր աշխատություն, անկախ արվեստագետի ազգությունից, ստեղծագործական կյանքի վայրիվերումներից, ոճից, հագեցած է բազմակողմ տեղեկատվությամբ, նա վերլուծում է արվեստի գործը ոչ միայն իբրև գեղարվեստական արժեք, ներկայացնում մասնագետի կարծիքը, այլև ընթերցողին է մատուցում հեղինակի մտածելակերպը, նրա ապրումների, հույզերի, դժվարությունների արդյունքում ծնված աշխատանքը, ներթափանցում վերջինի ներաշխարհը: Հետաքրքրական է, որ Ա.Աղասյանը փնտրում է յուրաքանչյուր ստեղծագործողի լավագույնս բնութագրող վերլուծությունը: Անդրա-

¹ **Աղասյան Ա.**, Երվանդ Քոչարի տարածության մեջ, Երևան, «Ոսկան Երևանցի», 2013, էջ 6-7:

² **Աղասյան Ա.** Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, էջ 187:

դառնալով նկարիչ Ռուբեն Ադալյանի «Կանչ» (1963) գծանկարին՝ Ադալյանը նշում է. «Անկյունագծային սրընթաց ռիթմով կառուցված, գրեթե պլակատային զուսպ ու կուռ ձևեր, կոմպոզիցիոն հստակ կազմություն ունեցող այս պատկերի մեջ մեզ ներկայացող՝ դունչը վեր ցցած և դեպի երկինք հառաչող-կանչող, կարծես թե ինքը հառաչանք դարձած ձիու կերպարը մեկնաբանված է փոխաբերաբար՝ որպես մարդկային հոգու խորքերից հուսահատորեն արձակված մի ճիչ, անպատասխան կոչ, «ձայն բարբառո հանապատի»³: Այդ կերպ Ա.Ադալյանը ոչ միայն չի սահմանափակվում գեղարվեստական ստեղծագործության արժեքներն ու թերությունները, նվաճումներն ու բացթողումները ներկայացնելով, այլև վերլուծում է հեղինակի՝ տվյալ ժամանակաշրջանի, աշխատանքի մեջ ընդգրկված ժամանակահատվածի և տիրող իրավիճակի հանդեպ վերաբերմունքը: Այսպես, անդրադառնալով Երվանդ Քոչարի «Ընտանիք-սերունդներ» (1925) կտավին՝ նա նշում է, որ Քոչարի «Ընտանիք-սերունդներ» կտավը բիբլիական որոշ զուգորդումների առիթ է տալիս, և նկարի համար իբրև մեկնակետ օգտագործվել են Ջրհեղեղի առասպելը, բարեպաշտ Նոյի պատմությունը: Արվեստաբանը կարծում է, որ Քոչարն իր կտավում պատահաբար չի կրկնել Միքստոսյան մատուռի առաստաղին Միքելանջելոյի պատկերած նահապետի դիրքն ու կեցվածքը՝ նշելով, թե որքան էլ Քոչարի կերտած տեսարանը խաղաղ է թվում, այդուհանդերձ այդտեղ անհանգստություն, տագնապ կա. «Դա արտահայտված է գլխահակ պապի ֆիգուրում, նրա մտազբաղ դեմքի ծալքերում...», - գրում է Ա.Ադալյանը⁴:

Ինչպես առանձնահատուկ է Ա.Ադալյանի վերաբերմունքը յուրաքանչյուր արվեստագետի, վերջինի ստեղծագործության, այնպես էլ՝ նրա նվիրումը մանկավարժական աշխատանքին, ուսանողներից յուրաքանչյուրին: Արվեստի պատմության, գեղեցիկի դասավանդումը նա փոխանցում է երիտասարդներին ու պահանջում նրանցից արվեստի խորապես ուսումնասիրում ու

³ Նույն տեղում, էջ 148:

⁴ **Ադալյան Ա.**, Երվանդ Քոչարի տարածության մեջ, 2013, էջ 13:

նվիրում: Ա.Աղասյանը ղեկավարել է նաև բազմաթիվ գիտական աշխատություններ, այդ թվում իմ՝ «Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստը» ատենախոսությունը: Բացահայտել է ինձ անծանոթ՝ արվեստաբանական նրբին մոտեցումներ, ուղղորդել և փոխանցել իր փորձն ու գիտելիքները: Նա կրթել, դաստիարակել է բազմաթիվ երիտասարդների ու ապագա արվեստաբանների:

Առհասարակ յուրաքանչյուր անհատի «մատնում» է իր աշխատանքը: Արված ամեն մի գործում ներկա են հեղինակը, նրա մտածելակերպը, մարդկային տեսակը, բնավորությունը՝ լինի դա գեղարվեստական ստեղծագործություն, հասարակական աշխատանք կամ որևէ այլ բան: Այդպես էլ Արարատ Աղասյանի յուրաքանչյուր վերլուծություն բնութագրում է իրեն՝ արվեստի պրոֆեսիոնալ գիտակ ու գնահատող, արվեստն իր մեջ կրող ու կյանքին այդ աչքերով նայող արվեստաբան, ում ներկա և ստեղծվելիք վերլուծություններն ու գիտական աշխատանքներն անկասկած հանրագիտարան են դառնալու արվեստը ճանաչելու և գիտելիքների պաշարն ավելացնելու համար:

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԸ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի և իմ առաջին հանդիպումը տեղի է ունեցել դեռևս 2012 թվականի նոյեմբերի 8-ին: Ես՝ գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտս, թեկնածուական որակավորման քննություն հանձնեցի մասնագիտությունից: Հանձնաժողովի նախագահին Ա.Աղասյանն էր: Հաջորդ հանդիպումս 2013 թվականին էր՝ թեկնածուական ատենախոսության պաշտպանությանս ընդառաջ: Ծանոթանալով աշխատանքիս՝ նա տվեց բազմաթիվ մասնագիտական խորհուրդներ, որոնք միանշանակ օգնեցին ատենախոսական աշխատությանս վերջնական ձևավորմանը, ինչպես նաև լինելով աշխատանքիս ընդդիմախոսը՝ տեղին և դիպուկ կարծիքների հիման վրա վերջնական տեսքի բերեցի և շտկեցի այն, որն էլ 2016թ. ներկայացրի մենագրության¹⁴ տեսքով:

Հանդիպման առաջին իսկ օրերից հասկացա, որ Արարատ Աղասյանը տպավորիչ անհատականություն է և մասնագիտական փայլուն կարողություններով օժտված անձնավորություն: Լինելով հայ կերպարվեստի լավագույն մասնագետներից մեկը՝ նա վերլուծում և անհրաժեշտ դիտողությունների է ենթարկում ոչ միայն արվեստի պատմության, այլ նաև դիզայնի, ճարտարապետության և դեկորատիվ արվեստի մաս կազմող աշխատանքները, ինչը նույնպես ցույց է տալիս Արարատ Աղասյանի մասնագիտական փայլուն կարողություններն ու արվեստագիտությանը նվիրված նրա վերաբերմունքը: Նա նվիրումով է մոտենում ար-

¹⁴ «Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում» վերնագրով մենագրությունը երաշխավորվել է հրատարակման ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, 2016 թվականին:

վեստագիտությանը նվիրված ցանկացած աշխատանք ուսումնասիրելուն կամ կարծիք կազմելուն:

Մեր հաջորդ համագործակցությունը շատ չուշացավ. Արարատ Աղասյանի առաջարկով ես ձևավորեցի և էջադրեցի նրա թարգմանությամբ ռուսական բանաստեղծությունների ժողովածուն՝ վերնագրված «Ռուսական պոեզիայի գանձարանից»: Հետևաբար աշխատանքիս զուգահեռ չէի կարող չընթերցել նրա թարգմանությունները, ուստի արվեստի պատմությանը նվիրված նրա բազմաթիվ գիտական աշխատանքներից զատ կփորձեմ ներկայացնել այս փոքրիկ, սակայն հույզերով և գույներով հարուստ ռուսական բանաստեղծությունների թարգմանությունների ժողովածուն:

Ժողովածուն ընդգրկում է XIX-XX դդ. ռուսական պոեզիայի դասական օրինակներն ու դրանց հայերեն թարգմանությունները:

Բանաստեղծություններից շատերը հայերեն են թարգմանվել և ընթերցողին ներկայացվել առաջին անգամ:

Ռուսական արվեստի, ինչպես նաև գրականության նկատմամբ Արարատ Աղասյանի վերաբերմունքն առանձնահատուկ է, պատճառը թերևս նրա՝ ՌԴ-ում ուսանելու տարիներն են: Անհրաժեշտ է փաստել, որ Արարատ Աղասյանը ոչ միայն հմտորեն թարգմանել է այս բանաստեղծությունները, այլև ընտրել բանաստեղծությունների մի գեղեցիկ շարք. դրանք նրա մասնագիտական փայլուն կարողությունների, ռուսաց լեզվի և արվեստի նկատմամբ յուրահատուկ մոտեցման արդյունք են: Աղասյանը կարծես ծաղկաքաղ է արել և ներկայացրել ռուսական պոեզիայի լավագույն օրինակները:

Ճիշտ և գունեղ թարգմանության համար անհրաժեշտ է ոչ միայն լեզվի իմացությունը, այլև արվեստի, պոեզիայի, գույնի ու տրամադրության ընկալումը, որն արտահայտված է հեղինակի թարգմանություններում:

Հայերեն թարգմանությունները թե՛ իմաստով և թե՛ բառախաղերով գրեթե չեն տարբերվում բնօրինակից, որին հեղինակը հասել է՝ ներդնելով թե՛ մասնագիտական կարողությունները և թե՛ արվեստին ու պոեզիային նվիրվածությունը:

Նրա կողմից ընտրված բանաստեղծությունների հեղինակները նույնպես պատահական չեն՝ Վասիլի Ժուկովսկի, Ալեքսանդր Պուշկին, Ֆեոդոր Տյուտչև, Միխայիլ Լերմոնտով, Աֆանասի Ֆետ, Իվան Բունին, Վալերի Բրյուսով, Ալեքսանդր Բլոկ, Բորիս Պաստերնակ, Օսիպ Մանդելշտամ, Վլադիմիր Մայակովսկի, Սերգեյ Եսենին, Վլադիմիր Նաբոկով, Արսենի Տարկովսկի և Կոնստանտին Սիմոնով, այսինքն՝ ռուսական պոեզիայի գրեթե ամբողջ գանձարանը, որը հենց այսպես էլ վերնագրել է հեղինակը՝ «Ռուսական պոեզիայի գանձարանից»։ Հատկանշական է, որ բանաստեղծություններից շատերն ընդգրկված են Հայաստանի դպրոցական և բուհական ուսումնական ծրագրերում, ուստի դրանցից շատերը հայտնի են հայ հասարակությանը, դրանք սիրված են, ընդունված, սակայն չունենին հայերեն թարգմանված տարբերակները։

Շարունակելով բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Գաբրիելյանի այն միտքը, որ «...բանաստեղծի առաջին նպատակը ընթերցողի մտերմությունը նվաճելն է, սրտամոտ խոսքը, իր զգայությունները, խոհն ու խորհուրդը նրան հասցնելը, իր սիրո խոստովանությունը նրան ասելը, շնչալը, անգամ անբառ հուշելը, իր հուզումը, զայրույթը, տրտունջը նրան փոխանցելը, բայց ո՛չ որպես խրատ, պահանջ, թելադրանք, այլ այնպես, որ նա հասկանա, ընկալի կամ պարզապես զգա բանաստեղծի հոգեկան ապրումները»¹⁵, կարող ենք ավելացնել, որ այդ նույն բանաստեղծի մտքերն այլ լեզվով թարգմանելն ու ճիշտ տեղ հասցնելն արդեն պրոֆեսիոնալ և ընկալելի թարգմանությունն է, որն էլ փայլուն կատարել է Արարատ Աղայանը։

Թարգմանություններից յուրաքանչյուր քառյակ մի ահռելի մտքի աշխատանք է, որտեղ հեղինակն ընթերցողին է փոխանցում ոչ միայն բանաստեղծների ասելիքը, այլև հայ ընթերցողին հանձնում հայերեն երգեցիկ թարգմանությունները՝ բառերի

¹⁵ **Վազգեն Գաբրիելյան**, Ի՞նչ է բանաստեղծությունը, «Գրական թերթ», էլեկտրոնային տարբերակ, 10.11.2014, <http://www.grakan-tert.am/> Ի՞նչ-է-բանաստեղծությունը-մտորումներ/։

փայլուն շարվածքով, համագործակցամբ ու ներդաշնակությամբ: Թարգմանություններն այնքան լիարժեք, երգեցիկ և զորեղ են, որ ցանկալի կլինեն իրականացնել, օրինակ, Պուշկինի հայտնի «Я помню чудное мгновение...» («Ես հիշում եմ այն պահը մոգական...») և «Я вас любил: любовь еще, быть может» («Ես ձեզ սիրում էի... Միգուցե այդ սերը...») բանաստեղծությունների հիման վրա գրված Գլինկայի ռոմանսների կատարումները՝ Ա.Աղասյանի թարգմանություններով:

Արարատ Աղասյանի թարգմանությունների այս ժողովածուն ահռելի աշխատանք և մեծ ներդրում է հայ գրականության մեջ:

Եզրափակելով միտքս՝ կցանկանայի մեջբերել «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի պատասխանատու քարտուղար Գայանե Հարությունյանի՝ Ա.Աղասյանի թարգմանությունների մասին հետևյալ միտքը. «...переводы А. Агасяна, приобщая армянского читателя к русской поэзии как к духовному ви́дению эпохи, по праву должны занять достойную нишу в нашем культурном пространстве»¹⁶.

¹⁶ **Арутюнян Гаянэ.** Из сокровищницы русской поэзии в переводах Арабата Агасяна // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2013, հ. 3, էջ 325:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, Աննա ԱՍԱՏՐՅԱՆ – Արարատ Աղասյան. վաստակաշատ արվեստաբանն ու գիտության հմուտ կազմակերպիչը	7
Արարատ Աղասյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը	31
Արարատ Աղասյանի տպագիր աշխատությունները ...	39
<i>Գրքեր և պարկերագրքեր</i>	39
<i>Գրքույկներ, սեղմագրեր, կապալոգներ, բուկլետներ</i>	40
<i>Հոդվածներ ամսագրերում, ժողովածուներում և հանրագիտարաններում</i>	41
<i>Գիտական զեկուցումներ</i>	50
<i>Հոդվածներ թերթերում</i>	54
<i>Հարցազրույցներ</i>	55
<i>Թարգմանություններ</i>	55
Արարատ Աղասյանի խմբագրությամբ հրատարակված աշխատություններ	57
Արարատ Աղասյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանված ատենախոսություններ	62
Գրականություն Արարատ Աղասյանի և նրա աշխատությունների մասին	63

ԲԱԺԻՆ II

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԸ՝ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՂ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ – Արտասովոր անակնկալ՝ հոբելյանի առիթով	70
Սաթենիկ ՄԵԼԻՔՅԱՆ – Վարդգես Սուրենյանցի արվեստը Արարատ Աղասյանի ուսումնասիրություններում	85
Մերի ԿԻՐԱԿՈՍՅԱՆ – Արարատ Աղասյանի վաստակը արևմտահայ կերպարվեստի ուսումնասիրության գործում	94
Մանե ՄԿՐՏՉՅԱՆ – Մարտիրոս Սարյանի վաղ շրջանի արվեստն Արարատ Աղասյանի ուսումնասիրություններում	108
Արթուր ԱՎԱԳՅԱՆ – Արարատ Աղասյանը՝ խորհրդահայ կերպարվեստի ուսումնասիրող	121
Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ – Արարատ Աղասյանը՝ սփյուռքահայ կերպարվեստի ուսումնասիրող	133
Հռիփսիմե ՎԱՐԴԱՆՅԱՆ – Արարատ Աղասյան. Արվեստն ինչպես իմացաբանություն	165
Մարտին ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – Արարատ Աղասյանը՝ ռուսական պոեզիայի թարգմանիչ	170

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ – 60

АРАРАТ АГАСЯН – 60

ARARAT AGHASYAN - 60

Հրատ. խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի
Կազմի ձևավորումը՝ արվեստագիտության թեկնածու
Մարտին Հարությունյանի

Հրատ. պատվեր N 720
Ստորագրված է տպագրության՝ 14.09.2016
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, թուղթ N 1
Տպագրական 11 մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: